

ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Գ. ԿԱՆԵՍՏՐԻՆԻ

ՄԱԶՐԱՆԱԿԱՆ ԽԱՆՈԲՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.

ԻՆՉ Է ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Մարդաբանութիւնը մարդու բնական պատմութիւնն է կամ մարդկալին ցեղի կենդանաբանական նկարագրութիւնը, հետևապէս և՝ կազմում է բնական պատմութիւնների մասը.

Բնապատմաբանը մի որև է օրգանական խումբ ուսումնասիրելիս նախ ամենայն կողմից հետազօտում է կարելոյն չափ շատ անհատներ, յետով այս անհատների ցոյց տուած տարբերութիւնների և նմանութիւնների հիման վըրալ, նրանց տեսակների է բաժանում, որոշում է այս տեսակների ընդհանուր որոշիչ լատկանիշները և ապա անցնում տմբողջ խմբի որոշիչ և ընդհանուր լատկութիւններին։ Հետևապէս և՝ նրա մեթոսը նախ վերլուծական (անտլիաբական) և ապա համագրական (սինտետիկական) է։

Այս կերպ է վարւում և մարդաբանն երկանուանիների խմբի վերաբերութեամբ, որին պատկանում է միմիայն մարդկալին ցեղը. բայց այս խմբի նկարագրութիւնն իւր լատուկ պահանջներն, իւր օժանդակ միջոցները և իւր գժուարութիւններն ունի։

Կենդանիների, մանաւանդ ստորինների մէջ, մտաւոր

յատկութիւնները մի առանձին նշանակութիւն չունին, այն ինչ մարդկանց մէջ այդ առանձնալիատկութիւնները, օրինակ, լեզուն, ուշագիր ուսումնասիրութիւն են պահանջում, որովհետև դրանք կարող են նպաստել այդ խումբը իւր ցեղակեցներից տարբերելու և մինչև անգամ ամբողջ խումբը դասակարգելու հիմունք ծառալել: Մէկ էլ, կենդանաբանութիւնն ուսումնասիրում է կենդանիների բարքը, սովորութիւնները և բնագգումները. մարդկանց մէջ այս սովորութիւններն այնքան բազմաթիւ և տինքան բազմակողմանի են, որ մարդաբանին բաւական նիւթ են մատակարարում: Բացի դրանից, հիւանդութիւնները, անկանոնութիւնները և ալլանդակութիւնները նոյնպէս կազմում են մարդաբանութեան մի մասը, երբ համեմատական տեսակէտով են նկատում, և կամ երբ լուսաբանում են կեանքի արտաքին հանգամանքների մեր սեռի վրայ ունեցած ազգեցութիւնը: Վերջապէս, ինչպէս որ կենդանաբանութիւնը քննում է մի որևէ է կենդանական խումբ հեռու անցեալում, որպէս զի վերակազմէ նրա լաջորդականութիւնը, այնպէս էլ մարդաբանը պարտաւոր է հետազոտել մարդու անցեալն ու ծագումը:

Բարեբախտաբար մարդաբանութեան մեծապէս նպատակում են նրա լարակից գիտութիւնները, որովհետև մարդը շատ վաղուց արդէն գիտողութեան և հետազոտութեան առարկալ է դարձել: Արդէն բժշկութիւնը հիմնովին և բազմակողմանի կերպով ուսումնասիրել է մարդու ներքին կազմուածքը, նրա գործարանների պաշտօնը, հիւանդութիւնները, անկանոնութիւնները և ալլակերպութիւնները, որպէս զի գործնականապէս օգտուի դրանցից դուրս բերած եղանացութիւններից և մարդաբանութիւնը քաղում է ըստըշկականութեան այս բաժիններից այն բոլորը, ինչ որ կարող է պարզել մարդու դրութիւնը բնութեան մէջ և երեան հանել սեռի զանազան խմբերի մէջ եղած տարբերութիւնը: Փելիսոփայութիւնը մեծ ջանքով ուսումնասիրել է մարդու հոգեկան կեանքը և մարդաբանութիւնը զանց չէ

առել նրա հասած եզրակացութիւնները: Բայց սրանից մարդաբանը դիմում է և լեզուաբանութեան, որպէս զի մի ընդհանուր գաղափար կազմէ զանազան մեռած ու կենդանի լեզուների մասին:

Բայց մարդաբանը պիտի լաղթէ բազմաթիւ արգելքների: Մարգկալին սեռ տարածուած է երկրիս մեծ մասի վրայ, ուստի և՛ հարկաւոր է ամէն տեղ մասնաւորապէս ուսումնասիրել և դժուել, որի համար և հարկաւոր են մեծ միջոցներ: Բայց երկրիս շատ տեղերը համարեա անմատչելի են եւրոպացուն, և մինչև անգամ եթէ նա կարողանար մուտք գործել այդ տեղերում, այդ ժամանակ էլ ոչ բոլոր ժողովուրդները յօժարութեամբ թոյլ կը տալին նրան հետազօդութիւններ կատարելու իրենց վրայ: Այս խոչընդուներին աւելանում են և ուրիշ մի քանի, բարոյական արգելքներ: Մարդաբանութեան մէջ մարդը պէտք է դատէ իւր մասին, ուստի և՛ նրա գատողութիւնը միշտ անաչառ չէ լինում: Մէկ էլ որ մեր գաղափարները շատ անգամ մթնանում են շատերիս զվաներում արդէն վազուց արմատացած նախապաշարումներից և մոլորութիւններից: Այսպէս, օրինակ, մի քանիսը կարծում են, որ մեր երկիրը տիեզերքի կենդրոնն է կազմում և որ բոլոր էակները բացառապէս մեր լարմարութիւնների համար են ստեղծուած: մի քանիսն էլ ենթագրում են, որ մարդը շատ վաղ ժամանակներս է երևացել երկրիս վրայ, մի վեց հազար տարի սրանից առաջ:

Ասածներից երեսում է, որ մարդաբանութեան առարկան սաստիկ ընդարձակ է, բայց այնուամենալիւ այս գիտութիւնը չի գուրս գալիս այն սահմանից, որ գծում են նրան նրա միջոցներն ու մեթոդը: Մի ուրիշ գիտութիւն էլ կալ, որ լրացնում է մարդաբանութիւնը, դա—ազգագրութիւնն է: Այս վերջինս պատկանում է գիտութիւնների պատմական-հասարակական ճիւղին, որ մանրամասն ծանօթացնում է մեզ ազգերի լեզուների, նրանց հոգեկան կեանքի, հասարակական խմբերի, ինչպէս նաև սովորութիւնների, վաճառականութիւնների, կրօնների, դիցաբանութիւննե-

ըէ և գաղթականութիւնների հետ։ Մարդաբանութիւնն ազգագրութեան հիմն է կազմում նրանով, որ մեզ ծանօթացնում է մարդու հետ կենդանաբանական տեսակէտից, ազգագրութիւնն էլ, իւր հերթին, իւր ընդհանուր սկզբունքներով, զօրաւոր նեցուկ է ծառայում մարդաբանութեան։ Այս երկու ճիւղերի մէջ շատ մեծ ազգակցութիւն կայ, որովհետեւ երկուսն էլ վերաբերում են միեւնոյն առարկային—մարդկային սեռին։ շատերը մինչեւ անգամ ազգագրութիւնը մարդաբանութեան ճիւղ են համարում։ Բայց մեզ թւում է թէ անօգուտ չէր լինիլ նրանց տարբերել ոչ միայն աշխատանքի բաժանման սկզբունքն ի նկատի առնելով, այլ և նրանց տարբեր մեթոսների և բնաւորութեան պատճառով։ Մարդաբանութիւնը դիմելով և չափելով ուսումնասիրում է մարդու այն բոլոր առանձնալատիկութիւնները, որոնք սիստեմատիքական նշանակութիւն ունին. ազգագրութիւնը բացի դիտողութիւնից, լենուում է հնախօսութեան, տւանդութեան, պատմութեան և լեզուաբանութեան վրայ։ Առաջինն օգտուում է բնական, երկրորդը պատմական և փիլիսոփալական գիտութիւնների մեթոդով։ առաջինը, վերջապէս, նկատում է մարդուն որպէս կենդանաբանական մի անհատ, երկրորդը որպէս հասարակական մի ամբողջութիւն։

Բ.

ՍԱՐԴՈՒ ՄՐՏԱԲԻՆ ՑԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

1. Հասակը.—Մարդկանց հասակները սաստիկ տարբեր են լինում։ Թէպէտ այս տարբերութիւնները զուտ անհատական են, սակայն շատ անգամ էլ սերտ կտպուած են լինում սեռի և ցեղի հետ։ Ամենին յայտնի է, թէ որքան տարբեր են մեր Կովկասեան կամ միջերկրական ցեղի հասակները. և երբ այս տարբերութիւնները ծայրայեղութեան են հասնում, մենք նրանց հսկաներ կամ թղուկներ ենք համարում։

Այսպէս Սեսոստրիսը հսկալ էր. Կոնտն ասում է, թէ

Մաքսիմիլիան կալսը 2 մետր և 33 սանտիմետր բարձրութեան հասակ ունէր. Արտական պարսիկը 2 մետր և 66 հարիւրամետր: Ֆիլլանդացի հսկան, որ երևցաւ Փարիզում 1735 թուին, 2 մետր 17 սանտիմետր էր, ծրէնտացի Զիլի հսկան 2 մետր 65 սանտիմետր հասակ ունէր: Ասում են թէ Գոլիաֆ հսկալի հասակը հասնում էր 3 մետր 3 սանտիմետրի: Մի արար որին իւր հազուագիւտ հասակի պատճառով բերել են կլաւդիոս կալսը մօտ, 3 մետր ու 28 սանտիմետր բարձրութիւն ունէր: Կանալք շատ հազիւ են արտասովոր հասակ ունենում:

Միւս կողմից թզուկներն էլ Եւրոպայում շատ հազուագիւտ չեն: Սիզիֆ, Մարկոս Անտոնիոսի թզուկը, հազիւ 65 սանտիմետր լինէր: Լեհացիների թագաւոր Ստանիսլաւի թզուկը 89 սանտիմետր բարձրութեան հասակ և լաւ կազմուածք ունէր. Բորոսլավսկի լեհացին ընդամէնը 75 սանտիմետր բարձրութեան էր և կանոնաւոր կազմուածք ու փոքր ինչ խելք ունէր: Ամենալայտնի թզուկներից ամենից լաճախ լիշտում է «Ճոմ Պուս» և պիշտան Կոլիբրինս: Դոմիցիան և Մոնտեզուման զուարճութեան համար հսկաներ էին պահում, իսկ Կատարինէ դը Մեդիչին հսկաներին ամուսնացնում էր, սակայն այս ամուսնութիւնները անբեր էին մնում:

Խտալացիների միջին հասակը հասնում է 1,636 մետրի:

Եթէ մենք գուրս գանք Եւրոպայի սահմաններից և հետազօտենք զանազան ցեղերի հասակները, այն ժամանակահագին տարբերութիւններ կը գտնենք: Ալսպէս, օրինակ, բարձր հասակ ունին Պատագոնցիները և Կարաիրները. Հազիւ միջին և մինչեւ անգամ փոքրահասակ են Հրու երկրի քնակիչները, Լապլանացիները, Էսկիմոսները և Բուշմէնները: Բարձր հասակ են ունեցել Վանդիմերի երկրի վերջացածքնակիչները կամ Տասմանցիները, սաստիկ փոքրահասակ են Կենտրոնական Աֆրիկայում պատահող ակկանները, որոնց հասակը միջին թուով 1,44 մետրից չի անցնում: Միանիի մեզ մօտ բերած երկու ակկան, որ գեռ ևս իրենց կատարեալ

զարգացման չեին հասել, մինը 1,11, միւսը 1,00 մետր հասակ ունէին:

Մի որևէ է ազգ ուսումնասիրելիս, մենք աչքից չպիտի թողնենք նրա հասակը, որովհետեւ այդ լիովին արժանի է մեր ուշադրութեան: Սակայն պէտք է ճիշտ բացատրել այդ, որովհետև սեռը, տարիքը, հասարակական պայմանները և հիւանդութիւնները, ցեղի նման, բաւական մեծ ազդեցութիւն ունին դրա վրայ: Պրօֆեսոր Ռիկկարդին այս մասին հետեւեալ կանոններն է գրել:

ա) Հասակն իւր աճման վերջին կէտին հասնում է 25—35 տարիների ընթացքում, թէև, երբեմն, որպէս բացառութիւն կարող է աճել և՛ մինչև 45 տարին:

բ) Կինը կարող է մի փոքր ինչ առաջ հասնել այս վերջնական հասակին:

գ) Յիսուն տարեկանից անց անհատների հասակը չի կարելի ճիշտ համարել, որովհետև այդ ժամանակից արգելն սկսում է փոքր առ փոքր փոքրանալ:

դ) Բոլոր վաթսունն անց մարդկանց հասակն աւելի փոքր է քան որ ունէին 25—35 տարիներում:

ե) Ալժմ չի կարելի չպնդել, չտպացուցանել, որ տարբեր ցեղերի մէջ վերջնական հասակի շրջանը տարբերում է, թէև կարելի է ենթադրել, որ հարաւալին—եւրոպական ցեղերը, հիւսիսայինների համեմատութեամբ տրագ աճելով, արագ էլ հասնում են վերջնական հասակին:

զ) Վերջնական հասակն արագացնելու կամ յամբացնելու համար հարկաւոր է անհատական ֆակտորների (գործոնների) ինչպէս՝ սեռի, հասարակական դիրքի, սննդի, առողջութեան, հիւանդութեան և այլն, ազդեցութիւնը և այս բոլոր գործոններն միասին կարող են աւելի մեծ ազդեցութիւն ունենալ վերջնական հասակի վրայ քան թէ ցեղը:

Հետեւեալ աղիւսակը մեզ կը ծանօթացնէ մի քանի ազդերի երկու սեռի վերջնական միջին հասակի հետ:

Այլառութեակութիւնը	Կամ	Աղաբարձութիւնը	Կամ
Անդամութեամբ	Հարացած	Անդամութեամբ	Հարացած
Պատառունցիւներ.	.	1855	1602
Անդրիասցիւներ.	.	1723	1624
Բորչնէցիւներ.	.	1690	1553
Կորգալիներ.	.	1687	1548
Բէլինացիւներ.	.	1684	1579
Մողէցիւներ.	.	1679	1556
Սարդինիացիւներ.	.	1649	1508
Հիւան, լառուլակիւներ.	.	1648	1531
Աղջիրալաւան կողմին բնակիւներ.	.	.	.
Համիլիներ.	.	1646	1549
Լապերժիներ.	.	1634	1498
Աւազալացիւներ.	.	1620	1580
Ֆիշէցիւներ.	.	1612	1522
Հար.	Խոսաւ. բնակիւներ.	1604	1521
Պատուաններ.	.	1600	1500
Սամօնիներ.	.	1595	1487
Էսկիմուններ.	.	1591	1554
Վարդաշներ (թէլոն)	.	1537	1448
Անդամանէցիւներ.	.	1520	1470
Ակիաններ.	.	1520	1360
Բոռչնէցիւներ.	.	1444	1395

Միևնույն ցեղի զանազան անհատների, ինչպէս և տարբեր ցեղերի մէջ ընդհանրապէս ահագին տարբերութիւն կալ գերութեան կամ լրաբութեան վերաբերութեամբ։ Այսպէս, օրինակ, Կովկասեան ցեղից մեզ յալտնի են՝ Սպոնէրը, որ կշռում էր 294 կիլոգրամ, Եգուարդ Բրայգը՝ որ կշռում էր 274 կիլոգրամ, ուրիշ երկու անգլիացիներ, որոնցից մինը կշռում էր 222, իսկ միւսը 211 կիլոգրամ։ Ներկալ գարի կիսին Տիւրենգէնի մօտ մեռած մի տասն տարեկան աղջիկ 133 կիլոգրամ էր կշռում։ 1870 թուին ես Բոլգանոյում մի երիտասարդ կին տեսալ, որ 181 կիլոգրամ էր կշռում։ Միւս կողմից, Կլաւդի Սէլլան, կենդանի կմախքը, քսան տարեկան հասակում կշռում էր ընդամէնը 22 կիլոգրամ, իսկ 40 տարեկանում 28 կիլոգրամ։ Աւստրալիացիներն յալտնի են իրենց վերին աստիճանի լրաբութեամբ, Եւկիմոսները իւրենց գերութեամբ և ուժով։

Լզարութիւնն ու գերութիւնը կարող են տեղական յատկութիւններ լինել, բայց ամենից առաջ կախուած են կերպերի քանակութիւնից և որակից։ Այսպէս, օրինակ, Աւստրալիացիները գեռ ալժմս էլ ուտում են քիչ սննդիչ կենդանիներ՝ չղջիկներ, գորտեր, օձեր, որևէ է ձուկ, միջատներ

և ճիճուներ. բացի գրանից նրանք սննդում են միայն բոլորի արմատներով և հատիկներով, որ երկու քարերի մէջ դնելով աղում ալիւր են դարձնում: Խոկ էսկիմոսները աշագին քանակութեամբ միս և ճարպ են ուտում: ալսպէս, օրինակ, նրանք մէկ նստելիս մինչև 12 գրուանքայ միս են ուտում և մի լիտր ձկի իւղ են խմում, և ալսպիսի մի ճաշից լետոյ իրենց շատ լաւ են զգում:

Մի քանի ցեղերի մէջ ճարպը հաւաքւում է մարմնի մի որոշ, գլխաւորապէս նստատեղիի վերին մասում և կազմում ճարպեալ կուգ: Այս յատկութիւնը մենք պատահում ենք հոտտենտոտների և բուշմէնների մօտ և ամենից լաւ ալդ տեղերի գեղեցկուհիների վերալ: Կանալք ճանապարհ գնալիս նստեցնում են ալս ճարպեալ բարձերի վրայ իրենց երեխաներին, որոնք ձեռքերով գրկում են նրանց ազդրները:

2) Մարմնի չափը. — Համեմատական տեսակէտից այս հարցը, կարծես, շատ քիչ է ուսումնասիրուած. նկարիչները զանազան չափով են նկարել մեր ցեղը: Այսպէս օրինակ՝ Փարնեզեան Ներկուլէսի գլխի երկարութիւնը լարաբերում է ամբողջ մարմնի երկարութեան ինչպէս $1:7^{43}/48$. Ուաֆայէլի նկարներից մի քանիսի մարմնի երկարութիւնը հաւասար է գլխի վեց երկարութեան, Միքէլ Անջելոսինը՝ ուժ գլխի և գեռ աւելի:

Մարմնի մասերի չափերի տարբերութիւններն մեր ցեղի մէջ նկատելու համար բաւական է, որ մեր զուրջն նալենք: Անդամները գիտելով, մենք կարող ենք երկու տեսակ մարդ նկատել, առաջինին պատկանում են նրանք, որոնց կրծքի վանդակը և անդամները մեր էստետիքական հայեացքներին համեմատ մեծութեան են. երկրորդին նըրանք, որոնց ներքին անդամներն անցնում են այս հայեացքների ցոյց տուած սահմաններից: Այս երկրորդ տիպը գլխաւորապէս պատահում է բարձրահասակ, մէկ էլ գործունեալ մարդկանց մէջ: Օրինակ Պետրարկալի ոտներն անհամեմատ աւելի զարգացած էին քան թէ ձեռքերը:

Վերին և ներքին անդամների կազմող մասերի երկա-

բութիւնը սաստիկ տարբերւում է: Սրանում կարելի է հաւաստիանալ հետազօտելով նեղրի շառաւիզ ոսկրը, որ բազկոսկրի համեմատութեամբ աւելի երկար է, քան եւրոպացունը:

Սպիտակի

Շառաւիզ ոսկրը ($\text{բազկոսկրը} = 100$) 73,93
Նեղրի

Շառաւիզ ոսկրը ($\text{բազկոսկրը} = 100$) 79,40

Ուրիշ մի քանի յարաբերութիւններ գտնում ենք հետևեալ աղիւսակում:

	Եւրոպացու	Նեղրի	Նեղրի տարբերութիւն
Բազկոսկր+շառաւիզ ոսկրը			
(ազդը+սրունք=100)	69,73 68,27	-1,46
Սրունք			
(ազդը=100)	79,72	81,33	+1,51
Շառաւիզ ոսկրը			
(ազդը+սրունք=100)	29,54	30,38	+0,64
Բազկոսկր			
(ազդը+սրունք=100)	41,11	38,20	-1,91
Անրակ			
(բազկոսկր=100)	44,63	46,74	+2,11

Նեղրի ոտը երկու, ուշադրութեան արժանի առանձնայատկութիւն ունի: Նրա ոտի գնդղուցները շատ քիչ են զարդացած, որի պատճառով չի կարելի ոտը գեղեցիկ համարել: Բացի դրանից նրա ոտքը տափակ է, որովհետեւ եւրոպացու ոտի կրունկի և մատների միջև կազմուած աղեղը նրա մօտ ճարպով լցուած է: Ամերիկայում սպիտակներն ընդհանրապէս ասում են, թէ նեղրը իւր կրունկով աւազի մէջ ծակ է բաց անում:

Շատերին հետաքրքրելի է այն հարցը թէ որ մատն է ամենից երկար ցուցամատը՝ թէ մատանեմատը. կապիկների ցուցամատը միշտ կարճ է մատանեմատից. միևնույնը համարեա միշտ նկատւում է և նեղրների մէջ: Ինչ վերաբերում է եւրոպացիներին, հետևեալ աղիւսակը համառօտում

Է Մանտեղացցալի իտալացիների վրայ կատարած 712 դեռողութիւնները:

Յուցամատը մատանեմատից երկու ձեռքի վրայ էլ երկար է,	Յուցամատը երկու ձեռքի վրայ է համապար է մատանեմատից:	Յուցամատը մի ձեռքի վրայ երկար է համապար է մատանեմատին:	
Տղամարդ . 27 Կին. . . 64	Տղամարդ . 309 Կին . . . 194	Տղամարդ . 57 Կին . . . 45	Տղամարդ . 10 Կին. . . . 6
Բոլորը . 91	Բոլորը . . 503	Բոլորը . . 102	Բոլորը . . 16
Տղ. 6,7 հարիւրին Կին. 20,70 հար.	Տղ. 76,67 հար. Կին. 62,78 հար.	Տղ. 14,14 հար. Կին. 14,56 հար.	Տղ. 2,48 հար. Կին. 1,94 հար.
Բոլորը 12,77 հ. Բոլ. 70,65 հար.	Բոլ. 14,32 հար.	Բոլ. 2,25 հար.	

Մի քանի ազգերի մէջ փորը սաստիկ զարգացած է: Մինչև անդամ մեր ցեղի մէջ նկատում է փորերի տարբերութիւն: Այսպէս, օրինակ, առաւելապէս ալբային կերակրով սննդուող գիւղացու փորն աւելի մեծ է քան թէ շատ յիս գործ ածող հարուստ քաղաքացինը: Փորի այս զարգացումն աւելի նկատելի է կանանց քան թէ տղամարդկանց մէջ:

3) Կաշին եւ նրա յաւելումները.—Կաշու գոյնը շատ մեծ նշանակութիւն ունի ցեղերի դասակարգութեան ժամանակ, սակայն ով միայն այս կրթութիւնումի վրայ կը հիմնուի, յաճախ մոլորութիւնների մէջ կընկնի: Ուստի և՛ սպիտակ, սև, գեղին և կարմիր բաժանումները գիտնական նշանակութիւն չունին: Աշխարհիս բոլոր մասերում նորածինները գոյնով միմեանց շատ նման են և միայն յետոյ են ստանում իրենց ցեղին յատուկ գոյնը.

Սև գոյնի պատճառների մասին շատ վիճաբանութիւններ են եղել: Միքանիսը կլիմալին էին վերագրում, սակայն գիտենք, որ սև կամ թուխ մարդիկ պատահում են և՛ ստիկ տարբեր կլիմաներում: Ուրիշները սև գոյնը վերագրում էին բուսական սննդին, բայց ոչ բոլոր նեգրներ կերակըր-

ւում են միայն բոլսերով և ոչ էլ բոլոր սպիտակներ սնընդ-
ւում մսեղէնով։ Գուցէ սրա բացատրութիւնը պէտք է որո-
նել այն փաստի մէջ, որ նեգրները բոլորովին չեն ենթարկ-
ւում դեղնութիւն հիւանդութեան — մի առաւելութիւն, որ
անցնում է մինչև անգամ և նրանց, որոնց երակների մէջ
հոսում է մի քանի կաթիլ նեգրի արիւն։

Նեգրի կաշին շօշափելիս սառն և խոնաւ է թւում,
ինչպէս թաւիշը, բայց անդիւր հոտ է արձակում, որին մի-
միայն Սպանիացիներն ու Պորտուգալացիներն են հեշտու-
թեամբ ընտելանում։ Բայց ի նկատի առնելով որ Պերուա-
ցիները հոտից որոշում են ընիկին, սպիտակին և նեգրին,
և որ շները հոտառութիւնով ճանաչում են իրենց տէրերը,
կարող ենք հաստատել որ բոլոր, ամէն ցեղի պատկանող
անհատներն էլ մի տեսակ հոտ են արձակում, թէև երբեմն
շատ թոյլ կերպով, այնպէս որ միմիայն ամենասուր հոտա-
ռութիւնը կարող է զգալ։

Աչքերի գոյնը տարբեր է լինում, բայց սերտ կապուած-
է մորթու գոյնի հետ։ Կապտագոյն աչքեր առաւելապէս
պատահում են շիկահեր սպիտակ ժողովրդների մէջ, սև կամ
թուխ մարդկանց աչքի ծիածանամաշկը սովորաբար սև կամ
կինամոնագոյն և երբեմն էլ գորշ է լինում։

Սաստիկ տարբեր է լինում նաև մազերի գոյնը։ Բոլոր
ցեղերի մէջ շիկահեր (րայակ) մարդիկ քիչ են պատա-
հում։ Այս բացառութեամբ, բոլոր թխաբոյն ցեղերը սև մա-
զեր ունին. խարտեաշները (Ենոկուրայ) առաւելապէս պա-
տահում են միայն արիական խմբի, մէկ էլ Ասիայի սեմիտ-
ների մէջ։ Սպիտակափայլ (ԸԵՒՏԱԿԱՅ) մազերը, որ պատա-
հում են Ամերիկայի մի քանի մասերում, գուցէ գաղթակա-
նութեան և խառնածնութեան հետևանք լինին։

Մարդն իրեն մերկ է համարում, որովհետեւ երկար և
խիտ մազեր միայն նրա գլխի և մի քանի որոշ մասերի վե-
րայ կան։ Բայց կարճ և բարակ մազեր քիչ քիչ տարածուած
են և ուրիշ տեղեր։ Մի քանի ժողովրդների, օրինակ, Ալ-
նոսների և Տողասների մէջ, երկար մազեր գտնուում են ամ-

բողջ մարմնի վերալ. ուրիշներ էլ լատկապէս աշխատում են պոկել իրենց մազերը և բոլորովին մերկ երևալ: Մի քանի ցեղեր սաստիկ երկար մօրուք են թողնում, ուրիշներ, ընդհակառակը, բոլորովին անմորուս են: Մազերի երկարութիւնը զանազան ցեղերի մէջ սաստիկ տարրերում է. օրինակ նեգրի մազերը կազմում են գանգուռ կծիկ, մենք բաւական երկար ենք թողնում, իսկ Ամերիկայի բնիկներինը շատ անգամ մինչև գետին են հասնում: Մազերի երկարութիւնը և նրանց սանդրուածքն երեւմն նպաստում են ցեղերը դասակարգելու:

4) Աշքերը, քիթը եւ քերանը.—Աչքերը միմեանցից տարբերում են ոչ միայն գոյնով, ինչպէս իսկոյն նկատեցինք, այլև՝ իրենց լալնութեամբ և աչքի բացուածքի ու զղութեամբ: Այսպէս, օրինակ, բոլորին լալանի է չինական աչքերը:

Քիթը չափազանց նշանաւոր գործարան է, ոչ միայն իւր կատարած գործողութիւնով, այլև նրանով, որ բաւական որոշում է մարդու դէմքը. քիթերը տարբերում են կողքից նայելով: Յալանի են մի քանի քիթլատ ցեղեր, ինչպէս նեղըները:

Նրիթունքները լինում են կամ բարակ, ինչպէս, օրինակ, Կովկասեան ցեղինը և կամ հաստ, ինչպէս մի քանի ստորցեղերինը (նեղըներ):

5) Գանգի տարրողութիւնը (ըմկոստ) եւ ուղեղի քաշը.—Գանգի տարրողութիւն կոչում ենք ⁴⁰ տաքութեան զտածքի ալն քանակութիւնը, որ պարունակում է գանգի մէջ: Եւ որովհետեւ ջուրը կարելի է չափել և կամ կշռել, ուստի և՛ այս տարրողութիւնը արտայալուում է խորանարդ սանտիմետրներով կամ գրամմաներով: Խոկական ծաւալն որոշելու համար նախ կշռում են դատարկ գանգը և ապա ջուր լըցրած, և այս երկու քաշերի տարբերութիւնը կազմում է խոկական տարրողութիւնը: Խնքն ըստ ինքեան հասկանալի է, որ ալն գործողութիւնը սկսելուց առաջ անհրաժեշտ է կառով և կամ մի ուրիշ բանով փակել գանգի բոլոր ծակերը: Միևնուն նպատակով կարելի է և՛ ջրի փոխարէն ուրիշ նիւթեր գործածել, օրինակ, կորեկ, մանր կոտորակ կամ չոր-

աւագ: Ընդհանրապէս կոտորակը ամենից աւելի լարմար է. բրինձը, գարին և ուրիշ ալգոյիսի հացահատիկներ լարմար չեն, որովհետեւ երկար և անկանոն ձեւ ունենալով չեն կարողանում լիովին լցնել գանգի ոսկրների ներքին փոսերն ու խորշերը: Դանդի մէջ ներփակուած աւագի, կոտորակի քանակութիւնը լեռոյ պէտք է փոխարինել զերոյիշեալ բարեխառնութեան ջրով, որ շատ հեշտ է անել ալս նպատակով պատրաստուած և աստիճանների բաժանուած ապակեալ խողովակների միջոցով:

Ուղեղի քաշը տարրեր է թէ միևնույն ցեղի անհատների և թէ զանազան ցեղերի մէջ և ծառալում է որպէս մի կրիտերիում խելքի մասին դատելու: Հետեւեալ աղիւսակում ցոյց է տրուած մի քանի աչքի ընկնող մարդկանց ուղեղի քաշը, որից երեսում է, որ ուղեղի մեծութեան և խելքի մէջ մի որոշ կապ կալ, բայց ով սկսի առաջնորդուել միմիալն ալս կրիտերիումով՝ նա կարող է չարաչար սխալուել, որովհետեւ բացի քանակից, պէտք է և՛ որակն աչքի առաջ ունենանք: Յետոյ, մենք չպիտի մոռանանք, որ ուղեղը կազմուած է մասերից, որոնց համեմատական զարգացումը չէ կարող նշանակութիւն չունենալ:

Ա Ն Ո Ւ Ն Ը.	Հասակը	Կ Ո Զ Ո Ւ Մ Ը.	Ուղեղի քաշը
1. Կիւռիիէ	63	Բնապատմաբան	գրամմ 1829
2. Բալրօն	36	Բանաստեղծ	1807
3. Պետրարկա	70	Բանաստեղծ	1666
4. Դանտէ	56	Բանաստեղծ	1552
5. Դիբելէ	54	Մատեմատիկոս	1520
6. Ֆուկս	52	Ախտաբան	1499
7. Դառա	78	Մատեմատիկոս	1492
8. Ֆօսկոլօ	50	Բանաստեղծ	1483

Ուղեղի քաշը կախուած է հաստկից և սեռից, ամենաշատ քաշին հասնում է 20 մինչև 40 տարեկան հաստկում, որ համարեա ամփոփոխ է մնում 40—50 տարիների ընթացքում և այնուհետև բաւական քշանում: Կնոջ ուղեղն աւելի քիչ է կշռում քան տղամարդունք: Հետևեալ աղիւակն ապացուցանում է մեր ասածի ճշմարտութիւնը:

Հ Ա Ս Ա Կ Ը.	Տ Վ Ա Մ Ա Ր Գ Ի Ւ		Կ Ի Ն Ի	
	Ուղեղի միջին քաշը	Ուղեղի միջին քաշը	Ուղեղի միջին քաշը	Ուղեղի միջին քաշը
1 մինչև 10 տարեկան	13	985,15	34	1033,26
11 " 20 "	11	1465,27	13	1285,94
21 " 30 "	13	1341,53	20	1249,00
31 " 40 "	35	1410,56	17	1262,00
41 " 50 "	36	1391,41	25	1261,00
51 " 60 "	31	1341,19	15	1263,13
60 անց	51	1326,21	32	1203,43

Եւրոպացիների գանգի տարրզութիւնը միջին թուռով հաւասար է մօտ 1500 խորանարդ սանտիմետրի: Միւս ժողովրդներինը՝ սովորաբար փոքր է, իսկ կանանցը միշտ աւելի փոքր է քան տղամարդինը, ինչպէս երեսում է հետևեալ թուերից.

ԳԱՆԳԻ ՏԱՐՌՂՈԹԻՒՆԸ

Տղամարդկանց	Կանանց
Ալժմեան փարփառիների	1558
Զինացիների	1518
Էսքիմոսների	1539
Նոր-Կալէդոնցիների	1460
Նեղրերի	1430
Տասմանցիների	1452

Աւատրալիացիների	1347	1181
Նուրիացիների	1329	1298
Մորդկանց ամենափոքր, բայց ոչ իդիօտի գանգի տարողութիւնը հաւասար է 1020 խոր. սանտիմետրի, հետևապէս և՝ դրա և նորմալ գանգի տարրերութիւնը հաւասար է 800 խոր. սանտիմետրի, իսկ նորմալ մարդու և փոքրագութիւն, բժամիտի միջի տարրերութիւնն աւելի մեծ է: Եւ միրաւի նկատուել են 460 և մինչև անգամ 270 խոր. սանտիմետր տարողութեան գանգեր:		

Պ.

ԿԵՍՆՔԻ ԸՆԹԱՑՔԸ

Նորածնի վերալ նկատում են մի քանի առանձնաշտատկութիւններ, որ մօտեցնում են նրան իրենցից ստոր կենդանիներին: Նրա ձեռքերն ու ոտները համարեա միենոյն երկարութեան են (վերջինները փոքր ինչ երկար են): Նորածնի ոտին մեծերի ոտի ուղղութիւնը տալով, մենք նըրան ցաւ ենք պատճառում, որից նա բզաւում է: Ալդակէս և չենք կարող հեռացնել նրա ձեռքերը կրծքից ոչ հորիզոնական և ոչ ուղղահայեաց ուղղութեամբ: Ողնաշարը ծըռուած է, ինչպէս չորքոտանիներինը, իսկ կոնքն աւելի մօտ է կրծքին քան թէ չափահասինը: Կեանքի առաջին ամիսներում երեխան չի կարողանում շարժել ձեռքերը, առանց ոտքերն էլ միաժամանակ շարժելու և մենք տեսնում ենք թէ ինչպէս նա միաժամանակ աշխատում է իւր բոլոր անդամներով: Միայն մեծանալիս նա սովորում է օգտուել ներքին անդամներից որպէս նեցուկի, իսկ վերջիններից՝ որպէս բռնելու և շօշափելու օրգաններ, նաև ընտելանում է մէկն առանց միւսին գործածելու: Երեխալի զարգացման վերալ շատ մեծ նշանակութիւն ունի այն հանգամանքը, որ նա սովորաբար մէջքի վրալ է պառկում, որի շնորհիւ ողնաշարն ստանում է պէտք եղած ձեւը, ոտներն երկարանում են, ձեռներն ազատօրէն հեռանում կրծքից: Յետոյ արդէն

Երեխան պիտի սովորէ ոտքի կանգնել, որին մեծապէս նը-
պաստում է ձեռը, որով բռնում է շրջապատող առարկանե-
րից և առաջին փորձերն անում, ապա տստիճանաբար սո-
վորում է կանգնել և վերջի վերջոյ քայլել:

Սրանից յետոյ մանուկն սկսում է զարգանալ ընդօրի-
նակելով, վարժուելով և փորձելով: Երեք ամսական ժամա-
նակ նա երկարացնում է իւր ձեռքերն իրեն դուր եկող ա-
ռարջկաներին և աշխատում է տանել նրանց իւր բերանը-
չորս կամ հինգ ամսական ժամանակ նա ճանաչում է իւր
ծնողներին և իրեն շրջապատող անձինքներին. այս հասա-
կում նա երբեմն երազ է տեսնում,—ապացոյց որ նրա լի-
շողութիւնն սկսում է ձեակերպուել: Հաւանական է, որ մա-
նուկն առաջին անգամ ստնտուի կուրծքն է տեսնում—այս
կարող ենք նրանից հետևացնել, որ մանուկը քնած ժամա-
նակ ծծում է: Առաջին ժամիտն երեսում է նրա երեսին շատ
վաղ, երբեմն երկրորդ կամ երեք ամսական հաստկում, եր-
բեմն էլ աւելի ուշ: Ուժի կամ իննը տարեկան ժամանակ
նա սկսում է խաղալ զանազան իրերով. բայց զեռ ևս նրանց
տիրելու ցանկութիւն չի արտայալտում: Ծնուելուց յետոյ
մանուկը բղաւում է, յետոյ սկսում է թոթովել, և միայն
տասերկու ամսական ժամանակ սկսում է յօդաւոր ձայներ
հանել: Նրա արտասանած առաջին ձայնաւոր տառը՝ առէ,
վերջինը՝ ի. առաջին բաղաձալնը՝ մ, վերջինը՝ ս և ը: Կե-
զուն սովորելով երեխայի առաջ մի նոր աշխարհ է բաց-
ւում, որովհետև սա միջոց է տալիս նրան արտայալտելու
իւր ցանկութիւնն ու կարիքները: Թոյլ է տալիս բացատրու-
թիւններ պահանջելու և որա շնորհիւ զարգանում է նրա
լիշողութիւնն ու խելքը:

Եւրոպայում աղջիկներն սկսում են արբունանալ 12—
15, իսկ տղաներն 14—16 տարեկան հասակում: Հարաւա-
յին և արևելեան երկրներում աւելի վաղ են արրունանում: Ալսպէս, օրինակ, նիազօլսում և Սիցիլիայում աղջիկների
ընական դաշտանն շատ անգամ սկսում է 9, 10 կամ 11
տարեկան հասակում, Պարսկաստանում և Արտրիայում սո-

վորաբար 10 տարեկան ժամանակի: Բուշմէնուհիներն երբեմն տասն տարեկան հասակում մայր են դառնում: Տղի արբունանալը երեսում է սերմի արտադրութիւնով, կոկորդի զարգացումով, միրուքի բուսնելով, աղջկանը՝ ձուի արտադրութիւնով և սմսականով. այս ժամանակի այս երկու սեռի էլ մի քանի որոշ տեղերում մազեր են բուսնում, ձախների և դէմքերի արտալայտութեան մէջ փոփոխութիւն է կատարում: Սղջկալ մարմնի վերին մասը (buste) մեծանում է:

Դրականութեան մէջ կան սերական վաղ զարգացման մի քանի օրինակներ: Կասմառուլը պատմում է մի աղջկայ մասին, որի դաշտանն 7 տարեկան ժամանակն է սկսուել և որի մարմինը հասակից անհամեմատ աւելի զարգացած լինելով, աւելի տարբիքով էր երեսում: Ութ տարեկան հասակում նա լրացել է իւր մօրեղբօրից և 9 ամսից լետոյ ծնել է մաշուած, ապրելու յոյսեր առողջ երեխալ: Միւս դէպքը վերաբերում է մի աղջկայ, որ անկանոն դաշտան է ունեցել մի տարեկան և որի կանոնաւոր դաշտանը սկսուել է 7 տարեկան հասակում: այս աղջիկը 9 տարեկան հասակում երեխալ է ծնել, որ կշռել է 7 ֆունտ: Հնդկաստանում մի աղջիկ 5 տարեկան հասակում մայր է դառել: Ֆոկսը ֆիլադելֆիայում 11 տարեկան աղջկանից տղալ է առել: Սաստիկ հետաքրքիր է Ketchum-ի առաջ բերած դէպքը. մի նեղուշի մայր էր դարձել 13 տարեկան հասակում: Ծնուած աղջիկն էլ իւր հերթին, երբ 12 տարեկան 9 ամսական էր, որդի է ծնել, այնպէս որ առաջին նեգրուհին 26 տարեկան հասակում արդէն տատ էր: Երեխաների մէջ վաղահաս արբունք նկատուած է երեք, չորս և հինգ տարեկան հասակներում:

Մեր կանանց դաշտանը ընդհատւում է 45—50 տարեկան հասակում. տղամարդը (սերական տեսակէտից) անզօր է դառնում 50—60 տարեկան հասակում: Սակայն եղել են կանանք, որ 60 տարեկան հասակումն էլ բարելաջող կերպով ծնել են:

Սովորաբար կեանքը բաժանում են մի քանի շրջան-

ների, որոնք միատեսակ չեն ոչ զանազան ցեղերի և ոչ էլ միևնույն ցեղի զանազան անհատների մէջ, և որոնք մինչեւ անգամ որոշապէս բաժանուած չեն միմեանցից։ Առաջին շրջանը, մանկութիւնը, տեսում է մինչև արբունքի ժամանակը, ալսինքն մինչև 13—16 տարին։ այս շրջանի ամրողջ ընթացքում մարմինն անդադար և արագ աճում է։ Ցետոյ գալիս է երիտասարդութեան շրջանը, որ տեսում է մինչև 20—23 տարին և որի ընթացքում, արագութեամբ զարգանում է սեռական գործարանը։ Բայց մարմինն իւր ամենաբարձր աճման հասնում է ալրական հասակում, որ տեսում է մինչև 60 տարին։ Այս ժամանակում մտաւոր կարողութիւններն էլ հասնում են իրենց ամենաբարձր կատարելութեան։ Ծերութեան ժամանակ, ալսինքն 60 տարին անցնելուց յետոյ կենսական էներգիան թուլանում է։ բոլոր գործողութիւններն աւելի կամաց են կատարում, ճարպը սպառուած է լինում, ատամները թափում են, մազերը քչանում և սպիտակում։ ողնաշարը կարճանում է և շատ անգամ էլ թեքում, երակը յամր է խփում։ Եւ երբ գործարանները դադարում են գործելուց, հասնում է մահ։

Ֆրանսիական դպրոցն աւելի շատ շրջաններ է որոշում, ալսինքն՝ Առաջին մանկութիւն ծնունդից մինչև 6 տարին։

Երկրորդ	»	6	մինչև	14	տարին։
Երիտասարդութիւն	14	»	25	»	
Ալրական հասակ	25	»	40	»	
Հասուն հասակ	40	»	60	»	
Ծերութիւն	60	անց։			

Առաջին մանկութիւնը տեսում է մինչև առաջին սեղանատամների, երկրորդը մինչև երկրորդների, երիտասարդութիւնը մինչև իմաստութեան տամների երեալը։ Ալրական հասակը տեսում է մինչև գանգի կարերի ոսկրանալու սկիզբը։ նրան հետեւող հասուն հասակը տեսում է մինչև ծերութիւն, որ արտալալուում է գանգի կարերի կատարելապէս ոսկրացումով, ատամների փչանալով և մազերի սպիտակելով։

Երբեմն կեանքը վերանորոգւում է բաւական զառամեալ հասակում. բոցը, որ այսպէս ասած, հանգչում էր, նորից բորբոքւում է: 1841 թուին մի կոլո (Վենետիկում) որ 40 տարեկան հասակում կորցրել էր իւր բոլոր ատամները, 90 տարեկան հասակում նորերն է ունենում: Սինկլիրը պատմում է, որ մի Վիզանա անունով մարդու հարիւր տարեկան հասակում նոր մազեր և նոր ատամներ դուրս եկան և որ տեսողութիւնը, որ բոլորովին կորցնելու վրայ էր, նորից ստացաւ: Հաստատապէս լալտնի են մի քանի դէպքեր, երբ զառամեալ կանալք նորից դաշտան են ունեցել. մարմնի վերին մասը նորից մեծացել է և նոր ատամներ ու մազեր են դուրս եկել:

Աստուածաշնչում լիշտում են մի քանի անձինք, որ շատ երկար են տպրել: Օրինակ Ադամն ապրել է 930 տարի, Մաթուսաղան 960 տարի, Նոյը—950 տարի: Բնախօսական պատճառներով այդքան երկար ապրելն անհնարին լինելով, մի քանի հեղինակ այս բացատրում էին նրանով, թէ Աստուածաշունչը տարիներ ասելով ամիսներ է հասկոցել, ուրիշները մերժում են այս բացատրութիւնը և ենթադրում, որ Ադամ, Մաթուսաղա և այլն անունները գործ են ածուտծ պատմական մեծ զրջաններ ցոյց տալու համար: Ինչպէս էլ որ եղած լինի, այսքան հաստատապէս լալտնի է և բոլորովին կասկածանքի չի ենթարկում, որ շատ մարդիկ հարիւր տարուց աւելի են ապրել: Գալլէրը հաշուել է այդպիսիներից հազարից աւելի: Միացեալ նահանգներում 1877 թ. կատարած աշխարհագրութիւնից երևում է, որ 1876 թ. հարիւր տարեկանից անց 43 հոգի են մեռել, սրանցից ամենամեծ տղամարդք՝ 127 տարեկան է եղել, իսկ ամենամեծ կինը՝ 119: Ուրիշ մի քանի օրինակներ էլ առաջ կը բերեմ, միայն պիտի նկատել, որ սրանցից մի քանիսը կատարելապէս վստահելի չեն:

Առաջին էվինդիէնը, որ մեռել է 1840 թ. ապրել է 210 տարի. Թովմաս Կալէրնը, որ մեռել է 1588 թուին, ապրել է 207 տարի. անգղիացի Պետրոս Տօրդոնը, որ մեռել

է 1724 թուին - 185 տարի. անգղիացի ձենորս Հենրիկոս Զիկինսը, որ մեռել է 1670 թ.-169 տարի. նորվէժիացի Սուրինգտոնը - 160 տարի. դանիացի Դրակէնբէրգը - 146 տարի, իրլանդացի Բինսլոու - 146 տարի. կոմսուհի դի-Դեսմոնը - 145 տարի, շոտլանդացի Լոուրէնսը - 140 տարի. Աննա Չամբէրը, որ մեռել է Կանադայում 1874 թ. ապրել է 130 տարի:

Կեանքի միջին տևակառութիւնը տատանւում է 28—40 տարիների միջև։ Սովոր ու համաճարակը կարճացնում են ալն, առողջապահական միջոցներն ու առատութիւնը երկարացնում։ Առողջապահական միջոցներն ամէն տեղ պակասացրել են մաշուան դէպքերը, և ալս երեսում է հետևեալ թուերից։ Ֆրանսիայում 1770 թուականից մինչև 1783 թուականը տարեկան մեռնում էին բնակիչների հազար հոգուց 34 մարդ, իսկ ալժմ մեռնում են միայն 22։ Նվէդիայում 1740 թուին հազար մարդու վերալ տարեկան 28 մահ էին հաշւում, ալժմ միայն 17։ Միլանի նախակին դքսութեան մէջ 1774 թուին մեռնում էին հազար բնակիչներից 41, իսկ ալժմ միայն 28։ Հռովմում մեր դարի սկզբում մեռնում էին հազարին 30, իսկ ալժմ 27։

Դ.

ԱՆԿԱՆՈՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵԽ ԱՅԼԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գործարանների իրենց նորմալ կամ բնախօսական դրութիւնից շեղումը կոչւում է անկանոնութիւն, եթէ այդ աննշան է, և ալլանդակութիւն, եթէ այդ շեղումը մեծ է և խանգարում է կեանքն ու անհատի լառաջադիմութիւնը։ Գործնական կեանքում միշտ հեշտ չէ ալս երկուսը միմեանցից տարբերել:

Անկանոնութիւն մատների թուի մէջ.—Պատահում են իւրաքանչիւր ձեռքի կամ ոտքի վրայ հնգից աւելի կամ պակաս մատներ. միևնույն ժամանակ նկատուած է, որ ալս

յատկութիւնը հօրից որդուն է անցնում: Գրացիուս Կալլէս անունով մի մարդ 12 մատ ունէր ձեռքերի և տասերկուսը ոտների վրայ: Նա ունէր երեք որդի, Սալվատոր, Փորժ և Անդրէաս և մի աղջիկ, Մարիամ: Սալվատորն ունէր տասերկուտական մատ ձեռների և ոտների վրայ: Միւսների վրայ ալս անկանոնութիւնը չկար: Սալվատորի չորս որդուց երկուսը տասերկուտական մատ ունէին ձեռներին և ոտներին, երրորդը՝ 10 մատ ձեռներին, 12 ոտներին. չորրորդը՝ 10 մատ ձեռներին և 11 ոտներին: Անդրէասն որդիներ չունէր: Մարիամի չորս որդուց երեքը կանոնաւոր կազմուածք ունէին, իսկ չորրորդը՝ 10 մատ ձեռների և 11 մատ ոտների վրայ:

Մարդա կղզում ապրում է մի գերդաստան, որի անգամների ձեռքերի և ոտների վրայ կան աւելորդ մատներ և ալս անկանոնութիւնը կարելի էր նկտած նրանց երեք կամ չորս սերնդի մէջ: Պետերը ուրդի մի ժամակուս իւրաքանչիւր ձեռքին եօթ մատ ունէր և ալս անկանոնութիւնը նկատուած է նրա բոլոր որդիների վրայ էլ: Միւս կողմից, յալտնի են մի քանի գերդաստաններ, որոնց մի քանի անդամները ձեռքերին չորսական մատ ունէին և ուր ալս յատկութիւնը նոյնպէս անցել է սերնդից սերունդ:

Պոչ.—Առաջները շատ էին խօսում պոչաւոր մարդկանց, ալսինքն նորմալ, բայց պոչ ունեցող մարդկանց մասին, բայց ալսպիսի ցուցումները երբէք չէին հաստատում: Հաստատապէս միայն ալն է յալտնի, որ աննորմալ պայմանների մէջ մարդը կարող է գրսից երևացող պոչ ունենալ: Հիւպշն ասում է, թէ կոստանդնուպօլսի հիւտնդանոցում տեսել է մի սև մարդակեր, որ մի կարճ պոչ ունէր, նաև մի սև տղամարդ, բաւական մեծ պոչով: Խշան Մահմէդ-Արդէլ-Հելլիսը ճանաչում էր մի սևամորթ ստրկուհի, որ մի փոքրիկ ճկոյթանման, բայց նրանից փոքր ինչ աւելի երկար պոչ ունէր: Այս իշխանն իւր ճանապարհորդութիւնների ժամանակ պատահել է գարձեալ միևնույն ցեղին պատկանող մի քանի պոչաւոր մարդկանց էլ և հաստատում է, որ կեն-

դրոնտական Աֆրիկայում այս յատկութիւնը շատ լաւ յայտնէ: Ալդպիսի երկու գէպք էլ են յալտնի: Մի գնդտապետ իւր տիւրկոսների մէջ, 1860 թուին մի նիամ-նիամ ունէր, որ մի փափուկ, ծռուող մազերով ծածկուած և 7 մինչև 8-սանտիմետր երկորութեան պոչ ունէր: Աֆրիկեան զօրագնդի մի վաշտապետ հաղորդել է ժոֆրուա Սէնտիլերին, որ ինքը Թիւնիսում մի պոչաւոր կին է տեսել:

Մազոտ մարդիկ. — Խնչպէս վերը նկատեցինք, եւրոպացիները համարեա բոլորովին մերկ են և կամ նրանց մարմինը ծածկուած է կարճ, նոսր և բարակ մազերով: Բայց կան և՛ սաստիկ մազաւորներ, որոնցից լիշենք պրոֆէսոր Լոմբրոզօի նկարագրածը: Սա մի տասերկու տարեկան աղջիկ է, Տերիզա Գամբարտելլա անունով, որի ծնողները կատարեալ առողջ լեռնականներ, ոչ մի անկանոնութիւն չեն ունեցել կաշու և մազերի աճման և գոյնի վերաբերութեամբ. Տերիզան ունէր թուխ կաշի, որ ծածկուած էր սև մազերով, անդամների և փորի վրայ 15 հազարամետր երկարութեան, աւելի երկար մէջքին, և էլ աւելի երկար և խիտ անպարկեշտ մասում: Նրա երեսն էլ ծածկուած էր խիտ մազերով, ինչպէս մի 17 տարեկան երիտասարդինք: Ծակատին նոյնպէս մազեր էին բուսած, որ խառնուել էին ունքերի հետ, որոնցից տարբերուած էին մէայն իրենց տարբեր ուղղութիւններով: Վենետիկում նկատուած է մի կին, որի ամբողջ մարմինը մինչև ծնկները ծածկուած է եղել մազերով: Համաշխարհալին հռչակ ստացան իրենց մազոտութեամբ Մեքսիկուհի Յուլիա Պաստրանան և ուուս Անդրիան Տեստիչեզը: Երբեմն այս առանձնայատկութիւնն անցնում է սերնդին: Նշանաւոր բնապատմարան Զիբոլդը նկարագրել է իրեն ձեռքըն ընկած մի տմբողջ մազոտ ընտանիքի պատկերները: Ալժմ ալդպիսի մազոտ ընտանիքներ պատահել են Ասիայում և Ամերիկայում: Ասիական մի մազոտ գերդաստան նահապետի անունը Շի—Մսօնգ է:

Սպիտակամորթովթիւն (ալբինիսմ). — Համարեա աշխարհին բոլոր մասերում երբեմն նկատում են սպիտակ մոր-

թոյի, սպիտակ մազերով և շտռագոյն աչքերով մարդիկ, ո-
րոնք կոչւում են սպիտակամորթներ (ալբինոս): Սրանք ա-
տում են լուսը, գիշերը տեսնում են և ընդհանրապէս թոյլ
կազմուածք ունին: Սրանցից շատ քչերն են երկար ապ-
րում: Մի քանի երկրներում սրանք արտօնաւորուած և
սուրբ էտիկներ են համարւում: Լոանգոսում սրանք թագա-
ւորի սեպհականութիւն են կազմում և պարտաւոր են ու-
ղեկցել նրան ամէն տեղ, իբրև հովանաւորող աստուածու-
թիւն. հարաւային Գլինէում նրանք նորնպէս սուրբ և ան-
ձեռնմխելի են համարւում:

Փոքրագլխութիւն եւ ամշուղթիւն (իգիօտիզմ). — Փոք-
րագլուխներն ու ապուշները գանգի աննորմալ կազմութեամբ
անհատներ են, որոնք դատապարտւած են մասամբ կտնգ առ-
նելու, մասամբ էլ շեղուելու իրենց կանոնաւոր զարգացումից։
Սրայիսի մարդիկ մի քիչ խելք ունին, և որովհետև նրանք
շատ բաներով լիշեցնում են կտակին, ուստի և՛ ստացել են
«մարդ-կտակի» կոչումը։ Այս մասին շատ հետազոտութիւն-
ներ են կատարուած, որոնք ապարդիւն չեն անցել պարզելու
մարդու ծագման խնդիրը։ Դոկտոր Գ. Ալեքսեյիօն նկարա-
գրել է մի այնպիսի ապուշ (իգիօտ), որ իւր կազմութեամբ
աւելի կենդանու էր նման քան թէ մարդու։ Նա փոքրա-
հասակ էր, ունէր կարճ վիզ, բոլորովին փոքր գլուխ, շատ
երկայն գերին անդամներ, երեսի բուժ արտալայտութիւն,
միլ աչքերով և վատ լարմարուող շարժումներով։ Նա ամե-
նից աւելի սիրում էր կտակիների նման մագլցել, և չէր ար-
տալայտում ոչ սէր, ոչ կամք և ոչ ցանկութիւն։ Նրան հա-
զիւ ծանօթ էին ամենահիմնական բնազգումները։ Նա չէր
խօսում, ալ սուր ձայներ էր արձակում. ոչ ոք երբէք չէր
լսել, որ նա մի որևէ է խօսք արտասանէր։ Նրա գանգի տա-
րողութիւնը հաւասար էր 350 խորանարդ սանտիմետրի։

Սաստիկ հետաքրքիր են մի քանի ապուշների մասին
գրականութեան մէջ եղած ցուցումները։ Էնրիկօ-Սոլերան,
Սանլեռնեղէտուեց (Մանդուա) իգիօտիզմի ամենանշանաւոր
օրինակներից մինն է։ Նրան նալելիս ամենից առաջ աչքի է

ընկնում նրա դէմքի կատարելապէս անասնական արտայալ-
տութիւնը և գանգի ու կրծքի ալլանդակ կազմութիւնը։
Նա սովորաբար աչքերը փակած է պահում, բերտանը, որից
անդադար թուք է հոսում, կիսաբաց է։ Դունչը սուր է, ա-
կանջներն ահագին. մազերը թափում են ճակատի վրայ։
Վիզը համարեա չի երևում, ալնպէս՝ որ կարծես գլուխը
ուսերի վրա է ընկած։ ձեռքերն ու ոտքերը լղար են, կուրծ-
քը ներս ընկած քիթը տափակ և երկար, նօսր միրուք։
Քալլելիս՝ Սոլերան ոտի դրսի կողքերի վրա է կոխում և ալս
գնացքը թշուառին կապկի նմանութիւն է տալիս։

Այլանդակութիւններ. — Մինչդեռ աննշան անկանոնու-
թիւններն կամ կազմուածքի շեղումները բաւական լաճախ
են նկատում, և մեծ մասով չեն խլում անհատի առողջու-
թիւնը կամ մահ պատճառում, ալլանդակները, հրէշները,
բարեբախտաբար չափազանց քիչ են պատահում։ Նախնինե-
րի վառ երևակայութիւնն ստեղծել է երբէք գոյութիւն չու-
նեցող հրէշներ, ինչպէս լուշկապարիկ, Տրիտոն *) և այլն և
գեռ ալժմս էլ ամբոխը խօսում է անասնի գլխով մարդկանց
և մարդկանց երեսով անասունների մասին։ Անկանոնութիւ-
նից ալլանդակութեան անցնելիս, նախ և տռաջ պատահում
ենք երկսեռներին, ալսինքն ալնպիսի տնհատներ, որոնց
մէջ արու և էգ սեռը միացած են մի անձի մէջ։ Սակայն
երկսեռներից շատերը միայն մի սեռի են, միանդամայն ներ-
կալացնելով միւս սեռի միայն արտաքին մասը. որանք կեղծ
կամ ալսպէս երևացող երկսեռներ են։ Բայց պատահում են
և իսկական երկսեռներ, ալսինքն ալնպիսի անհատներ, ո-
րոնք երկու սեռին լատուկ գեղձերն էլ ունին. բայց ալս-
պիսի երկսեռներ մարդկանց մէջ չափից դուրս քիչ են պա-
տահում։

Հրէշային տիպերից առաւելապէս լայտնի են երկուորեակ-

*) Տրիտոնը Պատիգոնի որդին էր, Ամֆիտրիաից կամ Կեչնէից։
Սա մինչև մէջքը մարդու, իսկ մէջքից վալը երկանատուտ ձկի կեր-
պարանք ունէր։ Սա ծովալին կիսաստուած էր և իւր ընկերների
հետ պաշտպանում էր նաւորդներին։

ները: Այսպէս օրինակ, Ռիտտան և Քրիստինէն ծնուել են Սարդինիալում 1829 թուին և մեռել 18 ամաց հասակում: Յուդիթն ու Հեղինէն ծնուել են Վենգրիալում 1701 թ. և մեռել համարեա միաժամանակ 23 տարեկան հասակում. նրանք խօսում էին հունգարերէն, գերմաներէն և ֆրանսերէն. կարողանում էին երգել և նկարել: Ալժմ Եւրոպայում ճանապարհորդում են Ռադիկա և Դոտիկա երկուորեակները: Սիամալի Զանդ և Էնդ երկուորեակները ծնուել են 1811 թուին և զառամեալ հասակի հասել. նրանց փորերը միացած էին միմեանց հետ մի ալնքան երկարութեան մկանունքով որ երկուորեակները կարողանում էին կողք կողքի քնել: Նրանք ամուսնացան երկու քոյլերի հետ: Էնդին ունեցաւ վեց տղալ և երեք աղջիկ, Զանդը 6 աղջիկ և երեք տղալ: Սրանք տարբեր բնաւորութիւններ և տեմպերամենտներ ունեին, բայց միևնույն հիւանդութիւններին էին ենթարկում: Երկուորեակներն առաւելապէս իգական սեռի են լինում, բայց միշտ երկուսն էլ միևնույն սեռի:

Ալլանդակները սաստիկ տարբեր ձևեր են ունենում և մի քանի հեղինակներ նրանց դասակարգում են այն միենույն մեթոդով, որ գործ է ածւում նորմալ էակների համար: Նրանք բնութեան քմահաճութիւնների արգասիք են, բայց և այնպէս ենթարկում են այն միևնույն բնական օրէնքներին, որոնց ենթարկուում են և' միւս բոլոր օրգանիզմները: Բայց ալլանդակութիւն յառաջացնող պատճառները մեծ մասամբ մեզ անլայտ են և ինչ էլ որ գիտենք; ձեռք ենք բերել կենդանիների վրալ կտտարած դիտողութիւններից: Մի քանիսը հաստատում են, որ ալլանդակութիւններից շատերի պատճառն արենակից ազգականների ինչպէս և չափազանց անհաւասար անձանց միջև կտտարուած ամուսնութիւններն են: Սազմին հասցրած վնասն էլ պատճառ է դառնում ալլանդակութեան: Ապացուցուած է, որ ազգատ դասակարգերի կանալք, որ ստիպուած են յլի ժամանակն էլ աշխատելու, ինչպէս և' անամուսին կանալք, որ դատապարտուած են իրենց գրութիւնը թաքցնելու, ա-

ւելի յաճախ են այլանդակներ ծնում քան թէ ուրիշները։ Եթէ թիսի տակ հաւկիթներն ուղղահայեաց կամ ընդհանրապէս աննորմալ դրութեամբ գնենք, շատ անդամ ալլանդակ ձագեր են դուրս գալիս։

Ե.

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Հիւանդութեան մասին գաղափարն յառաջանում է կեանքի մասին կազմած գաղափարից։ Կերջինս որպէս օրգանիզմների և արտաքին աշխարհի միջև երկրի անդադար փոխանակութիւն նկատելով՝ առողջութիւնը պիտի կայանալ այս տարրերի փոխանակութեան ներդաշնակութեան, հիւանդութիւնը՝ նրանց հաւասարակրութեան խախտման և մահը նրանց լիովին ոչնչացման մէջ։

Արտաքին ֆիզիքական ընդհանուր պատճառներ.— Օդի ճնշումը, անկասկած, ահագին ազդեցութիւն ունի մեր օրգանիզմի վրայ և կարող է հիւանդութիւնների պատճառ լինել։ Եթէ ալդ ճնշումը փոքրանալ, ինչպէս պատահում է, օրինակ, բարձր լեռներ բարձրանալիս, մարդն սկսում է ամբողջ մարմնի մէջ ծանրութիւն և մկանունքների ալնպիսի լոգնածութիւն զգալ, որ ամենաթեթև շարժումներն անդամ նրան շատ ծանր կը թուան, տինտէս որ մինչև անդամ ոտները կը հրաժարուին նրան ծտռալելուց։ Բարձր գագաթների վրայ արեան շրջանառութիւնն աւելի արագ է կատարում և շնչառութիւնն արագանում է։ Բայց և ալնպիս՝ մարդը բաւական ոլժ ունի այդպիսի փոփոխութիւններին ընդգիմագրելու։ Գրինն օգտագործելով բարձրացնել է ծովի մակերեսոյթից 11,000 ոտնաչափ առանց արեան շըրջանառութեան և շնչառութեան մէջ փոփոխութիւն նկատելու։ Մարդը մինչև անդամ կարող է ընտելանալ բնակուելու բաւական մեծ բարձրութիւնների վրայ, ինչպէս այս ապացուցանում են բարձր լեռների բնակիչները։

Մարդը կարող է ապրել ծովի մակերեսոյթից 7000 մետր

բարձրութեան վրալ 4000—5000 մետր բարձրութեան վրալ դանուող մարդկանց բնակարանները հազուագիւտ չեն, սը. բանք երբեմն գիւղեր են կազմում, ինչպէս Գանշէն (4352 մետր), Կարակօրումի և Կուրչօկը (4541 մետր) Հիմալայ-ների վրալ և երբեմն էլ, մինչև անգամ քաղաքներ՝ ինչպէս Չերքո տի Պասկօ (4352 մ.) և Պօտալի (4000), Անդերի վրալ: Կարելի է խիտ բնակութեան և քաղաքակրթութեան կենդրոնների (Մեքսիկօ, Կիտո, Ռիօմբամբա, Բոգոտա, Կուսկօ, Լազա և ուրիշներ) ալատահել ալնալիսի բարձրու-թեան վրալ, ուր մթնոլորտի ճնշումը ծովի մակերևոյթի վրալ նկատուած ճնշումից երեք կամ չորս անգամ փոքր է:

Մի քանի բժիշկների կարծիքով կան հիւանդութիւն-ներ, որ ծովի մակերևոյթից սաստիկ բարձր տեղերում կոր-ցնում են իրենց ուժգնութիւնը, այս հիւանդութիւնների կարգիցն են՝ ընդհատական և դեղին տենդերը, ժանտախ-տը և խոլերան: Նաև հաստատում են, որ թոքախտ պատ-ճառող մանրօրգանիզմը (Կոխի բացիլները) ծովի մակերևոյ-թից 2000 սանաչափ բարձրութեան վրալ չեն տարածւում: Ելեկտրականութիւնն էլ մի լայտնի ազգեցութիւն ու-նի մեր առողջութեան վրալ: Օրինակ ջղացաւութիւն և ան-դար (ՄԻՐԳՐԵՒ) հիւանդութիւն ունեցողներն նախազգում են որ կայծակ է խփելու, որովհետև էլեկտրական ձգտման փոփոխութիւնը եղանակի փոփոխութիւնն նախազգացնող զգացումներ է լառաջացնում: Գուցէ մասսամբ օզօնը, ալ-սինքն էլեկտրականացած թթուածինն է ազգեցութիւն տ-նում, բայց բժիշկներն այս մասին տարբեր և մինչև ան-գամ միմեանց հակասող եղանակացութիւնների են հասել:

Զի կարելի նաև բացասել արևի լոյսի ազգեցութիւնը մեր օրգանիզմի վրալ: Յալտնի է, որ հանքագործները, բան-տարկեալները և ուրիշներ, որ երկար ժամանակ զրկուած են արևի լոյսից, ուժաթափ են լինում և ջրջրուկ, լնդացաւ (սկօրբյութ) և ուրիշ մի քանի հիւանդութիւնների աւելի տրամագիր դառնում:

Նաև լայտնի է, որ գիւղացի տղաներն ընդհանրապէս

աւելի պնդակազմ, առողջ և կալտառ են լինում. իսկ քաղաքացի տղաներն նիշար, գժգոյն և տկար: Սւելորդ խնամատարութիւնը վերջ ի վերջոյ հնձում է այս քնքոյշ օբանիզմները: Սիրաշատ մայրերը, որ անտեղեակ են առողջապահութեան պահանջներին, վախենում են, թէ մի գուցէ դաշտերում, արեկ այրող համբոյրների տակ վազվացը վնասէ երեխալին, ուստի և ամբողջ օրերով պահում են նրան սենեակում փակուած: Մարդու վրայ կլիման աւելի զօրեղ ազգեցութիւն ունի: Տաք երկրներում կտշին, որ շարունակ գրգռում է արեկ այրող ճառագալթներից, շատ հակամէտ է հիւանդանալու. ալսպէս, օրինակ, բորոտութիւնը, որ համարեա մեզ մօտ չի պատահում, արեւելեան երկրներում սովորական հիւանդութիւն է: Լեարդը նոյնպէս աւելի է ենթարկուած հիւանդութիւնների տաք, քան թէ բարեխառն երկրներում: Նեարգալին սիստեմի մասին ասում են, որ տաք երկրներում աւելի է գրգռում, որի հետևանքը լինում է չափազանց զգայնութիւն, բուռն կիրք, բորբոքումն (էկզալտիրովանոստ): Ցուրտ կլիմալում հիւանդութեան ամենից աւելի ենթակալ են շնչառութեան գործարանները, որ վնասում են շարունակ սառն օդ ներշնչելով: Որոշ ազգեցութիւն ունենում են և՝ հողմերը, յատկապէս նրանք, որոնք փչում են որոշ տեղերում անփոփոխ կերպով, միշտ միևնուն ուղղութեամբ և երկար ժամանակ:

Վերջապէս մեր օրգանիզմի վրայ ազգեցութիւն է ունենում և մեր բնակութեան տեղը՝ երկրաբանական և ջրագրական տարրեր կազմութեան պատճառով: Կրալին երկըրներում կրի մի մասը խմելու ջրի հետ խառնուելով՝ լառաջացնում է զոր. խոլերան համարեա միշտ ջրի ընթացքի համեմատ է լառաջ գնում և հնձում է հեղեղների բերած հողով ծածկուտծ տեղերի բնակիչներն ու խնայում հին երկըրների վրայ բնակողներին: Ծահճալին տեղերում շատ յաճախ պատահում է ընդհատական տենդ:

Մի քանի հիւանդութիւններ մշտական և սովորական են միալն մի քանի որոշ երկրներում, այն ինչ ուրիշ տեղե-

բում կարող են բոլորովին լալտնի էլ չլինել: Խտալիալում ընդհատական տենդը միշտ տևում է մի քանի գաւառներում (Պիեմոնտում, Լոմբարդիայում և այլն). մորթախտը (ուլկացրա) հազարաւոր զոհեր է տանում Լոմբարդեան ցածրավայրերում. զորն ու թանձրամտութիւնը (կրետինիամ), ալլանդակում է իտալական տմբողջ գաւառների և Նվիցարիալի բնակիչներին. ջղաձգութիւնները սովորական են նէտպում, Արքուցցիում, Կալուբրիայում: Միջին գարերում լնդացաւն (սկօրբյուն) ու քարաքոսը (լիանի) միշտ տևում էին Փարիզում: Հոլլանդիայում և Անգլիայում սովորական են լնդացաւը, պատագրան, շաքարալին միզահեղութիրնը, ախոնդացաւը (սոլսիմ) և քարաքոսի մի առանձին տեսակը: Լեհաստանում հերաթափութիւն (կոլտուն), Ասորիքում ժանտախտը, Հնդկաստանում խօլերան, ճափոնում ջղալին-խիբրը, Եգիպտոսում—տչքացաւը և ուրիշ հիւանդութիւններ, Ամերիկայում և լատկապէս Մեքսիկայում և Անտելեան-կղզիներում տարածուած է գեղնութիւն:

Մի քանի հիւանդութիւններ շատ հազիւ և կամ բոլորովին չեն պատահում որոշ տեղերում: Այսպէս, օրինակ, Խոլլը (զօլուխա) բոլորովին անյայտ է բեեռալին երկրների բնակիչներին, ժանտախտը երբէք չէ ալցելել Ամերիկա, ջըրվախութիւնը շատ հազիւ կամ համարեա երբէք չի պատահում Ալֆիրում, Եգիպտոսում, Ասորիքում և ուրիշ մի քանի երկրներում:

Պատառաքոյժներ.—Մարդուն հիւանդութիւնների են ենթարկում կամ բոլսերը և կտմ իրեն վրալ որպէս պատառաքոյժ ապրող կենդանիները: Մի քանի պատառաքոյժներ տարածուած են ամբողջ աշխարհիս վրալ, միւսներն ապրում են միայն որոշ տեղերում: Այս վերջին գէպքում չը պէտք է կարծել, թէ պատառաքոյժը կարող է ապրել միայն այն երկրի բնակիչների վրալ, ուր նա պատահում է, այլ միայն պիտի ենթագրել, որ միայն որոշեալ երկրներում կան նրա աճման նպաստաւոր հանգամանքներ:

Մի քանի մակարոյժներ պատկանում են ստորին գասա-

կարգերին. սրանք ծովաբոյսեր կամ սունկերն են: Նրանք պատճառում են քարաքոսի զանազան տեսակները, բոր և ուրիշ այսպիսի հիւանդութիւններ:

Ա.Հագին նշանակութիւն ունին մի քանի միկրոբները, որ տարափոխիկ հիւանդութիւններ են պատճառում, ինչպէս խօլերա, դեղնութիւն, տիֆ (ժանտատենդ), սիբիրական ախտ և ուրիշներ: Վերջին ժամանակներս այս ստորակարգ էակները բազմաթիւ և բազմակողմանի հետազօտութիւնների ենթարկուեցան, որև հրատարակուեցան շատ տշխատութիւնների մէջ, որոնցից մի քանիսը շատ թանկագին են: Գիտութիւնն այժմ աշխատում է պատառել հիւանդութիւնների պատճառները ծածկող քողը, և առ այժմ միայն այն է գտել, որ տարափոխիկ հիւանդութիւնները (խօլերան, թոքախտը, տիֆը և ալլն) յառաջանում են իւրաքանչիւրին յատուկ մանրօրգանիզմերից: Ալս, ի հարկէ, պէտք է բաւական ազգեցութիւն ունենայ այդ հիւանդութիւնները բժըշկելու, և մանաւանդ դրանցից նախազգուշանալու միջոցների վրայ: Ժամանակակից ամենանշանաւոր բակտերիագէտների կարծիքով առողջապահութիւնը պէտք է երկու նպատակի դիմէ: արգելել միկրոբներին մտնելու և տարածուելու մարդու օրգանիզմների մէջ և օրգանիզմը դարձնել նրանց կործանիչ ազգեցութեան հեշտութեամբ չենթարկուող:

Բարոյական ազդեցութիւնն.—Կասկած չկայ, որ հոգին ազդում է մարմնի վրայ: Յանկարծակի ուրախութիւնը, սուր և չնախատեսնուած վիշտը կալծակի արագութեամբ մահ են պատճառում. Սոֆոկլէսը հէնց որ իմացաւ, որ իւր ողբերգութիւնն առաջնութեան դափնին է տարել, իսկոյն և եթ մեռաւ, իսկ Տիագորոս մի բոպէ անգամ չապրեց, լսելով որ իւր երեք օրգին յաղթող են հանդիսացել ողիմպիական խաղերում: Միլանի 1848 թուի անձնատուր լինելու լուրը բնակիչների մէջ մի քանի յանկարծական մահ պատճառեց: Կարելի է բազմաթիւ փաստեր բերել, որոնք ապացուցանում են, թէ ուղեղն օրքան ուժգին, իսկոյն չբացատրուող, ազգեցութիւն է ունենում մինչև անգամ օրգանիզմի արտա-

քին մասի վրալ։ Մարիամ Անտուանէտտալի մազերը մահուան նախընթաց երեկոյին միանգամից սպիտակեցին։ Լուսնոտութիւնը (առլեքսիա), ջղաձգութիւնն և ուրիշ արդպիսի հիւանդութիւնները շատ անգամ երկիւղի ազգեցութեամբ են զարգացնում։

Հոգեկան վրդովմունքները շատ անհատների վրայ տարածուելով, կարող են բարորական համաճարակ յառաջացնել, Սրան վերաբերում են դիւամոլութիւնը (դեմոնոմանիա) և XVII դարում կախարդներին հալածելու ախտը։ Մորահարութիւն (տարանցիմ) համաճարակը, որ իւր զոհերն էր տանում ԺԵ և ԺԶ դարերում Խոտալիայում, մեծ մասամբ հոգեկան վրդովմունքներից էր յառաջանում, որովհետեւ հաստատապէս յայտնի է, որ մորը, մեզ համար ալդ անվնաս սարդը, չէր կարող ալդ յառաջացնել։ Մի քանի դիւնականներ հաստատում են, որ Տիգրելի կոչուած հիւանդութիւնը որ ալժմ Հարէշստանի նեղըների մէջ է նկատում, միևնոյն տեսակի տիստերից է։ Կարելի է ենթադրել, որ ինքնասպանութիւնը հետեւողութեան շնորհիւ համաճարակ է դառնում և չի կարելի չգովել այն թերթերը, որոնք վճռել են անձնասպանութեան մասին բոլորովին տեղեկութիւններ չտըպել, մասամբ որովհետեւ անձնասպանները արժանի չեն հերոսների կարգը դասուելու, մասամբ էլ, որ առիթ չտան ալդ միևնոյն դիւտաւորութիւնն ուրիշների գլխում էլ զարթելու։ Լուսնոտութիւնն ու հիպնոտիզմը նոյնպէս հիւանդութիւններ են, որ նեարդային կենդրոններից են ծագում։

Անհատական սկատառներ։ — Այստեղ առաջին տեղը պիտի գնել հասակը։ Մանկական հասակը պէտք է ոչ միայն պահպանէ ինչ որ սնունդը տալիս է, այլև նորն ստեղծէ, ուստի և նա ենթակալ է աւշալին սիստեմի, կաշու և սնընդառութեան հետ սաստիկ սերտ կազ ունեցող հիւանդութիւնների։ Այս պատճառով էլ տեսնում ենք, որ մանկական հասակում առաւելապէս պատահում են ջրջրուկ (զօլուցա), մորթի հիւանդութիւններ և ողնաթեքութիւն։ Այս հասակին նոյնպէս յատուկ է նեարդային սիստեմի հիւանդութիւն-

ների մի մասը, դեռ ևս չբացատրուած պատճառներով, մի քանի ուրիշ հիւանդութիւններ, ինչպէս կարմրուկը, շառացերմը (սկարլատինա) և աքլորխեզզը (կրցու): Հաստկաւրների համար անհրաժեշտ չէ, որ մուտքը ծախսից անցնի, այլ պէտք է միայն որ ամէն մի օրգանիզմի առձեռն կարողութիւնը և նրա միասը հաւասարակշռուին, որի մասին և պէտք է հոգ տանեն արեան զրջանառութեան և զնչառութեան սիստեմները: Այս պատճառով և՛ հաստկաւրների մէջ գըլիսարապէս ալս սիստեմներն են հիւանդանում, մանաւանդոր այս ժամանակ բուռն կրքերը վտանգի են ենթարկում մեր կեանքը: Ծերունիների մէջ, որոնց գործարաններն երկար ժամանակ աշխատելուց արդէն փչացած են, առաւելապէս պատահում են սրտի պայմաններ, զարկերակի վնասումն, ուղեղալին կաթուածք, թուլացումներ և ալլն:

Հասկանալի է, որ պարապմունքն էլ նախապատրաստում է որոշ հիւանդութիւնների: Օրուայ մեծ մասը փոշելից գործարաններում անցկացնողները նախապատրաստում են թոքալին հիւանդութիւնների, դարբինները, հիւսները և նաւակավարները, որոնք գլխաւորապէս վերին անդամներով են աշխատում, ենթակալ են սրտի և մեծ անօթների հիւանդութիւնների: աստիճանանաւորները լաճախ տանջւում են տեռատեսութիւնից, մանրադէտները՝ կարճատեսութիւնից, փողական գործիներով ածողները՝ թոքերի փքուռոյցքից: Եատ հեշտ է այս օրինակների թիւն աւելացնել:

Վնասակար ազգեցութիւն են ունենում և՛ սովորովթներն ու նորաձեռութիւնը: Նատ թժեզկներ ենթադրում են, որ ծխախոս ծխելը վնասակար է և նախապատրաստում է թոքախտով և ուրիշ ցաւերով հիւանդանալու: Առողջապահութեան հակառակ է սաստիկ հուպ տալ կուրծքը կորսէտի մէջ, ինչպէս ալս պահանջում է նորաձեռութիւնը: Վատ սովորութիւն է օրօրել երեխալին քնացնելու համար և պակաս վնասակար չէ նրան բարուրելը: Այս վերջինը խանդարում է կրծքի վանդակի և ստամոքսի նորմալ ընդլայնման:

Ալկոօլալին խմիչքների, թէլի, սուրճի չափազանց գործածութիւնը վատ հետևանքներ է ունենում:

Տարօրինակ և մինչեւ այժմ չբացատրուած մի երևոլիթ է ընիկ խառնուածը՝ (idiosincrasis): Այս խօսքով հասկանում են այն բոլորովին տարբեր ազդեցութիւնը, որ մի քանի որոշ առարկաներ անում են միայն մի քանի անհատների վրայ: Դրականութեան մէջ յալտնի է մի երիտասարդ, որ սաստիկ փխսում էր, երբ մի կտոր շաքար էր կուլ տալիս: Վարդի հոտը միշտ ջղաձգութիւն էր տռաջ բերում մի կնոջ մէջ: Յալտնի է նաև, որ կիտրոնի մի կաթել ընկնելով մի երեխալի մորթու վրայ սաստիկ մկնաձգութիւն է յառաջացրել: Ես ճանաչում եմ մի կին, որ սարդ տեսնելիս, հէնց շատ հեռուից էլ, այնպէս սաստիկ վախենում է, որ խելագարի պէս բղաւում է. ես ճանաչում եմ մի ուրիշ կին էլ, որին մի հատիկ ելակն անգամ սաստիկ բղկոց (կապեհնակ կոլիկ) էր յառաջացնում:

Ինիկ խառնուածքի մի առանձին և ցանկալի յատկութիւնն էլ այն է, որ մի քանի անհատներ որոշ հիւանդութիւնների պատճառաներին բոլորովին ընդդիմազգում են: Սրա բազմաթիւ օրինակները պատահում են կենդանական թագաւորութեան մէջ: Այսպէս՝ Վիրդինիա կղզու բոլոր խոզերը, բացի սևերից, սաստիկ հիւանդանում են, երբ ուտում են Lachantes tinctoria բոլոսի արմատները:

Սպիտակ մարդկիկը սևերից անհամեմատ աւելի են մեռնում. բայց այս մասամբ վերագրում են տեղալին կլիմալին բաւական ընտելանալուն. տարակոյս չկալ, որ սպիտակին նեղըից աւելի է ճահճալին տենդի ենթակալ: Տարբեր ցեղերը տարբեր կերպով են տանջւում խոլերալից:

Տեմպիրամենտն էլ մի քանի հիւանդութիւնների համար նախապատրաստող պատճառ է հանդիսանում: Առաջները սրան շատ մեծ նշանակութիւն էին տալիս, և մինչև անգամ կարծում էին, թէ տեմպիրամենտները կարող են ցեղերը միմեանցից տարբերելու յատկանիշներ ծառալել. իսկ այժմ գիտենք, որ միենոյն ազգի և մինչեւ անգամ միե-

նոյն գերդաստան անդամները կարող են տարբեր տեմպերամենտ ունենալ, ինչպէս և տարբեր ցեղերի անհատներ երեխն կարող են միևնուն տեմպերամենտին լինել:

Արիւնալին (սանգվինիկ) տեմպերամենտի մարդկանց մէջ արեան շրջանառութեան սիստեմը գերակշռող նշանակութիւն ունի: Ալսպիսի մարդիկ պարարտ են լինում, ամուր կազմուածք ունին, շատ սիրում են լու ուտել, և անտարբեր չեն սիրոյ հաճուքներին: Սրանք արի, նախաձեռնող, քաջ զինուորներ են: Սրանք ուրիշներից աւելի ենթակալ են արեան շրջանառութեան սիստեմի հիւանդութիւնների: Ալսպիսի տեմպերամենտի նշանաւոր օրինակ կարող են լինել Մարկոս Անտոնիոս, Հենրիկոս IV, Միքայէլ (Լիմֆատիկական) տեմպերամենտ ունեցող մարդիկը քնքոյշ և կակուղ մորթի, թոյլ մկանունք ունին և գիրանալու տրամադիր են: Արեան շրջանառութիւնը և շնչառութիւնը յամը են կատարուամ. արիւնը առատ է սպիտակ գնդակիկներով: Նրանք թոյլ և աղքատ երևակալութիւն ունին, նրանց պակասում է մտքի աշխուժութիւն, բայց հաստատուն և ազնիւ բնաւորութիւն ունին: Նրանք ենթակալ են մորթի և լորձիւնոտ թաղանթի և մանաւանդ ջրջրուկ հիւանդութիւնների: Նեարդարին տեմպերամենտի մարդիկ նիշար են, ամուր մկանունքներով, գժգոյն և երեսի նուրբ գծագրութեամբ, բայց նրանք չեն կարող երկար ժամանակ անընդհատ աշխատել, միևնուն ժամանակ սաստիկ զգայուն և զըննող են: Նրանք ենթակալ են նեարդարին սիստեմի հիւանդութիւնների, ինչպէս ուշաթափութեան, ջղաձգութեան և խելագարութեան: Վերջապէս՝ մաղձալին տեմպերամենտի մարդիկ գժգոյն և երեխն դեղնաւոն երես, նիշար և կոպիտ անդամներ ունին. մարսողութեան գործարանները և լեարդը սաստիկ գործունեալ են, աչքերը սև և արտալայտիչ են. դէմքը խիստ և դաժան: Սրանք մեծամիտ են և մեծ խելքի տէր: Սա մեծ զօրապետների, խոր մտածողների տեմպերամենտն է, այն բոլորի, որոնց յատուկ է մեծ մոլութիւններ և կամ մեծ արժանաւորութիւններ: Սրանք են-

թակայ են մարսողութեան գործարանի, մանաւանդ լեարզի հիւանդութիւնների: Այս տեմպերամենտի տիպերից նշանաւոր են. Աղէքսանդր Մեծը, Յուլիոս Կեսար, Բրուդոս, Մահմէտ, Կրօմվէլ, Պետրոս Մեծ և Նապոլէոն I:

Զ.

ՄԱՐԴՈՒ ՀՈԳԵԲԱՆԱԿԱԾՆ ՍՈՒՆՉՆԱՑԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մտաւոր առանձնայատկութիւններ.—Խելքը մարդկանց մէջ տարբեր աստիճանների է զարգացած: Վալրենինների, ինչպէս և՝ նախնական մարդկանց մէջ նա թագնուած դրութեան մէջ է գտնւում: Մի նշանաւոր դիտող Բուշմէնների մասին խօսելով նկատում է, թէ այս անհատները երբէք ցոյց չտուին թէ արգեօք մտածելու ընդունակ են թէ ոչ: Մի ուրիշ ճանապարհորդ էլ Տասմանցիներին նկարագրելով ասում է, թէ սրանք բոլորովին խելք չունին: Կօրօադների (Բրազիլիայում) մէջ իզուը էին պտրում բոլս, կենդանի և այլ վերացական մտքեր արտայալտող բառեր: Բրազիլիայի հնդիկները երկուսից աւելի չեն կարողանում համարել: Ոչ մի աւտրալիացի չի կարողանում մինչև չորսը համրել. հինգը նրանց մեծ թիւն է: Դոմարիացիներն երեքից աւելի չեն հաշւում. կամենալով «չորս» արտայալտել, նրանք ձեռների օգնութեան են գիմում. իսկ երբ ուզում են հնդից աւելի հաշուել, բոլորովին շփոթում են: Ուրիշ վալրենիներ ցանկանալով «հինգ» ասել, ասում են ամբողջ ձեռքը:

Նախնի վալրենիներն այժմեաններից աւելի խելացի չեն եղել: Գիտենք, որ նրանք ապրում էին ալրերում, գործ էին ածում քարէ, ոսկի կամ եղիքերուի գործիներ, բայց մետաղներ չէին ճանաչում. նրանք նաև ոչ մի գիր, մինչև անգամ նշանագիր չեն ունեցել:

Միւս կողմից, մինչև անգամ կենդանիներն ալնպիսի բաներ են անում, որ չի կարելի բնագրում համարել: Մի բնապատմարան կամենալով արգելել մըջիւններին մի պլ-

տուղներով բեռնաւորուած ծառ բարձրանալու, բնին, բաւական բարձրից, թռչունի սոսինձ քսեց։ Նատ մըջիւններ այնտեղ սատկեցան, միւսները լետ գարձան՝ երբ սոսնձին հասան։ Բայց մի անգամ նա նկատեց, որ մըջիւնների մի ահագին բազմութիւն, բերաններին մի մի աւազ բռնած՝ գընում է դէպի վտանգաւոր տեղը. մի քիչ լետոյ սոսինձի վըրալ մի շաւիդ էր ձգուած, որի վրալով մըջիւնները անվնաս կարողանում էին բարձրանալ ծառը։

Բարձր կենդանիներից կապիկները մահակ են գործ ածում, թշնամու վրալ քարեր և փայտեր են ձգում և կլոր քարեր գործ ածում ընկոյզ կոտրելու համար։ Նիմպանզէն իրեն համար հիւղ է շինում, որ մի քանի վալրենիների խըրճթից շատ պակաս չէ։ Նան խելքը բոլորին յալտնի է։

Բայց ինչպիսի տարածութիւն է բաժանում մի կողմից կենդանիներին վալրենիներից և միւս կողմից այս վերջիններին քաղաքակրթուած մարդկանցից։ Ո՞րքան տարբերութիւն կալ նախնական մարդկանց աղքատ խելքի և մի որևէ է նապոլէօն Լի, Կիւվիէի, Դարվինի, Հումբոլդի մտաւոր ուժի մէջ։

Մի քանի մարդկի մի առանձին, ոչ սովորական տաղանդ են ունենում մի որևէ է բանի համար, օրինակ՝ մատեմատիկալի, լեզուագիտութեան, երաժշտութեան, շախմատ խաղի և ալլն. շատ անգամ ալսպիսի տաղանդը երևան է գալիս և զարգանում է արդէն մտնկական հասակում։

Հեզու. — Մարդուն կարելի է խօսուն կենդանի կոչել, որովհետեւ միայն նա յօդաւոր և բառերով հարուստ լեզու ունի։ Սակայն անհրաժեշտ է նկատել, որ վալրենիների լեզուն սաստիկ պարզ և աղքատ է։ Նրանց ամենազարգացածները, միայն նրանք, ամենից աւելի աչքի ընկնող բնական իրերն և առօրեալ կեանքի հանգամանքներն բացատրող խօսքեր գիտեն։ Անչափ մեծ է լեզուի վերաբերութեամբ քաղաքակրթուած մարդուն կենդանուց բաժանող տարածութիւնը, բայց մեծ է նաև յալտնի ճարտասանին մի որևէ չալրենուց բաժանող անջրապետը։

Ազգերի մարդաբանական ուսումնասիրութեան ժամանակ, շատ օգտաւէտ է լեզուի ցոյց տուած առանձնարատկութիւններն էլ ՚ի նկատի ունենալ. և երբ մենք տեսնում ենք, որ երկու ազգ հակառակ իրենց Փիզիքական կազմութեան, լեզուով նման են, հետևացնում ենք, որ այս երկուսն էլ մի ընդհանուր ծագում ունին: Սակայն այս առանձնայատկութեան չափազանց մեծ նշանակութիւն չպիտի տալ, որովհետեւ գիտենք, որ դարերի ընթացքում բարբառները փոփոխութեան և կերպարանափոխութեան են ենթարկում, մինչդեռ կազմուածքն ալնպէս դանդաղ է փոփոխուում, որ մի ժամանակ անփոփոխէլի էր համարում:

Երբ երկու ցեղ ապրում են միևնուն երկրում, և միմեանց խառնուում, այդ ժամանակ Փիզիքական տիպը փոխուում է զուգաւորութեան ուժի ուղիղ համեմատութեամբ, բայց լետով խառնուրդ սերունդը հետզիւտ դառնում է այն մայրական ցեղին, որը թուով աւելի մեծ էր: Այդ միևնունը միշտ չի պատահում երկու լեզուի վերաբերութեամբ, որովհետեւ կարող է կորչել մեծամասնութեան լեզուն և ապրել փոքրամասնութեանը: Այս պատճառով էլ, կարող է պատահել, որ ցեղը կորցնէ իւր լեզուն, ընդունելով ուրիշ ցեղի լեզու, միանդամալին ամբողջովին պահելով իւր Փիզիքական տիպը, ինչպէս և' մի քանի անգամ, պատահել է պատմական զրջանում:

Թէև լեզուաբանութիւնը մարդաբանի համար առաջնակարգ կարևորութիւն չի ներկայացնում, բայց և այնպէս՝ նա իւր ծառայութիւնը մատուցել է ցեղի պատմական ուսումնասիրութեան ժամանակ: Այս գիտութեան օգնութեամբ կարելի է ցոյց տալ այն ճանապարհը, որ երկար դարերի ընթացքում անցել է ազգը, նաև ճանաչել այն ազգութիւնները, որոնց հետ զփուել է:

Մի քանի գիտնականներ լեզուն մարդկային սեռը դասկարգելու միակ հիմունքն են ընդունում, հաւատացնելով՝ որ լեզուներն աւելի են ապրում, քան թէ կմախքները: Սա չափազանցութիւն է: Նեղը կարող է մի քանի ամիսների

ընթացքում անդղիերէն խօսել սովորել, մի քանի տարիների ընթացքում մոռանալ իւր սեպհական լեզուն, բայց նրա գանգը շտա սերունդներ անցնելով, էլի ները գանգ կը մնար:

Նիկարագուի և Եկվատորի բնակիչները մեծ մասով խառնածիներ են (մոլար): Բայց արդեօք մինը կարող է ապացուցանել, որ նրանք կէս ները երէն, կէս սպաներէն են խօսում: Ալսպէս՝ թէև լեզուն մարդաբանական մի նշանաւոր տարը է կազմում, այնուամենայնիւ չի կարելի նրանդասակարգութեան միակ հիմունք համարել:

Հետաքրքիր է, որ մի քանի ժողովրդների մէջ կանալք մարդկանցից տարբեր բարբառով են խօսում: Ալսպէս են ամերիկական մի քանի ժողովուրդները, յատկապէս փոքր Անտիլեան կղզիների բնակիչները: Որոշքօրը ենթադրում էր թէ հեռու անցեալում կարաբըները տիրել են փոքր Անտիլեան կղզիները, սպանել բոլոր տղամարդկանց և թողել միայն կանանց, որոնք և՛ հաւատարիմ են մնացել իրենց սկըզբնական լեզուին: Բայց Շտոլը ապացուցեց, որ այդ կարծիքը սխալ է, թէև աւելի ճիշտ բացատրութիւն չկարողացաւ տալ: Ալս միւնոյն երեսովթը նկատուել է Բրազիլիայի գուեակուրների մէջ, իսկ Հերոդոտի ասելով՝ մի այդպիսի բան նըկատուած է և Յոնիացիների մէջ: Սակայն մեր մէջ էլ կանալք ուրիշ ոճեր և խօսքեր են գործ ածում սերական կեանքն արտայալելու, տղամարդիկ ուրիշ:

Գրութիւն. — Գրութիւնը միայն մարդուն է ծանօթ և կասկած չկալ, որ մարդկութիւնը մասսամբ իւր արագ յառաջադիմութիւնը դրան է պարտական: Բայց սա մի բնածին յատկութիւն չէ, — սա մի արուեստ է, որ ամէն մարդ պարտաւոր է սովորել և հետզհետէ կատարելագործել: Նախնի ժողովուրդներին յալտնի չէր այդ: Ըստ երեսովթին, մարդկային ոչ մի ցեղ քարի դարում չէ կարողացել դրել անցքերը մինչև անգամ նշանագրերի ամենակոպիտ սխտեմով և վալրենիներին ամենից աւելի զարմացնողն ալն է, թէ ինչպէս եւրոպացիները հաղորդում են միմեանց իրենց մտքերը՝ մի թղթի կտորի վրայ ճզմզած սև գծերի միջոցով: Նիւսի-

սալին Ամերիկայի Մինատարուսները տեսնելով, որ Կատլինն ուշադրութեամբ լրագիր է կարդում, չգիտէին ինչ մտածէին, և վերջ ի վերջու այն եղրակացութեան եկան, որ սա աչքերի հիւանդութեան գէմ համալիլ է, և նրանցից մինը մեծ գնով գնեց նրանից լրագիրը։ Աֆրիկալում, ուր քրմերն ու հոգեհարցուկները փալտի կտորի վրայ գրում են մի որևէ է աղօթք, ջրով լուանում և ալդ ջուրը տալիս հիւանդին խմելու, սաստիկ տարածուած է գրուած բաները իրբև գեղ գործածելու սովորութիւնը։

Արևմտեան աֆրիկացիների համար մի կտոր գրուած թուղթը մի զարհուրելի բան է համարւում։ Բուխգոլցը, մի նեգր հիւանդի բժշկելիս, պատահաբար մի կտոր թուղթ է վալր ձգել։ Եւ երբ հետևեալ օրը կամեցել է ալցելել իւր հիւանդին, իմացել է, որ սա փոխել է իւր բնակարանը վալր ձգուած թղթով գիւթուած համարելով այն։

Հետևեալ անեկտուը ցոլց է տալիս, թէ գրութիւնը որքան անհասկանալի է շատ վալրենիների։ Մի քարոզիչ մի վալրենի է ուղարկել իւր ընկերի մօռ, լանձնարարելով նըրան տանել մի քանի հաց և մի նամակ, որի մէջ նշանակուած է եղել հացերի թիւը։ Վալրենին կերել է հացերից մի քանիսը, իսկ մնացածը նամակի հետ լանձնել։ Գողութիւնն իսկոյն բացուել է։ Մի ուրիշ անգամ էլ նրան լանձնարարում են չորս հաց տանել։ Նա երկուան ուտում է, նախապէս թաքցնելով մի քարի տակ՝ նամակը, որ պիտի լանձնէր հացի հետ, ենթադրելով, որ այլ ևս գողութիւնը չպիտի բացուի, որովհետեւ նամակը չէ տեսել, որ ինքը կերել է հացից։

Գրութիւնը միանգամից, այնպէս ինչպէս ալժմ գիտենք, չէ ստեղծուել. այլ գարերի ընթացքում կամաց կամաց կոտարելագործուել է։ Մի քանի վալրենի և կիսակիրթ ժողովուրդների մէջ ալժմ էլ գտնում ենք այն՝ նախնական դրութեամբ։ Առաջին նշանները, որոնցով մարդը հաղորդում էր ուրիշներին իւր գաղափարներն կամ նպաստում իրեն մի քանի միշելու, կազմուած էր զանազան ձևով շարուած քարերից,

ծառերի վրայ արուած կտրուածքներից և կամ հանդերձի գանգան մասերի վրայ ձգուած հանգուստներից: Այս վերջին միջոցը գեռ մինչև հիմայ էլ մնացել է, և մենք տեսնում ենք, թէ ինչպէս թոլլ լիշողութեան տէր մարդիկ հանգուստում են իրենց թաշկինակների ծայրը՝ որպէս զի լիշենցանկացած բանը և կամ չմոռանան այն անելու: Յետոյ ըսկըսել են առարկաները պատկերացնել թէկ կոպիտ, բայց և այնպէս հասկանալի ձեւրով, և ամէն մի ձեւին նշանակութիւն են տուել: Ալսպիսով ստեղծուել է նշանագրերի գրութիւնը: Ապա նշանագրերից անցել են ալբուրէնին, որի մէջ իւրաքանչիւր նշանը իւր հնչիւնն ունի որը և միջոց է տուել վանկեր և բառեր կազմելու: Ալժմս տառերը հնչիւն ունին, մինչդեռ առաջ նրանք միայն նշաններ էին:

Ալսպէս, օրինակ, Օ արևել նշանն էր, և մենք գտնում ենք այս տառը փիւնիկեցիների օվ, լատինացիների sol, Փրանսիացիների soleil, գերմանացիների sonne, ռուսների солнце խօսքերի մէջ:

Զգացմունք եւ նրա արտայայտութիւնը.—Ամուսնութիւնը և որդիների ու ծնողների միջև ազգակցական յարաբերութիւններն այնքան բնական և ակներև են թւում մեզ, որ մենք հակուած ենք նրանց մարդկալին սեռի էական առանձնալատկութիւն համարելու: Մինչդեռ բոլորովին ալգպէս չէ: Ստորին ցեղերի մէջ ամուսնութեան կարգը չկայ. ճշմարիտ սէրը նրանց բոլորովին անլայտ է և ամուսնութիւնը, իւր ամենաստոր ձեռվ, բոլորովին չի կապում նրանց միմեանց հետ: Հոտտենդուներն այնքան սառն և անտարբեր են միմեանց, որ մինչև անգամ կարելի է մտածել, թէ նրանց մէջ սէր չկայ: Մի քանի վայրենիներ խօսք չունին սիրելի կամ թանգագին գաղափարները արտալալտելու: Եարբիրում (կենդրոնական Աֆրիկալում) բնիկներն ամուսնանում են կատարեալ անտարբերութեամբ. սիրու զգացումը բոլորովին մաս չունի այս հարցում: Մանտիգոյցաների մէջ ամուսնութիւնն ստրկութեան սիստեմի վերածած մի ձեւն է: Հնդկաստանում կիտակոնգա բլուրների բնակիչներն ամուս-

նութեան վրալ նալում են ուղղակի որպէս մի կենդանական և ձեռնառու գաշինքի վրալ. նրանք բոլորովին գաղափար չունին ոչ քնքութեան և ոչ ազնիւ անձնուիրութեան մասին: Պարագավալի Գաֆկուրների մէջ ամուսնական կապերն այնքան թոլլ են, որ երբ ամուսինն ու կինը միմեանցից դժգոհ են լինում, բաժանում 'են առանց մի որևէ է ձեականութեան:

Որդեսպանութիւնը մի շատ անսովորական երևոլթ է վալրենիների, օրինակ՝ Հիւսիսալին Ամերիկալի Հնդիկների, ինչպէս և Հոտտեննդոտների մէջ, որոնք բոլորովին լանցանք չեն համարում ալդ: Այս անդժութեան գլխաւորապէս զոհում են աղջիկները, և երբ կինը երկուորեակներ է ծնում, համարեա միշտ թոլլ կազմուածք ունեցողը կենդանի ժադում է: Մաօրիօնների և ուրիշ Պօլինեզիացիների մէջ էլ որդեսպանութիւնը սովորական երևոլթ է:

Որդիների սէրը դէպի իրենց ծնողները նոյնպէս միատեսակ և մշտատե չէ բոլոր ժողովրդների մէջ: Հոտտեննդոտների մէջ երբ մարդը կամ կինն այն հասակն են առնում, որ այլես անկարող են աշխատել և մի որևէ օգուտ բերել, նրանց հեռացնում են մի որ և է յետ ընկած խրճիթ, տալիս են մի քիչ կենսական մժերքներ և այնուհետեւ բոլորովին անխնամ ժողնում, այնպէս որ, նրանք այնտեղ մեռնում են ծերութիւնից, քաղցից և կամ վալրենի կենդանիների կերակուր են դառնում: Ֆիդջիացիների մէջ հալրասպանութիւնը լանցանք չէ համարում, ծնողներն սովորաբար սպանում են որդիներից: Երբեմն ծերունիներն իրենք են գալիս այն եղբակացութեան, որ մեռնելու ժամանակն է. երբեմն էլ որդիներն են ցոլց տալիս ծնողներին, որ իրենց ըեռ են դարձել:

Այս բոլոր փաստերը կարող էին անհաւանական թուալ, եթէ որ վստահելի ճանապարհորդներ հաստատած չլինէին: Այս փաստերն ցոլց են տալիս թէ ինչպիսի վիչ է բաժանում վալրենու մարդուն քաղաքակրթուածից: Ամուսնական, ծնողական և որդիական սէրը—քաղաքակիրթ մարդու ամենատղնիւ և միանդամալն իսկական զգացումներն են, մինչդեռ

շատ մարդիկ սրա վերաբերութեամբ կենդանիներից էլ ստոր
են կանգնած:

Թէ որքան ստոր է կանգնած մարդը իւր մօտիկին սի-
րելու վերաբերմամբ՝ ապացուցանում է մարդակերութիւնը,
որ կատարում էր հին ժամանակներում և այժմս էլ կա-
տարում են մի քանի վայրենի ժողովուրդներ: Ստրաբոնի ժա-
մանակ իրանդացիները մարդակեր էին և իրենց հարազատ
ծնողներին ուտելը նրանց մէջ գովելի վարմունք էր համար-
ում: Սուրբ Խերոնիմը պատմում է, որ թէև շոտլանդացի-
ները խոզեր և եղներ էին պահում, բայց և այնպէս մարդու
միս էլ էին ուտում, համեղ պատառ համարելով երեխաների
յետին մասը և կանանց կուրծքը: Նատ հին ժամանակնե-
րում մարդակերութիւնն Խտալիալումն էլ սովորական երե-
ւոյթ է եղած: Հէնց այժմս էլ այդ սաստիկ տարածուած է
զանազան տեղեր: Ֆիդչիացիների մէջ այդ այնքան արմա-
տացել է, որ մի որ և է համեղ կերակուր գովելիս՝ սասում
են. «Մարդու դիակի պէս համեղ է»: Նրանց ճաշակն այնքան
զարգացած է, որ նրանք արհամարհում են սպիտակների
միսը և կանանց միսը գերազասում տղամարդկանց մսից:
Նրանք այնքան սիրում են մարդու միսը, որ միայն տղա-
մարդկանց են թոյլ տալիս այն ուտելու, ասելով, թէ կանայք
անարժան են այն անուշ անելու: Երբ թագաւորը խնջոյք է
տալիս, կերակուրներից մինն անշուշտ մարդու մսից պիտի
պատրաստուած լինի: Սրա համար գործ են ածւում կուրի
դաշտում սպանուած թշնամին, ինչպէս և գնուած և գերա-
ցրած ստրուկները:

Հրոյ Երկրի բնիկները նոյնպէս մարդակերներ են: Եւ
որովհետև նրանք շարունակ պատերազմում են հարնան ժո-
ղովրդների հետ, ուստի և ոչ մի պատահար առանց կուրի
չի անցնում, և յաղթուածները, եթէ դեռ ևս մեռած չեն,
մորթում և ուտում են յաղթողներից: Կանայք ուտում են
ձեռներն ու կուրծքը, տղամարդիկն ոտները, մնացածը ձը-
գում են ծով: Նիստ ձմրան ժամանակ, երբ ուտելիքի պա-
կասութիւն է զգացւում, նրանք ընտրում են ամենապառաւ-

կնոջը, սպանում և ուտում։ Երբ նրանց հարցրել են թէ ինչու շուն չեն մորթել, նրանք պատասխանել են, թէ շները կարող են իրենց օգտակար լինել:

Աֆրիկական ֆանները մարդու մսի ամենաեռանդուն սիրահարներից են։ Սրանք ասում են թէ դա սաստիկ համեղ է և հիւթալիութեամբ կապկի միսն է լիշեցնում։

Ուս օրինակների թիւը կարելի էր սաստիկ մեծացնել, բայց աւելորդ է։ Ընթերցողն առանց դրան էլ արդէն կարողացաւ հաւաստիանալ, որ վալրենուն բոլորովին օտար են տղնիւ զգացումներ։

Վալրենիները մարդու միս ուտում են սաստիկ տարբեր պատճառներով.

1) Կարիքից ստիպուած, ինչպէս օր. Խաղաղ ովկիանոսի կղզիներում և Աւստրալիայում, ուր ուտուող կաթնասունները շատ քիչ էին կամ են։ Քաղցած աւստրալիացիներն սպանում են կանանց, որպէս զի նրանցով լազեցնեն իրենց քաղցը, և երբ այս նրանց չի կտացնում, միևնույն նպատակով հանում են և՛ մեռածների դիակները։ Մարդակերութիւնը տարածուած է ամբողջ Մելանեզիայում։

2) Կրօնական շարժառիթով.—Նախնական կրօնները սըրբագործել էին մարդակերութիւնը, եւ սրտ այս տեսակի օրինակները պատահում են նոր-Զելանդիայում, Տայիտում և առաւելապէս Մեքսիկայում։

3) Նախապաշտարմունքից.—Մի քանի վալրենիներ ենթադրում են, որ օրինակ սիրաը արիութիւն է տալիս, աչքը՝ տեսութեան սրութիւն, սերական անդամները՝ սերական կարսդութիւն։ Աֆրիկայում, Աւստրալիայում և Պոլինեզիայում սիրաը զօրապետների և քրմերի համեղ պատառն է, նոր-Զելանդիայում առաւելութիւն են տալիս ձախ ականջին, որը հոգու կայանն է համարւում։

4) Որդիական լարգանք.—Այս զգացմունքը պատճառ է լինում մարդակերութեան, որովհետեւ որդիները մտածում են բարելաւել ծնողների դրութիւնը, այս միջոցով ուղարկելով նրանց միւս աշխարհ։ Այս նկատուել է Սումատրայի Բատ-

տասների, Մարկօ-Պոլօի ժամանակ Հնդկաստանի Անգլինամ թագաւորութեան և Հերոդոտի ժամանակ՝ Մեսսանէտների մէջ:

5) Պատերազմում.—Սա մտրդակերութեան ամենասովորական և ամենաանգութ ձեւն է. շատ անգամ վալրենիները պատերազմ եմ հրատարակում իրենց հարևան ժողովուրդներին սոսկ մարդկալին մսով կշտանալու նպատակով:

6) Քաղցրասիրութիւնից.—Շատ վալրենիներ մարդու միւր շատ քաղցր պատառ են համարում, առանց որին չեն կարող մի խնճոյք անցկացնել:

7) Իրաւաբանական մարդակերութեան կամ թափուած արեան և կամ կատարուած յանցանքի վրէժխնդրութեան համար կատարուած մարդակերութիւն: Ալսպէս, Բատրասների մէջ ամուսնական անհաւատարմութիւնը, գիշերային գողութիւնը, դաւաճանութեամբ քաղաքի, գիւղի, կամ խրճիթի վրայ յարձակութիւն նրանով էր պատժվում որ մեղաւորին տալիս էին ժողովուրդին ուտելու: Մելանեզիալի Բուլ կղզում յանցաւորներին ուտում են—մի շատ պարզ միջոց բանտերը լցուելուց ազատելու:

Զգացումը մարդկալին բոլոր ցեղերն էլ միատեսակ են արտայատել: Ըստ երեսոյթին զգացման արտայայտութեան զանազան ձևերը հետեւեալ երեք սկզբունքով են կատարուած:

Առաջինը սովորութիւնների գուգորդութեան սկզբունքն է, որի պատճառով մինը յառաջացնում է միւսը, մինչև անգամ երբ սա աւելորդ է լինում: Ով արել է տռաջին քալլը, նա շարունակում է քալլել, չգիտենալով և չուզենալով այդ անել: Ով հաւանում է մի որև է կարծիք, նա յաճախ անդիտակցօրէն գլուխը շարժում է: Եթէ մինը շփոթւում է, ծոծրակն է քերում, կարծես ցանկանալով ազատուել ալդտեղի ծանր զգացումից. ուրիշներն ամաշելիս տրորում են աչքերը: Տեսնելով մի որև է սարսափելի վարմունք, մարդը ծածկում է աչքերը և յետ է դարձնում երեսը. յետով այդ լիշելով՝ մինչև անգամ մթութեան մէջ, նա անում է այդ միենովն շարժումները, որոնք ալժմ բոլորսին անօգուտ են: Կամենալով լիշել մի որև է անուն, մարդ երեմն առաստաղին է նայում,

թէեւ ալդ անունն ալդտեղ երբէք չէ գրուել։ Այս սկզբունքը կատարում է ոչ միայն մարդկալին բոլոր ցեղերի, այլև կենդանիների մէջ։ Ալսպէս՝ երբ շունն ուզում է պառկել, պտաւում է իւր շուրջը, որ իւր համար անկողին պատրաստէ. բայց ալս միւնոյնն նա անում է և՛ հարթ տեղում, ուր ալս շարժումը բոլորովին տւելորդ է։ Շներն ու կատուները հող են ածում իրենց կղկղանքների վրայ, առաջիններն առաջին ոտներով, երկրորդները՝ լետին. բայց դրանք անում են ալդ միւնոյն շարժումները և ալնտեղ, ուր հողի նշով անդամ չկայ։

Երկրորդը՝ անտիտեղի կամ հակադրութեան սկզբունքն է. հակառակ զգացմունքների համար մենք գործ ենք ածում հակառակ շարժումներ։ Ուրախ գրութեան ժամանակ մարմինն ձգուած է լինում, գլուխը բարձր է բռնւում, աչքերը լայնացած, ճակատը պարզուած։ ալս արտայալտութիւնը բոլորովին հակառակ է վշտացած մարդու արտայալտութեան, որ գտնւում է ծանր հոգօի և ճնշման տակ։ Բոլոր ժողովուրդներն էլ բոլորովին տարբեր շարժումներով են արտայալտում այսոն և ոչը։

Այս սկզբունքը նոյնպէս գոյութիւն ունի կենդանիների մէջ և շունը կարող է իրրեւ մի լաւ օրինակ ծառալել մեզ։ Երբ սա կատաղած ուզում է լարձակուել մի մարդու վրայ, որին օտար է համարում, նա ուզզուելով՝ ուզդակի նրա վրայ է վազում. նրա գլուխը փոքր ինչ վեր է բարձրացրած լինում, կամ փոքր ինչ կախ ձգած. պոչը ցցուած է օգում, տկանջները սրուած են։ Ալժմ ենթադրենք, թէ շունը լանկարծ ճանաչեց, որ ալդ մարդը իւր տէրն է, և ահա կը տեսնենք, թէ ինչպէս նա բոլորովին և իսկոյն փոխւում է։ Փօխանակ արագ մօտենալու, նա կանգ է առնում, պառկում է, բոլորովին կորանում է. պոչը քաշ է ձգում և թաւալում գետնին մէկ մի, մէկ միւս կողմը. ականջները լետեն ընկնում։

Երբորդ սկզբունքը հիմնուած է նեարդալին սիստեմի անմիջական կամքից և մասամբ էլ սովորութիւնից անկախ,

ազդեցութեան վրալ: Ալսպէս մենք վախից դողում ենք, ցաւի կամ երկիւղի ժամանակ մեր մորթին ծածկում է առատ քրտինքով:

Զգացումն արտայտելու զանազան ձևերի մէջ ուշադրութեան արժանի է լացը, ծիծաղը և կարմրելը:

Նորածինները բդաւում են, բայց լաց չեն լինում, ալսինքըն նրանց աչքերը արցունքով չեն լցում: Խոկական լացն երեւում է տարբեր հասակներում, երբեմն արդէն երեք շարաթական, երբեմն միայն չորս ամսական ժամանակ: Վայրենիները նման են երեխաներին. նրանք դատարկ բանի համար լաց են լինում և ամենաթեթև զուարճութիւնը բաւական է նրանց լացը ծիծաղի փոխելու: Մի նոր-զելանդացի պետ աղի արտասունքներ էր թափում նրա համար, որ նաւաստիներն ալրոտել էին նրա սիրած թիկնոցը: Հրու Երկրի բնակիչները հեկեկալուց անմիջապէս փոթկոցին են անցնում, երբ մի զուարճալի բան են տեսնում: Մինչև անգամ Եւրոպայի բնակիչներն էլ այս կողմից տարբերում են միմեանցից. օրինակ ասում են, թէ անգլիացիները միւս աղգերից աւելի հազիւ են լաց լինում: Յայտնի է նաև երկու սեռի մէջ եղած տարբերութիւնը: Կինը տղամարդից աւելի հեշտութեամբ է արցունք թափում, որ շատերի կարծիքով, միշտ պատրաստի է ունենում: Ցնորուածները նոյնպէս լաց են լինում ամենաչնչին, իրական կամ երևակայական պատճառներով: Շատերը հարբելիս միշտ լաց են լինում:

Սակայն լացը միշտ Փիզիքական կամ բարոյական տանջանքի արգասիք չէ. ուրախութիւնից էլ են լաց լինում. ինչպէս և սաստիկ ծիծաղից և հազից:

Ծիծաղը սովորաբար ուրախութեան նշան է համարւում. և ինչպէս որ մարդկալին բոլոր ցեղերը ցաւից լաց են լինում, ալնպէս էլ ծիծաղում են, երբ ուրախանում են: Երեխաները ծննդեան տուաշին օրերը չեն ծիծաղում և ոչ էլ ժամում. առաջին ծիծաղն երևում է՝ երբեմն վեց շաբաթական, երբեմն էլ միայն հինգ ամսական հասակում: Երբ մարդ լաւ է տրամադրուած, կարող է ամենազատարկ

սպատճառով էլ ծիծաղել։ Անզուսալ ծիծաղն աւելի կոպիտ մարդկանց է լատուկ։ Քաղաքակրթուած մարդը քիչ է ծիծաղում, բայց լաճախ ժամանմ է։ Մի քանի ցնորուածներ շտրունակ, տռանց մի լայտնի պատճառի ծիծաղում են։ Վալրենիները ուրախութիւնից ծիծաղում են, և միւնոյն ժամանակ թռչկոտում, բղաւում, ձեռքերով փորին խփում և ուրիշ տարօրինակ շարժումներ անում։ Չատ ցեղերի մէջ նկատուած է, որ ծիծաղելիս աչքերը արտասուբով լցում են։

Կարմրելը մարդու զգացման արտալայտութեան ամենալարնորոշ ձեն է։ Կանալք աւելի հեշտութեամբ են կարմրում քան թէ տղամարդիկ։ Դլխաւորապէս կարմրում են երեսը, ականջները և վիզը, ալսինքն ամենքին տեսանելի մտսերը։ Կարմրելը մարդկալին բոլոր ցեղերին էլ լատուկ է, բայց մթնագոյն ցեղերի, ինչպէս նեղըների և աւստրալիացիների վրայ գժուար է նկատուում։ Բացի մեր ցեղից, այդ գրականապէս նկատուած է շինացիների, պոլինեզիացիների, Նիւսիսալին Ամերիկալի հնդիկների և ուրիշ շատ ցեղերի վրայ։ Ամօթից կարմրողը սովորաբար խոնարհեցնում է աչքերը և գարձնում երեսը և կամ աշխատում է ծածկել այն ձեռքերով։

Զգացումների արտալայտութեան մասին խօսելով՝ չը պէտք է ուշադրութիւնից թողնել պարերը, որոնք, վալրենիների համար, ինչպէս մեզ, մի հասարակ առիթ չեն երկու սեռը մօտեցնելու, այլ մի լուրջ և կարեւոր գործ։ Ուրբերտսոնն ասում է, թէ սա նրանց համար մի այնպիսի զրադմունք է, որ մտնում է նրանց հասարակական և անհատական կեանքի բոլոր գործողութիւնների մէջ։ Եթէ Ամերիկայում երկու ժողովուրդ պէտք է միմեանց հետ լարաբերութիւն սկսեն, նրանցից մինի դեսպանները մօտենում են, հանդիսաւոր պար են սարքում և առաջարկում calumet կամ խաղաղութեան նշանը, որը միւս ժողովրդի ներկայացուցիչներն ընդունում են միւնոյն ծիսակատարութիւնով։ Թշնամիներին պատերազմ լայտնելիս էլ նրանք պարերով են լայտնում, որոնք արտալայտում են իրենց դժգոհութիւնն

ու մտադրուած վրէժինդրութիւնը։ Երբ պէտք է աստուածների բարկութիւնն իջեցնել և կամ նրանց բարերարութիւնը փառաբանել, երբ պէտք է ուրախունալ որդու ծննդեան պատճառով կամ կոծել բարեկամի մահը, այս բոլորի համար նրանք լատուկ պարեր ունին, որոնք արտալայտում են նըրանց հոգու գանգան տրամադրութիւնները։ Եթէ մինն առողջ չէ, նրան պատուիրում են պարել, և սա համարւում է առողջանալու ամենալաւ միջոցը։ իսկ եթէ նու այնքան թոյլ է, որ չի կարող պարել, այն ժամանակ բժիշկը կամ կախարդը ինքն է պարում նրա կողմից, հաւատալով, որ իւր շարժումների նշանակութիւնը կարող է անցնել հիւանդին։ Վալրենի ժողովրդների մէջ պարերը շատ անգամ լոգնեցուցիչ և գրեթէ միշտ աղմկալից են լինում։ Զարմանալի է, որ վչացած ճաշակի այս մնացորդը դեռ ևս չէ վերացել քաղաքակրթուած հասարակութեան միջից։

Բարոյականութիւն։—Կարելի է մտածել, թէ մարդկային ոչ մի ցեղ բոլորովին զուրկ չէ բարոյական զգացումից, սակայն շատ ճանապարհորդների վկալութիւնները հաստատում են, որ այս ենթադրութիւնը սխալ է։ Նկարագրենք ալժմեան վալրենիների բարոյականութիւնը։ Անդամանեան կղզիների բնակիչներն, ըստ երևութին բոլորովին զուրկ են ամօթխածութեան զգացումից և նրանց սովորութիւններից շատերը լիշեցնում են կենդանիների սովորութիւնները։ Տոսմանցիներին բոլորովին անլայտ էր բարոյական գաղափարն ու զգացմունքը։ Ֆիջիացիների մէջ մարդասպանութիւնը պատահական դէպք չէ, այլ նրանց կեանքի սովորական և սիստեմատիքական մի երեսլիթ։ Ֆիջիացին երբէք իրեն անվտանգ դրութեան մէջ չի համարել, իւր յետել մի անձտնօթ տեսնելով, հոչակաւոր մարդասպան դառնալ—նրա համար շատ մեծ պատիւ է։ Վաննա Լէվու կղզում կարելի էր շատ քիչ մարդ գտնել, թէ տղամարդկանցից և թէ կանացից, որ մարդասպանութիւն կատարած չլինէին։ առաջին բանը, որ ալնտեղ սովորեցնում են երեխալին—մօրը ծեծելն է։ Դակոտացիները չունին ոչ օրէնքներ և ոչ դատաս-

տանտական հիմնարկութիւններ. անհատական ապահովութիւնն և անհատական սեպհականութեան իրաւունքը նրանց մէջ գոլութիւն չունին: Նրանք բոլորովին զուրկ են պարկեցառթեան գաղափարից: Վալրենիների բարոյական վիճակը գնահատելիս անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ նրանց մէջ ոչ միայն բարութեան և չարիքի գաղափարները շատ հեռու են մերիններից, այլև այդ վալրենիներից շատերը հազիւ թէ կարող են պատասխանառու էակներ համարուել, որովհետեւ բարոյականութեան մասին ամենամթին գաղափար անգամ չունին:

Մի անգամ մի գակոտ ներկալացել է քարոզիչներին և խնդրել իրեն մկրտել. նրան մերժում են շատ կիներ ունենալու պատճառով: Մի քանի ամիս լետոյ, նա նորից գալիս է և լայտնում, որ էլ կանալք չունի, հետևապէս և՛ էլ ոչ մի արգելք չկայ: «Ի՞նչ արիր կանալքդ», հարցնում է նրան քարոզիչը: —Ես նրանց կերալ, պատասխանում է նորահաւատը: Մի աւստրալիացի գողութեան մէջ ըռնւում է և երբ նրան ճանապարհորդը հարցնում է, թէ չի վախեննում աստուածների պատժից, նա պատասխանում է. «Զէ, եթէ աստուածներն երկրիս վրայ լինէին, նրանք էլ միևնոյն կերպով կը վարուէին, իսկ ծնողները սիրում են, որ որդիներն իրենց հետեւն»: Արևելեան Աֆրիկայում չեն հասկանում, թէ զղջումն բնչ է. գողը՝ լարգելի անձնաւորութիւն է. մարդասալանը՝ հերոս է: Դժուար է ասել, թէ այս մարդկանց լայտնի լինի այն պատասխանը, թէ ամի անիր ուրիշին այն, ինչ որ չես ուզում, որ քեզ անեն»:

Հաւատը. — Մի քանի գիտնականներ, ի միջի ալլոց և գոկտոր Ռատցէլը, հաւաստիացնում են, թէ չկալ մի ազգ, որ բոլորովին կրօն չունենալ, սակայն սրան հակաճառում են հեղինակաւոր շատ ճանապարհորդների վկայութիւնները: Անդամանեան կղզիների բնակիչները գաղափար չունին ոչ բարձրագոյն էակի, ոչ կրօնի, ոչ հանդերձեալ կեանքի մասին: Աւստրալիացիները ոչ սիստեմատիքական կրօն, ոչ պաշտամունք, ոչ աղօթք ունին. բայց շատերը հաւատում են

չար ոգիների, և՝ բոլորը սաստիկ վախենում են խաւարից և կախարդութիւնից: Ֆիջացիներն աստուածներին այնպիսի կրքեր են վերագրում, որոնք ոգևորում են իրենց: Նոր Զելանդացիների գլխաւոր աստուածութիւնն Աստուան էր, մոլեգին մարդակերը: Գրելանդիալի էսքիմոսները չեն ճանաչում ոչ կրօն, ոչ կուռք: Նրանց մէջ, ընդհանրապէս ոչ մի կրօնական ծէս չկալ:Պարագվալի հնդիկները ոչ մի կրօնական գաղափար չունեին: Ոչ պատագոնցիները, ոչ արառկանները ոչ մի կարծիք չունին աղօթքի մասին. Նրանց մէջ մինչև անգամ կրօնական պաշտամունքի հետքն անգամ չի գտնուում: Հրոյ Երկրի բնակիչները նոյնպէս ոչ մի հասկացողութիւն չունին կրօնի մասին: Աֆրիկալի նիսամ-նիսամները աստուածութիւն նշանակող ոչ մի խօսք չունին: Տոսմանցիների մէջ կրօնի ոչ մի հետք, ոչ մի պաշտամունք, Աստծու մասին ոչ մի հասկացողութիւն չկալ:

Վալլենիները ոգիներին, եթէ միայն նրանց մասին մի մութ հասկացողութիւն կազմել են, համարեա միշտ վնասակար էտակներ են համարում, և այն գուցէ նրա համար, որ ամէն մի, իրենց ժողովրդին օտար, էակ թշնամի է նըկատուում: Այսպէս Հոտտենդոտները շատ վեր ի վերոյ գաղափար ունին բարերար աստուածութեան մասին, մինչդեռ շատ պարզ կերպով պատկերացնում են չար ոգին, որից վախենում են, համարելով նրան հիւանդութիւնների, մահուան, կալծակի և առհասարակ բոլոր չարիքների պատճառ: Հարաւալին Ամերիկալի Արիպոնները հաւատում են չար ոգուն, բայց ոչ մի գաղափար չունին բարի աստուածութեան մասին: Բրազիլիալի կօրօագոսները չեն ճանաչում բարի Աստծուն, նրանք ունին միայն չար ոգի, որ իրենց տանջում է և տանում գէպի թշուառութիւն և մահ: «Ձեմիաները Անտիլեան կղզիներում չար ոգիներին էին համարում մարդկալին սեռի բոլոր թշուառութիւնների պատճառը: Վերգինիալում և Ֆլորիտում չար ոգին էր լարգւում և ոչ բարին, և ժողովուրդը հոգում էր միայն սրանցից առաջինի բարկութիւնը մեղմացնելու:

Պատմում են, թէ մի արաբացի կին, ատամները ցաւելիս հետևեալ աղօթքն էր կարգում. «Ո՛չ, Աստուած, եթէ Քո ատամներն էլ իմինիս պէս ցաւէին; Եթէ Քո լնդերքն էլ Քեզ ալնքան ցաւ պատճառէին, որքան իմը ինձ»:

Մինչդեռ մի քանի վալրենի կամ բարբարոս ժողովուրդներ ոչ մի կրօն չունին, կամ միայն վախենում են չար ոգեներից, ուրիշները յարգում են այն առարկաները, որոնք ազգում են նրանց երևակայութեան վրալ. Նրանք ունին ֆէտիշներ, որոնցից խնդրում են իրենց ցանկութիւնների կատարումն, և որոնց ծազրում են, երբ խնդրածները չեն ստանում:

Վալրենիների մէջ սաստիկ տարածուած է կենդանիների մեծարանքը: Հին ժամանակներում, օձը մեծարւում էր Եղիպատոսում, Հնդկաստանում, Փիւնիկայում, Բաբելոնիայում և Յունաստանում. ալժմս նրան մեծարում են Ասիայի մեծ մասում, յատկապէս Պարսկաստանում, Կաշմիրում, Տիրէտում, Զինաստանում, Ցէլլոնում, կալմիկների, պերուացիների, ացտեկների, կարտիբների և Ամերիկայի ուրիշ ժողովրդների մէջ: Ալսպէս՝ Ամերիկայում կարմրամոլթները մեծարում են արջը, ամերիկական եզրը, նաև աստակը, գալլը և թռչունների մի քանի տեսակները. Բրազիլիայում և ԼաՊատայում լանուրը (ամերիկական ինձ). Սամնետները մեծարում են սպիտակ արջը, օստեակները՝ սեղ: Եզր սրբացած է Հնդկաստանում և Ցէլլոնում, կրոկոդիլոսը Մադագասկարում: Եւրոպական ժողովրդները արդէն վաղուց թողել են կենդանիների մեծարանքը, բայց և այնպէս ալժմս էլ գտնուում են ալդ պաշտաման հետքերը: Օրինակ Տիրուլում հասարակ ժողովուրդը առանձնապէս մեծարում է ծիծեռնակին, և եթէ ալգտեղ մինն ծիծեռնակ սպանէ, նրան կարող են դրա համար հալհոլել: Ես երբէք չեմ մոռանալու այն սուրբ երկիւղը, որ զգացի տաս տարեկան ժամանակս, երբ Միլանում մի ծիծեռնակ սպանեցի իր բնում և երբ դրանից յետոյ ինձ ասացին, թէ ալդ թռչունն սպա-

նողը Աստծուց պատժւում է *): Վալրենիների մէջ սաստիկ տարածուած է. արևի, լուսնի, աստղերի, ինչպէսև՝ ծառերի ու անտառների, սարերի ու գետերի, և մինչև անգամ մի քանի քարերի պաշտամունքը: Բնութեան մէջ մի բան չկար, որից վալրենին չկարողանար ստեղծել իրեն համար ֆետիշ. հասկանալի է, որ ինքը մարդն էլ կարող է կուռք դառնալ և որպէս Աստուած պաշտուել: Տալիտում թագաւորն ու թագուհին աստուածալին էակներ են, և ոչ ոք արժանի չէ նրանց գործածած առարկաներին ձեռք տալու: Նրանց բնակարանը երկնալին ամպ է կոչւում, նրանց ձայնը՝ որոտ, նրանց բնակարանը լուսաւորող ճրագը՝ կալծակ: Այսպէս՝ երբ սրանք ուզում են ասել, թէ թագաւորական պալատում ճրագներ են վառւում, ասում են. «Կալծակը փալլատակում է երկնալին ամպերի մէջ»:

Միայն մի անգամ չէ, որ վալրենիները սպիտակ մարդկանց աստուածների տեղ են ընդունելու Այս պատահել է և Լանտէրին արևմտեան Աֆրիկայում, իսկ տիկին Տոմսոնին՝ Աւստրալիայում: Նոյնպէս յալտնի է, որ կապիտան Ջէմս Կուկը Սանդվիչեան կղզիներում կանակներին առաջին անգամ երևալիս Լոնա, այդ երկրի ամենաժողովրդական Աստծու տեղ ընդունուեց: Բնիկները իրենց արժանի չէին համարում նրան իրենց մէջն ունենալու, զարմանում էին, որ նա ևս մսից ու ոսկրներից է կազմուած, որ նա էլ ուտում խմում և մինչև անգամ քնում է: Քրմերն ու հասարակ մահկանացուներն իրարից խլելով աշխատում էին ծառալել նրան. բաւական էր, որ նա ցանկութիւն յալտնէր, իսկոյն կը կատարէին և ուր էլ որ չերևար, տմբոխը ի նշան երկը-պագութեան, ծունը էր չոքում: Կուկի շքախումբը, մանաւանդ նաւաստիները, սաստիկ օգտուեցան այս նախապաշտումից և կանակներն ալնքան բարեսիրու էին, որ ամէն ինչ պարտականութիւն էին համարում: Սակայն համբերութիւնն

*) Ղարաբաղում ևս հակերի մէջ սաստիկ մողք է համարում ձիեռնակ սպանելը.

Էլ իւր սահմանն ունի: Մի անգամ նաև սպասաւորների խումբը վիրաւորեց Գալին, կտմ օրբազան անտառը, կտրելով փալտեր: Այս բանն այն աստիճան վրավովեց վալրենիներին, որ նրանք կատաղած յարձակուցան խմբի վրայ և սպանեցին Կուկին: Բայց քիչ լետով արդէն զղջացին. բնիկները սպացին ալդ մեծ ճանապարհորդի մահը և իրենց երկրում ընդունուած ամենամեծ յարգանքները մատուցանելով թաղեցին իրենց տաճարում, իրենց կուռքերի կողքին և շներ, վարագներ գոհեցին նրան, որ ներումն խնդրեն իրենց չարագործութեան համար:

Աստուածների հովանաւորութիւնը ձեռք բերելու համար վալրենիները զոհարերութեան են դիմում, որի համար շատ անգամ գործ են ածում ընտանի կենդանիներ, և երեմն էլ մարդիկ: Մարդազոհութիւն աշխարհիս շատ մասերումն է կատարւում. ինչպէս օրինակ՝ Գվինէում, Խաղաղ ովկիանոսի բոլոր, և յատկապէս՝ Սանդվիչեան կղզիներում: Հին ժամանակներն այս զոհարերութիւններն ալժմեանից աւելի տարածուած էին և Եւրոպայի մի քանի մասերումն էլ կատարւում էին:

Ինչպիսի տարրերութիւն վալրենու և քաղաքակիրթ մարդու կրօնների մէջ: Կրօնի կատարեալ բացակալութեան և քրիստոնէութեան միջև եղած այնքան աստիճանները մեզ մտածել են տալիս, որ կրօնը շատ հին ժամանակներումն է սկիզբն առել մարդկանց մէջ և աստիճանաբար զարգացել է, մինչև որ հասել է ալժմեան քաղաքակիրթ ժողովրդների կրօնի բարձրութեան:

Է.

ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԶԱՐԴԱՐԱՆՔ ԵՒ ԱՆԴԱՍԱՀԱՅՈՒԹԻՒՆ

Զարդարանք.—Մինչդեռ քաղաքակիրթ մարդիկ մեծ ուշադրութիւն են դարձնում լաւ և ըստ նորաձեռութեան հագնուելու, բարբարոսներն ու կիսավալրենի ժողովրդներն աշխատում են գեղերփնել իրենց մերկ կամ համարեա մերկ

մարմինը ամենահրաշալի կերպով։ Այս ստիպել է Հումբողին ասելու. «Եթէ մենք սկսէինք նկարներով զարդարուած մարդկանց էլ ալնպիսի ուշադրութեամբ ուսումնասիրել, ինչպէս ուսումնասիրում ենք հանգերձ հագնողներին, ալն ժամանակ մենք կը տեսնէինք, որ ամենահարուստ երևակալութիւնն ու ամենափոփոխ կամահաճութիւնը միատեսակ ստեղծել ենթէ մարմինը նկարներով զարդարելու և թէ նրան հանգերձով ծածկելու ձևերը»։

Ա.Փրիկարի մի մասում ունքերին ու ներկ են քսում, միւսում եղունգները ներկում են գեղին կամ ծիրանագոյնն նատ տեղերում մազերը զանազան կերպով ներկում են։ Միքանի երկրներում ատամները ծածկում են սև, կարմիր, կտպուտ կամ ուրիշ ներկով, իսկ Մալայեան արշիպելագում ամօթ է սպիտակ, շան նման, ատամներ ունենալ։ Մեծատուն հնդկացիները հոտաւէտ իւղ են քսում, և կարմիր ներկում ձեռքերի ափը և ոտների ներբանը, աչքերին սև ներկ են քաշում։ Ճապոնուհիները սպիտակ սնգուրով ներկում են վիզը, ձեռքերը և գէմքի մի մասը, կարմրաւոյնով՝ այտերը, սև ներկով աչքերի շուրջը և գեղին ոսկեգոյնով՝ շրթունքները։

Հարաւալին Ամերիկայում կը մեզագրէին մօրը, թէ շատ անտարբեր է գէպի որդիները, եթէ սա արուեստական միջոցներ գործ չդնէր նրանց ոտերի տնդղուցները ըստ նորաձեռութեան կազմակերպելու. շատ տեղերում ալլանդակում են և՛ ոտը։ Չինացիները տարօրինակ գաղափար ունին անձի գեղեցկութեան մասին. տղամարդը գեր մարմին պիտի ունենալ, երկար ոտներ և մանր ձեռներ. կինը՝ ամենից առաջ մանր ոտներ, որին իսկապէս հասնում են, մտնկութիւնից սկսած ճնշելով ոտները։ Վերջ ի վերջոյ ստացւում է չափազանց մանրիկ ոտիկներ։ Այս ի հարկէ փչացած ճաշակ է ցուց տալիս, բայց—տւաղ—քաղաքակիրթ ազգերի մէջ էլ մասամբ կատարւում է։ Աննամիտներն և ուրիշ մոնղուներ տարօրինակ սովորութիւնն ունին եղունգները չափազանց երկար թողնելու, ալնպէս որ երբեմն եղունգներն ամբողջ ձեռ-

քի երկարութեան են լինում։ Միմիայն ցուցամատը երկար եղունգ չպիտի ունենալի Ալս սովորութիւնը միայն մեծատունների մէջ է նկատւում, որոնք սրոնցով կարծես թէ առում են ամբոխին. «Նալեցէք մեր եղունգներին, մենք պարոններ ենք, շաշխատելով»։ Քաղաքակրթուած ազգերի մէջ կարելի է պատահել արխստոկրատ, կամ արդաշս երևալ ցանկացող մարդկանց, որոնք աննամիտներին հետեւելով ճկորթին երկար եղունգ են թողնում։ Զգիտեմ, թէ ինչ օգուտ կարող են ստանալ դրանից։

Քիթը նոյնպէս ենթարկում է արուեստական ալլանդակման։ Ալսպէս՝ Հոստաենդոտ մալրերը ճնշում են իրենց որդինների քիթը, որով և նրանք կարճանում եւ լայնանում են։ Ատամները ոչ միայն ներկում են, ինչպէս խկոլն նկատեցինք, ալև միջոցներ են գործ դնում նրանց ձեւը փոխելու. մինչև անգամ նրանց մասամբ հեռացնում են միմեանցից։ Աֆրեկալի մի քանի մասերում բնիկները խզարի ատամների պէս կտրառում են կտրիչները և կամ նրանց մէջ ծակեր անում, և փալտեր անցկացնում։ Վերին նեղոսի բնիկները հանում են իրենց չորս կտրիչները, ասելով թէ չեն կամենում անասուններին նմանել. իսկ բատոկասները հանում են միայն վերին կտրիչները, որ նրանց գէմքին զըդուելի տեսք է տալիս։

Առանձին ուշագրութեան արժանի է գանգի արուեստական ալլանդակումը, որ կատարում է շատ հին ժամանակներից ի վեր, ինչպէս օրինակ Պերուի և Մեքսիկոի բնակիչների մէջ։ Հիմալպոկրատէս և Պինիան պատմում են, որ իրենց ժամանակակից ժողովուրդները երեխաների գանգերն ալլանդակում էին. ալս սովորութիւնը սաստիկ գործադրում էր առաւելապէս Սև ծովի ծովափնեալ բնակիչների մէջ։ Դոկտոր Մոշէնն ու ես միասին նկարագրեցինք Պատուայում, Կապիտանատօ հրապարակից հանուած ռոմանանական ժամանակի մի գանգ, որի վրայ պարզ երևում էին արուեստական ալլանդակման հետքերը։ Ալս սովորութիւնն այժմս էլ հազուազիւտ չէ, մանաւանդ Ամերիկայի բնիկների

մէջ։ Ալս կերպ ձեւափօխուած գանգերը զանազան ձեւի են լինում, նայելով թէ ինչ միջոցներով են կատարուած։

Քաղաքակիրթ ազգերի մէջ չի կատարուած գանգի արուեստական ալլանդակումն, բայց և այնպէս՝ մարդաբանները նկատել են, որ նեղ չամչիկներն ու գլխակապերը նկատելի ազդեցութիւն են ունենուած գանգի ձեւի վրայ, միանգամայն արգելք լինելով ուղեղի կանոնաւոր զարգացման։

Նատ տեղեր քիթը ծակում և օղակներ, փետուրներ և կամ ուրիշ զարդարանքներ են անցկացնում։ Միւսնոյնն անում են և ականջների վերաբերութեամբ, միայն ամէն տեղ։ Հարաւային Ամերիկայի Բոտոկուտների և Լէնգուասների մէջ ականջի բլթակն ալնքան երկարում է, որ ուսին է հասնում։ Նըթունքներն էլ ծակում և հազար տեսակ զարդարում են, նայելով տեղական նորաձեռութեան։ Սաորին շըրթունքի մէջ մի կտոր փալտ կրելու սովորութիւնը տարածուած է Ամերիկայի արևմտեան մասում, ինչպէս և՛ Աֆրիկայում։ Նըթունքը ծակում են մանկութեան ժամանակ, որ հետզհետէ լայնանալով՝ բաւական ահազին ծակ է կազմում։

Մինչդեռ մի քանի վայրենիներ բոլորովին խուզում են գլուխը և մինչև անգամ ունքերը, ուրիշներն ահազին ուշադրութիւն են դարձնում իրենց սանդրուածքի վրայ։ Օրինակ Պապուասները սանրում են մագերը և խիտ ու գանգուր քանքիւլ շինում, որով և հապարտանում են։ Ֆիջիացիների առաջնորդները մի առանձին տեսակ սանդրուածք ունին, որին օրական մի քանի ժամ են նուիրում։ Ալսպիսի սանդրուածքները մի մետրից աւելի ծաւալ են ունենում։ Հետևապէս և՛ բաւական ծանր և ճնշիչ պիտի լինին, մանաւանդ քնի ժամանակ, բայց նորաձեռութեան համար, ինչպէս յարտնի է, դրանից աւելի անլարմարութիւններն են տարւում ոչ միայն վայրենիների, ալև մեր մէջ։ Ամենալաւ սանրուածքը մենք գտնում ենք աֆրիկական ժողովրդների մէջ։

Ցետոյ գալիս է կտածումը (tatouage, татуировка), որ աշխարհիս շատ տեղերում ընդունուած է: Կտածումը կտարում են ծակող գործիներով, որոնց օգնութեամբ մըտցնում են կաշու մէջ համարեա անջնջելի ներկող նիւթեր, որ զանազան ուղղութեամբ տարածուելով կաշու մէջ, զանազանակերպ նկարներ և մինչև անդամ տառեր են կադմում: Կտածումը նկարում է համարեա բոլոր վայրենիների մէջ: Մի քանի գէպքերում ամէն մի անհատ իւր մտահաճոյքին է հետևում, մի քանի ուրիշ գէպքերում, իւրաքանչիւր ժողովուրդ իւր առանձին նկարն ունի: Ալսպէս հարաւային Աֆրիկայում նիամ-բանասները և կոնգոյեցիները կտածում են ճակատը մի շարք կոճակների ձեռվ (սիսեռի մեծութեան), որ սկսում է մազերի մօտից և իջնում մինչև քթի ծայրը:

Աֆրիկայի բունների առանձնալատուկ նշանը երեք շարք սպին է, որ գլխից իջնում է ամբողջ երեսի վրայ, մինչև քերանը:

Մի քանի տեղերում տարբեր սեռերը տարբեր տեղեր են կտածում: Ալսպէս՝ աստեակ կանալք կտածում են բազուկը և սրունգը, իսկ տղամարդիկ՝ միայն դաստակը: Տուսկների մէջ կանալք կտածելով զուգախոտոր գծեր են անցկացնում կզակի վրայով, իսկ տղամարդիկ կտածում են երեսը միմիտան իրենց մի օրեւ է նշանաւոր քաջութիւնը կամ յաջողութիւնը լիշատակելու համար:

Կարոյինեան կղզիներում բնիկները կտածում են իրենց մարմնի մեծ մասը. գեղեցիկ կտածում ունին նոր-գելանդացիները, որոնք ծածկում են ամբողջ երեսն ամէն տեսակ կոր գծերով, որոնց այնքան զգալուն մտսի վրայով անցկացնելը բաւական երկարատեւ և տանջող գործողութիւններ է պահանջում: Խնքն ըստ ինքեան հասկանալի է, որ խոր կըտրուածքներն ոչնչացնելով վերին մկանունքների խտղը, գէմքի խիստ և չփոփոխուղ արտայալտութիւն են յառաջացնում: Կատ տեղերում կտածումն այնքան սովորական է, որ հազիւ կարելի է չկտածած մարդու հանդիպել և երբեմն էլ

սրանց ամբողջ մարմինը, գլխից մինչև կրունկը ծածկուած է լինուա զծերով:

Վալրենիները սովորութիւն ունին զարդարանքներ կախել մարմնի բոլոր մասերից, ուր միայն կարելի է: Այս զարդարանքները բաղկանուած են զանազան պղնձի, երկաթի, կաշու, փղոսկրի, քարի, մարգարիտի, փալտի և ուրիշ իրերից: Այսպիսի մարդիկ սովորաբար ծանրաբեռնուած են լինուամ մանեակներով, օղակներով, ասլարանջաններով, գօտիներով և ուրիշ դոլնանման զարդարանքներով, որոնց կրելլերը եմն մեծ անլարմարութիւններ են պատճառուամ: Մի ճանապարհորդ տեսել է հեղուանների առաջնորդի կնոջը, որ կրում էր եօթանասուն և երկու պղնձեալ օղակ. պէտք է խոստովանել, որ սրանք մի բաւականին մեծ կապոց կարող են կազմել:

Բայց և մեր մէջ կինը սաստիկ մեծ հոգս է տանուամ իւր արտաքինի վրալ և ծանը օղերը, երբեմն նորաձեռութիւն համարուող ահագին սանդրուածքները, ինչպէս և նախկին վենետիկուհիների արուեստական բժերը լիշեցնուամ են վալրենի կանանց սովորութիւնները, դեռ չենք խօսուամ շատ կանանց սև ներկով ունքերը, իսկ կարմրով շրթունքները ներկելու սովորութիւնների և կամ մազերը սնգուրելու նորաձեռութեան մասին:

Նիսմ-նիսմերի կեղծ պոչը, որ պատճառ է գտաել պոչաւոր մարդկանց մասին հրաշալատումներ (լեգենդա) ըստեղծելու, ոչ այլ ինչ երևեցաւ, բայց եթէ մի, կաշուց և երկաթի թելերից հիւսուած զարդարանք:

Հանդերձը.—Այս հարցը սերտ կապուած է նախընթացի հետ, որովհետեւ վալրենիների մէջ կատածումը փօխարինուամ է հանդերձին: Նատերը պնդում են, թէ ամօթիածութիւնը մարդու մէջ բնածին է, բայց այս սխալ է: Նախնի ժողովրդների կրօնական ծիսակատարութիւնները և ալժմեանշատ վալրենիների վարմունքը հակառակն են տպացուցանում: Քարողիչներն ամէն ջանք գործ դրին աւստրալիացի-

ներին վարժեցնել հանդերձ գործածելու. բայց լիովին չըլա-
ջողուեց և շատ ծիծաղելի դէպքեր տեղի ունեցան:

Վայելչութեան գաղափարը զանազան ժողովրդների մէջ
տարբեր է: Թուրք կնոջ համար անվալել է համարւում երե-
սը ցոյց տալ: Եթէ թուրք կնոջ լողանալիս մինը յանկարծ
վրալ հասնէլ՝ նա չէր ծածկի սեռական մասերը և կուրծքը,
ինչպէս անում է Մեղիցինեան Վեներան, ալլ կ'շատալէր ե-
րեսը ծածկելու, և տնից դուրս գալիս թրքուհին ալնքան չի
մտածում իւր մարմնի գալթակղեցուցիչ մասերը ծածկելու,
որքան երեսը կարելույն չտփ թանձր քողով պատելու մտ-
սին: Հնդկաստանի ամենահին տաճարների արձաններից կա-
րող ենք եզրակացնել, որ երբեմն ցեղը կարող է բաւական
բարձր քաղաքակրթութեան հասնել, և հանդերձի կարիք
բոլորովին չզգալ:

Անդամանեան կղզիների բնակիչները իրենց ծածկում են
ցեխով և կտածումով, բայց հանդերձ չեն կրում: Երկու սե-
ռի շատ ֆիջիացիներ բոլորովին մերկ են շրջում. միևնուն
են անում և ուրիշ, յատկապէս կենդրոնական Աֆրիկայի
վայրենի ժողովուրդները: Բայց ընդհանրապէս առած, վայրե-
նիներն էլ հանդերձ են հագնում, թէև չափազանց խղճալի
և անկատար: Բայց նրանք այս անում են ոչ ալնքան վայել-
չութեան զգացումից դրդուած, որքան զարդարանքի, կամ
արևի ալրող ճառագալթներից, ցրտից, փշերից և միջատնե-
րից պաշտպանուելու համար:

Քաղաքակրթուած մարդու և վայրենու մէջ սրա վե-
րաբերմամբ կատարեալ հակադրութիւն է տիրում: Առաջինը
չի ալլանդակում իւր մարմինը, որպէս զի տեղացիների գե-
ղեցկութեան մասին ունեցած գաղափարին յարմարեցնէ այն,
ալլ մեծ ուշադրութիւն է դարձնում հանդերձի վրալ, երկ-
րորդը արհամարհում է հանդերձը, և ալլանդակում է մարմնի
զանազան մասերը, մանաւանդ երեսը, աւելի գեղեցկանալու,
և միւս սեռին դիւր գալու և կամ թշնամիներին ահարկու
երեալու նպատակով: Վայրենին աշխատում է տրուեստի մի-
ջոցով հասնել այն բանին, ինչ որ ընութիւնն ինքը տուել

է կենդանիներին։ Եւ լիրաւի, սրանք, մանաւանդ էգերը, օժտուած են զարդարանքներով, որ նրանց գեղեցկացնում են միւս սեռի աշխում։ Նրանք նաև կարող են իրանց մտրմնի ծաւալն էլ մեծացնել և կամ մի առանձին գիրք բըռնել, որպէս զի թշնամուն վախեցնեն։

Բ.

ՍԵՌԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Եթէ մենք մինչև անգամ չդատէինք մարդուն կենդանիների հետ ունեցած նմանութեամբ, այնուամենալիւ պէտք է ենթադրենք, որ սեռական ընտրութիւնը մարդկանց մէջ էլ տեղի է ունեցել և այդ այն պատճառներով, որ իսկուն կը լիշենք։ Սակայն ամենից առաջ, պէտք է հաստատել այն փաստը, որ մարդկային սեռի մէջ տղամարդու և կնոջ նորն իսկ ոչ սեռական գործարանների մէջ բաւական մեծ տարրերութիւններ կան։ Տղամարդու հասակն աւելի բարձր է, նրա ուսերն աւելի լայն են և աւելի մսոտ։ Այս վերջին առանձնայատկութիւնը երևում է և՛ կմախքի վրայ, ուր այն բարձրութիւններն ու ցածրութիւնները (бугорки и бороды), որոնց կպչում են մկանունքները, աւելի նկատելի են տղամարդու քան կնոջ կմախքի վրայ։ Տղամարդու կրծքի գեղձերը սաղմալին դրութեան մէջ են և մազերը կարճ, այն ինչ կանանց կրծքի գեղձերը սաստիկ զարգացած են, իսկ մազերը երկար։ Տղամարդու կոնքը նեղ է, կնոջը լայն։ Տղամարդու ձայնն աւելի զօրեղ և աւելի խորն է, քան թէ կնոջը՝ ձայնի գործարանի աւելի զարգացած լինելու պատճառով։ Բոլոր ցեղերի տղամարդք միբուք ունի, իսկ կինը՝ ոչ։ Համարեա բոլոր ցեղերի մէջ տղամարդը կնոջից աւելի է ծածկուած մազերով։ Տղամարդու գանգի տարրողութիւնն աւելի մեծ է, հետեւապէս և՛ ուղեղն աւելի մեծ ծաւալ ունի։ Գանգն ուրիշ տռանձնայատկութիւններ էլ է ներկալացնում, որոնք մասամբ իրաւունք են տալիս տաելու, թէ կանանց գանգը վօտենում է

երեխաների գանգին։ Վերջապէս տղամարդն աւելի քաջ է և կնոջից աւելի ձեռներէց, իսկ այս վերջինս, գրա փոխարէն, աւելի քնքոյշ հոգի ունի և աւելի պակաս եսասէր է։

Կարելի է երկու սեռի միջև էլի ուրիշ տարբերութիւններ ցոյց տալ. կնոջ կազմուածքի մասերը աւելի կլոր են, տղամարդունը աւելի անկիւնաւոր. կնոջ գէմքը կարճ է և մասերը քնքութեամբ են միանում միմեանց, հետեապէս և՛ նրա արտալայտութիւնն այնքան զօրեղ չէ, ինչպէս տղամարդունը. ճակատն այնքան բարձր չէ ինչքան տղամարդինը, քիթն ու բերանը փոքր են, գունչը աւելի պակաս է սրացած, որ նպաստում է գէմքի կարճանալուն և կլորանալուն։ Կնոջ վիզն աւելի երկար է, կոկորդն աւելի քիչ է դուրս ընկած և հազիւ է կազմում այսպէս անուանուած և լդամի խնձորը։ Նրա կրծքի վանդակն աւելի նեղ է. փորն աւելի զարգացած. պորտն աւելի հեռու է գտնւում անպարկեցած մասից, քան թէ տղամարդունը։ Յետոյ, կնոջ ձեռքը աւելի կարճ, կլոր և գեր է. ոտը աւելի փոքր և նեղ. ազդը մոտու։ Կնոջ գնացքն աւելի թեթև և շնորհալի է. բայց լաւ չի կարողանում վազել։

Այստեղ կարող է հարց ծագել, թէ Բնչ պատճառերից են ծագել այդ տարբերութիւնները։ Այս հարցին մի քանիսը պատասխանում են, թէ երկու սեռն էլ ստեղծուած են վերոյիշեալ իրենց ընական առանձնալատկութիւններով։ Բայց այս կարծիքը գեռ ևս հարցի գիտնական լուծումը չէ։ Եվոլյուցիօնական տեսութիւնը (տիօրիան) այս փաստը բացատրելու համար դիմում է այն հիպոտեզին, որ որոշուած է սեռական ընտրութիւնն իսուքերով։

Եթէ կարելի է ապացուցանել, որ մարդը կռւում է ուրիշների, իւր ախոյեանների հետ, կնոջը տիրելու համար, անիմաստ կը լինէր պնդել, թէ մի ալսպիսի կոփւ, շատ դարեր տևելով կարող էր առանց հետեւանքի մնալ։ Եւ որովհետեւ լաղթող հանդիսացել են ամենազօրեղներն ու ամենից արիներն, ուստի և դրանք տուել են իրենց սեռին ոյժ և արիութիւն։ Կանալք էլ նախնական ժամանակներում, առա-

ւելութիւնը տուել են ուժեղ տղամարդկանց, որոնք աւելի շուտ կը կարողանալին իրենց պաշտպանել և հոգալ կարեքները:

Կնոջը տիրելու համար մարդկանց մէջ մղուած կոխն ալժմս նկատելի է վալրենիների մէջ, ուստի և՛ շատ հաւանական է, որ նախնական մարդիկն էլ նոյն կոխւը վարած լինին: Աւստրալիացիների մէջ կինը սովորաբար հասակաւորներին և իշխանութիւն ունեցողներին է բաժին ընկնում, որոնցից մի քանիսը հինգ կամ վեց կին ունին. Երիտասարդներին թոլլ չեն տալիս կին առնելու. միայն երեսմն սրանք ստանում են այդ թոլլաւութիւնը, առաջարկելով փոխարինել իրենց քոլրերի հետ, բայց այս գէպքում էլ սրանք բաւական ուժեղ և քաջ պիտի լինին, որ թոլլ չտան իրենց քոլրերին, առանց ուրիշի հետ փոխանակելու, փախցնելու: Հիւսիսալին Ամերիկալի դոգբիրների և ուրիշ ժողովրդների մէջ կանալք աւելի զօրեղի սեպհակս նութիւնն են կազմում: այնտեղի ընդհանուր կարծիքն այն է, թէ ամէն մարդ օրինական և բարոլական իրաւունք ունի թոլլից կինը խլելու: Մի ճանապարհորդ ասում է, թէ տղամարդիկ կանանց տիրելու համար այնպէս են կուում միմեանց հետ, ինչպէս եղջերուները անտառի ուրիշ կենդանիների արուների հետ: Հուդզոնի ծոցի հնդիկների մէջ ամենահին սովորութիւնն պահանջում է, որ տղամարդիկ ցանկալի կնոջը տիրելու համար մուշտակուր տալին և հասկանալի է, որ պարգևը ամենից ուժեղին է հասնում: Թոլլ մարդը, եթէ միայն չափազանց լաւ որսորդ և իւր ժողովրդից սաստիկ սիրուած չէր, հազիւ էր կարողանում պահել իւր կնոջը երբ մի աւելի զօրեղը կամենար խլել նրան: Այս սովորութիւնը շատ մեծ նախանձ էր յարուցանում երիտասարդների մէջ և սրանք ամէն գէպքերում և վաղ մանկութիւնից աշխատում էին վարժուել՝ ուժեղ և ճարպիկ լինելու: Հնդիկ կամէ ժողովրդի մէջ կանալք նոյնպէս մի տեսակ սեպհականութիւնն են կազմում, որին աւելի ուժեղը կարող է խլել աւելի թոլլից: Այդտեղ մի տղամարդ կարող է մի ուրիշին կռուի դուրս կան-

չել, և եթէ յաղթող դուրս գալ, լարող է հակառակրդի կնոջը վերցնել, որպէս պարզեւ: Ըստ կանալք բոլորովին չեն մտածում բողոքելու ալսպիսի գարգերի դէմ, կատարելապէս բնական համարելով այն:

Սեռերի միջև եղած միւս բոլոր երկրորդական տարբերութիւնները կարող են սեռական ընտրութեամբ բացատրուել, բայց շատ հաւանական է, որ այս մասսամբ բնական ընտրութեան շարհիւ էլ յառաջանար, որովհետև աւելի ուժեղներն ու սւելի ճարպիկները թուլերից աւելի լաւ կարող էին ընդգիմադրել թշնամիներին. կարող էին տանել վատեղանակները, լոգնածութիւնը. իսկ քաղցի ժամանակ՝ աւելի հեշտութեամբ ձեռք բերել անհրաժեշտ ուտեսարք: Իսկ ինչ վերաբերում է մարմնի, գլխի և երեսի վրայ եղող մազերի տարբերութիւնների պատճառին, ալդ արդէն դժուար է բացատրել: Եւ եթէ թոյլ է տրում ստոր կենդանիների հետ ունեցած նմանութիւններով դատելու, այն ժամանակ հաւանական է թւում, որ սկզբում երկու սեռն էլ ամբողջ մարմնով միատեսակ կամ համարեա միատեսակ ծածկուած են եղել բաւական երկար մազով: Ալսպիսի եզրակացութեան բերում է և՝ սաղմնաբանութիւնը, ցոյց տալով, որ մարդկային սաղմը բոլորովին պատած է մի առանձին տեսակի մազով: Ցետով արդէն երկու սեռի մէջ մազերը տարբեր մասերում են զարգանում. ալսպէս՝ տղամարդու երեսի վրայ երկարանալով՝ կազմում են միրուքը, իսկ կնոջը միայն գլխի վրայ են սաստիկ աճում, իսկ մարմնի միւս մասերը համարեա մերկ են մնում:

Կնոջ գլխի երկար մազերը և մերկ մարմինը կարելի է ընտրութեան ազդեցութեան վերադրել. որովհետև տղամարդիկ շատ դարերի ընթացքում առաւելութիւն են տուել երկար մազերով և մերկ մարմնով կանանց: Մենք բոլորս շատ յաւ գիտենք, թէ այս առանձնալատկութիւնը ինչ չափով ընդունակ է զգալականութիւն յառաջացնելու: Միւնոյնը կարելի է ասել և կանանց երեսին, կրծքին, ձեռքերին ու

ոտներին մազ լինելու մասին. տղամարդը չի սիրում, որ նրա տրդ մասերը մազով հածկուած լինին:

Խնչ միրուքին է վերաբնշում, մի քանի գիտնականների կարծիքով, գա յառաջացել է մի քանի ցեղերի մէջ կանանց միրուքաւոր մարդկանց տոււած ոռաւելութեան շնորհիւ. ալնտեղ, ուր կանալք ալդ չեն սիրում, տղամարդիկ նոյն պէս տնմիրուք են: Բայց այս բացատրութիւնը միայն նրանք կարող են ընդունել, որոնք ենթագրում են թէ կինն էլ փոքր ի շատէ միջոց է ունեցել իրեն ամուսին ընտրելու նւ որպէս զի կարողանան ընդունել տալ այս բացատրութիւնը, այս վերջին կէտին վերաբերեալ շատ փաստեր են ժողովել: Ալպէս՝ հարաւալին Ամերիկայի Խարուասների մէջ ապահարզանը բոլորովին ազատ է, ալնպէս որ երբ մի կին ձանձրանում է մի ամուսնուց, թողնում է նրան և ուրիշին գնում: Արխապոնների մէջ երբ մի տղամարդ իրեն կին է ընտրում, նրա գինը ծնողների հետ է կտրում: Բայց շատ անգամ պատահում է, որ աղջիկը իւր ծնողների և փեսացուի միջև կալացած պայմանին չի համաձայնում, և յամառութեամբ ընդդիմագրում է միութեան: Շատ անգամ էլ նա փախչում, թաք է կենում և ալսպիսով խոյս տալիս ամուսնու անդուր գրկախառնումներից: Եթէ Ֆիջի կղզիներում ուզում են մի կնոջ հետ ամուսնանալ, նրան ձեռք ձգելու համար պէտք է կեղծ կամ իսկական բռնութիւն գործ գնեն. բայց եթէ կինը չի ուզում այս կապակցութիւնը, իրեն փախցնողի տանը մօտենալիս փախչում է մինի մօտ, որ կտրող է իրեն պաշտպանել, իսկ եթէ գոհ է, համաձայնութիւնն արգէն կալացած է լինում: Հրոյ Երկրի բնակիչների մէջ երիտասարդներն ջանք են գործ գնում աղջիկների ծնողների համաձայնութիւնն ստանալու, նրանց ամէն տեսակ ծտուալութիւն մատուցանելով և յետոյ արգէն աշխատում են փախցնել աղջկան. բայց եթէ սա համաձայն չէ, փախչում, թաք է կենում անտառում, մինչև որ իւր երկրպագուն իզուր պարելուց ուժապատ, բոլորովին հրաժարում է հետամուտ լինելու մտքից: Կալմիկների մէջ,

մարդ և կին միմետնց յետեից վազում են, միայն կինը միշտ մի որոշ չափով առաջ է կանգնում և շատ հազիւ է պատահում, որ տղան կարողանալ աղջկան բռնել, եթէ միայն վերջինս սէր չի տածւմ դէպի իւր յետեից վազողը։ Յալտնի է, որ կաֆրների մէջ ամենտագեղ, թէև նոյն իսկ հարուստ տղամարդիկ, չեն կարողանում կանալք ունենալ և շատ անգամ պատահել է, որ նրանց հետ նշանած աղջիկներն փախել են իրենց սիրեկանների հետ։ Կարելի էր այսպիսի ուրիշ շատ օրինակներ էլ բերել։

Ալժմ քաղաքակրթուած ազգերի մէջ սեռական ընտրութիւնը իւր բոլոր ուժով չի տպացում, ինչպէս երբեմն, որովհետեւ ալժմ կնոջ կամ ամուսնի ընտրութեան ժամանակ ի նկատի ունին ոչ միայն Փիզիքական յատկութիւններն, ալլեւ խելքը, բարոյական յատկութիւնները, կարողութիւնը և հասարակական գիրքը։ Մէկ էլ պաշտօնական պարտաւորութիւնները շատ մարդկանց ուժերի կատարեալ ծաղկման ժամանակ յետ են պահում ամուսնութիւնից, իսկ մի քանի կրօնական պաշտամունքներ մինչև անգամ պատուիրում են չամուսնանալով։

ԹՌ.

ՄԱՐԴՈՒ ՍԻՍԵԽԱՏԻՔԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Ալժմ պիտի տեսնենք, թէ մարդը ընութեան մէջ ինչ դիրք ունի, հետեւապէս և՝ պիտի ուսումնասիրենք այն առանձնալատկութիւնները, որոնցով նա տարբերում է իրեն ամենից մօտեկ կանգնած էակներից։ Այս առանձնալատկութիւնների հետ ծանօթանալուց յետու կը մտածենք նրանց նշանակութեան մասին։

Մարդու կենդանաբանական առանձնայատկութիւնները.—Այս առանձնալայտկութիւնները կայտնում են ծնոտա-ատամալին գործարանի և անդամների մէջ։ Կապիկների լիշեալ գործարանը մարդկայինի հետ համեմատելով՝ հետեւեալ առանձնալատկութիւններով է տարբերում։

1) Ժանիքները պինդ են և միւս ատամների կողքից աւելի գուրս ընկած, մասնաւանդ վերինները:

2) Ժանիք ատամները տեղաւորուած են խոր փոսիկների մէջ, որով հնարաւորութիւն են ունենում աւելի ուժեղ կերպով ընդդիմադրելու:

3) Այտի աղեղները լայն են, որպէս զի թողնեն անցնելու ամուր մկանունքները—ներքին ծնօտի շարժիչները:

4) Գլխի վրալ կան քիչ կամ շատ զարգացած բարձրութիւններ վերոյիշեալ մկանունքների ամրանալու համար:

5) Գլխի և իրանի միջի կապը շատ ամուր է:

Իսկ մարդու մէջ ընդհակառակը հետևեալն ենք նկատում:

1) Ժանիք ատամները միւս ատամներից դուրս չեն ցցւում:

2) Նրանք խոր փոսիկներում չեն տեղաւորուած:

3) Այտի աղեղները նեղ են:

4) Գլխի վրալ բարձրութիւններ չկան:

5) Գլխի և իրանի միջի կապը թուլ է:

Այս առանձնայատկութիւններից և ոչ մինը կարող է առանձին գոյութիւն ունենալ. այս բոլորը միասին մի սիստեմ են կազմում և դրանց զուգադիպութեան շնորհիւ կապիկը վայրենի կենդանու բնաւորութիւն է ստանում, իսկ մարդը—անզէն արարածի:

Սակայն մարդանման՝ կապիկների ժանիքը ոչ միայն փոքր ինչ աւելի երկար և փոքր ինչ աւելի զարգացած ատամ է, այլև մի ամենակարեսոր զէնք, որ օժառում է կապիկին առանձին յատկութիւններ. յատկութիւններ, որ առիւծին և վագրին են լատուկ. Այսպէս՝ գորիլլան, օրանգուանգը և իրենց ընկերները—վայրենի կենդանիներ են, իսկ մարդը՝ որ առանձնայատկութիւններ չունի, մի անզէն էակ է:

Մեր ասածները պարզաբանելու համար նրեմի հկենդանիների կետնքը գրուածքից առաջ բերենք հետևեալ կտորը. «Ոչ բոլոր կապիկները փախչում են թշնամուց. ամենաուժեղներն ընդդիմադրութիւն են ցոլց տալիս մինչև ան-

գամ գիշատիչ կենդանիներից ամենառուժեղներին և մարդուն, նրանց մէջ կռուի դուրս գալով, և շատ անգամ լազմող հանդիսանալով:

Մեծ կապիկների, մանաւանդ շնագլուխների (պավանի, հածուոն) ատամները մի այնպիսի զարհուրելի զէնք են կազմում, որ սրանք շատ լաւ կարող են չափուել թշնամուհետ, մանաւանդ երբ ստ (թշնամին), ինչպէս սովորաբար, միայնակ է կռուում, մինչդեռ կապիկները խմբերով են պաշտպանուում և ալն էլ ի միասին և եռանդով: Եզերը կռուի չեն խառնուում, բացի ալն գէպքերից, երբ պէտք է իրենք իրենց և կտմ ձագերին պաշտպանեն. և այդ ժամանակ նըրանք արուներից պակաս քաջութիւն չեն ցոլց տալիս: Համբրեա բոլոր կապիկները ձեռքերով և ատամներով են կռուում, ճանկուառում և խածում են. շատերը հաւատացնում են, թէ կապիկների մի քանի տեսակները գաւազաններով և մանաւանդ ծառերի ճիւղերով են պտշտպանուում: Նաև յայտնի է, որ նրանք թշնամուն քարեր, պտուղներ, փայտի կտորներ և ուրիշ իրեր են ձգում: Բնիկները չեն յարձակւում մինչեւ անգամ շնագլուխ կապիկի վրայ, մանաւանդ երբ հրացանով չեն զինուած: Օրանգուտանդ և գորիլլան ալնքան ուժեղ և վտանգաւոր են, որ մարդը հրացանը ձեռին հազիւ կարողանում է նրանցից պաշտպանուել, ուր թէ նըրանց վրայ յարձակուել:

Ալժմ անցնենք անգամներին: Մի քանիսը պնդում են, որ մարդը չորս ձեռանի էակ է, որովհետև նրա ներքին անգամները վարժուելով՝ կարող են մի քանի տեսակ աշխատանք կատարելու յատկութիւն ձեռք բերել: Յայտնի են այդ կարծիքը ամրապնդող օրինակներ: Օրինոկի և Խւկատանի հնդիկները, ինչպէս և աւստրալիական նեգրները, ուսների մատաներով կարող են գետնից դրամ վերցնել և քարեր ձգել. Բենգալցիները կարող են ոտներով էլ փորել. Հոտտենդուտների ոտի մեծ մատը ընդդիմադրում է միւս մատերին. միւսոյնը նկատել են և ծառի խէժ հուաքողների մէջ. հորաւալին ֆրանսիալում այս նրանց միջոց է տալիս

Հեշտութեամբ բարձրանալու Ponus marittima ծառի բարձր և անճիւղ բունի վրալով։ Խաղաղ ովկիանոսի կղզիաբնակները գողութիւն են անում, ոտներով իրեր վերցնելով և իրենց գողակիցներին տալով։ Արևելեան Հնդկաստանում փականագործներն ու ատաղձագործները կարողանում են ոտներով բռնել և գործածել իրենց գործիները։

Մի տնգլիացի անդամազննին մի ուրիշ տեսակ կարծիք է յալտնել, աշխատելով ապացուցանել թէ կապկի վերին անդամներն ոտների յատկութիւն ունին, նա յենւում է մարդու ներքին և կապկի վերին անդամների միջև եղած կազմական նմանութեան վրալ։

Արտպիով այս մասին երեք կարծիք է տիրում։ Մի քանիսը մարդուն չորս ձեռանի, ուրիշները թէ մարդուն և թէ կապկին երկոտանի, իսկ երրորդները՝ մարդուն երկոտանի, իսկ կապկին չորս ձեռանի են համարում։ բայց բոլոր գիտնականները համաձայն են, որ մարդու և կապկի կրծքի մօտ սկսուող անդամները ձեռքերի նշանակութիւն ունին։ Նրանք միայն փորի մօտ սկսուող անդամների մասին տարբեր հալեացքներ ունին, բայց այստեղ էլ կարծիքների տարբերութիւնն այնքան մեծ չէ, ինչքան որ առաջին հալեացքից կարող էր թուալ։

Տարակոյս չկալ, որ մարդու ոտները յարատեւ վարժութիւններով կարող են, գուցէ և ոչ լիովին ձեռքերի գործը կատարել, բայց որովհետեւ նրանց ձեր և կազմութիւնը նըրանց միջոց են տալիս մարմնի ծանրութիւնը կրելու, ուստի չի կարելի նրանց ձեռք անուանել։ Ալդպէս էլ, սխալ է այն կարծիքը որ երկոտանի է համարում ինչպէս մարդուն, այնպէս և կապկին, որովհետեւ համապատասխանող գործառները միշտ չեն կարող միևնույն անունը կրել։ Զղջիկի և թռչունի թեր և ձկան լողացող փետուրը, անկասկած, այնպիսի օրգաններ են, որ համապատասխանում են մարդու ձեռքին, բայց և այնպէս՝ ոչ ոք չի կարող թե կամ լուզորդ (ուստի ու անուանել ձեռքը։ Հետեւապէս և անգլիացի անդամազննինն ապացուցեց, որ թէ մարդու և թէ կապկի փո-

ըի մօտ սկսուող անդամները կազմութեամբ մի են և ուրիշ ոչինչ։ Զեռքը աւելի բնախօսական նշանակութիւն ունի։ Ալժմ համեմատական կազմախօսութիւնը մեզ ցոյց է տուուլ, որ բոլորովին տարբեր օրդաններ կարող են միմեանց նման լինել, այսինքն միւնոյն պաշտօնը կատարել, այնպէս որ ձեռքը կարող է անդամների մասն էլ չլինել, և ուրիշ կարգի կենդանիների մէջ պատահել, ինչպէս օրինակ, սարդանման կամ խեցգետնանմանների։ Աւելի լայն իմաստով՝ փղի կնճիթը իւր մանրամասն յաւելումով ձեռք են կոչել, իսկ կտսկի ալոյն անուանել են հինգերորդ ձեռք։ Եթէ մենք ոտք անուանենք այն անդամը, որի մէջ կըսունկի ոսկը նեցուկ է կազմում կանգնելու և քայլելու ժամանակ, և որը ծառայում է քայլը փոխելու համար, այն ժամանակ մարդը կունենայ երկու ոտք, իսկ կազիկը՝ ոչ մի. և եթէ մենք ձեռք անուանենք այն անդամը, որի բոյթ մատը իւր առանձին կազմութեամբ կարող է հեռանալ միւսներից և նրանց ընդդիմագրել մի բան բռնելու համար, այն ժամանակ մարդը կունենայ երկու ձեռք, իսկ կապիկը չըրս։

Վերոյիշեալ տարբերութեան հետ սերտ կապուած են մարդու հետևեալ առանձնայատկութիւնները.

1) Վերին անդամների կարճութիւնն ու թուլութիւնը, մինչզեռ Գորիլլի և էլ աւելի միւս մարդանման կապիկներինը երկար և ուժեղ են։ Մարդու այս անդամները ներքինների հետ համեմատելով՝ փոքր և թոյլ են։ Եթէ մարդը կամենար չորքոտանու պէս ման գալ, նա ծնկներով պիտի քըսուէր գետնին և կարող էր կաթուածահար լինել։

2) Ոտքի ոսկորներն ու մկանունքները։ Գուցէ ոչ մի կենդանու փորի մօտ սկսուող անդամներն այնքան ուժեղ լինին, որքան մարդունը, եթէ նրանց համեմատենք մարմնի միւս մասերի հետ, և այս այս պատճառով, որ սրանք պիտի կըեն ամբողջ մարդը։ Կապիկի բանը բոլորովին ուրիշ է։ Նրանք առաւելապէս ծառերի վրալ են ապրում, ուստի և առաջին անդամներն աւելի գործ պիտի տեսնեն, քան

թէ յետինները, և ալդ է պատճառը, որ ալդ ոսկրներն ու մկանունքներն աւելի սաստիկ են զարգանում:

3) Կոնքի կազմուածքը, որ յարմարեցրուած է որովայնի խոռոչի օրգաններն կրելու: Մինչդեռ մարդու կոնքը ստանում է արգէն իւր անունից յայտնի ձեւը, կապկինն աւելի երկար և նեղ է և ամենից տռաջ կազմում է ներքին անգամների ամբապնդուելու տեղերը:

4) Ծոծրակի մեծ անցքի դիրքը, որի շնորհիւ գլուխը ու զզահայեաց իրանի վրայ ուղիղ ողնաշարի վրայ է ընկնում, մինչդեռ կապկինն ալգակէս չէ լինում:

Յառաջագրած գիտողութիւններով, կարծում եմ, ապացուցեի, որ կապկիկը մարդուց տարբերում է վայրենի կենդանու առանձնալատկութիւններով, որ կտյանում են ծնօտա-ատամալին գործարտնի մէջ, և որ նրա ներքին անդամները ծառայում են որպէս ձեռքեր, թէև ալս վերջին հանգամանքը արգելում է նրան երկու ոտի վրայ ման գալ և գիտուարացնում է մինչև անդամ գետնի վրայ բոլոր չորս անդամներով զնալ, թէպէտեւ տալիս է նրան մի առանձին յատկութիւն ծառերի վրայ ապրելու: Ալսպիսով՝ եթէ կարելի է կապկին վայրենի և մագլցող կենդանի կոչել, այն ժամանակ մարդը պէտք է կոչուի հեզահամբուլ կաթնասուն, որ յարմարուել է ուղղահայեաց գնացքին:

Վերոյիշենալ առանձնայատկութիմների նշանակութիւնը.—Այժմս, երբ գիտենք, մարդու և կապկի մէջ եղած տարբերութիւնը, շատ տեղի կը լինի գնահատել նրա նշանակութիւնը կենդանաբանական տեսակէտից: Սրա մասին ծալրայիշ կարծիքներ յայտնել են Լիննէլն ու Պրունէր-Բէլը: Առաջինն ասում է, թէ ինքը ոչ մի առանձնալատկութիւն չգիտէ, որով մարդը կապկից տարբերուէր. երկրորդը պընդում էր, թէ մարդը ոչ միայն մի առանձին թագաւորութիւն, ալլև մինչև անդամ մի բոլորովին առանձին աշխարհ է ներկալացնում: Այս երկու կարծիքն էլ չեն ընդունուած, աւելի ընդունելութիւն գտել է այն կտրծիքը, թէ մարդը պէտք է կտրմէ մի առանձին, մարդկալին թագաւորութիւն:

Բայց տեսնենք, թէ փաստերն ի՞նչ են ասում:

Մենք տեսնում ենք, որ բոլորն ու կենդանիներն երկու թագաւորութիւն, օրգանիզմների երկու սէրիա են կազմում, որոնք միմեանց ալնպէս են միանում, որ ստորին բոլորը ստորին կենդանիներից չեն տարբերում: Եթէ մարդն էլ մի առանձին թագաւորութիւն կազմէր, որ միանար կենդանակտն թագաւորութեան հետ, ալն ժամանակ ստորին կենդանիներն ու ստորին մարդիկը պէտք է միմեանց ցեղակից լինէին, որ իսկապէս չեն: ստորին մարդիկը միայն մի որոշ աստիճանով մօտենում են չորս ձեռանիների խմբի ամենից բարձր կանգնած անդամներին—մի փաստ, որ ապացուցանում է, թէ մարդն էլ միայն մի խումբ է ներկայացնում և ուրիշ ոչինչ:

Նաև կամենում էին, որ մարդը յառաջակարգերի ամենաբարձր կաթնասունների խմբի մէջ մի առանձին ընտանիք կազմէր, բայց և այս կարծիքի հետ չի կարելի հեշտութեամբ համաձայնել, որովհետեւ մարդը բոլոր կապիկներից էապէս տարբերում է ծնոտա-ատամալին գործարանով և ուղղուած գնացքով—երկու առանձնալատկութիւններ, որոնց հետեւում են ուրիշ շատեր:

Այն դասակարգութիւնը, որով մարդը յառաջակարգերի խմբի մէջ մի որոշ տեղ է բռնում, ինձ առ ալժմ տմենից լուսն է թում: Վերոյիշեալ երկու առանձնալատկութիւնների հիման վրայ մենք պէտք է մարդուն բաժանենք կապիկից և յառաջակարգերի խումբը երկու առանձին կարգի բաժանենք, մարդու և կապիկի *): Այն առանձնալատկութիւններին, որոնցով մարդը տարբերում է իրեն ամենամօտ կենդանիներից, կարելի է ուրիշներն էլ աւելացնել, թէև սրանք ալնքան նշանաւոր չեն: Այսպէս օրինակ, նորմալ մարդու գանգի տարողութիւնը միշտ 1000 խոր. սանտիմետրից բարձր է լինում, մինչդեռ կապիկնը երբէք չի հասնում ալդ թուին

*) Լինէլի սիստեմում լառ աջակարգերին պատկանում են՝ մարդը (homo), կապիկը (simia), կապիկիկը (lemur) և չպիկը (vespertilio).

և սովորաբար 500 խոր. սանտիմետրից չի անցնում։ Սակալն մարգու գանգը կապկի գանգի հետ էտանալավէս նման լինելով, մի քանի միայն իրեն լատուկ առանձնալատկութիւններ ունի։ Սրան պէտք է աւելացնել նաև ալն, որ մարդկալին սեռը համաշխարհալին լինելով կարող է լարմարուիլ բոլորովին տարբեր կլիմաների, եւ վերջապէս, պէտք է ի նկատի ունենալ, որ մարդն օժտուած է խօսելու և հոգեկան առանձնալատկութիւններով, որոնցով անհամեմատ բարձր է կանգնած միւս բոլոր կենդանիներից։

Ժ.

ՄԱՐԴԿԱՍՑԻՆ ՑԵՂԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ

Մարդկալին ցեղերի դասակարգութեան համար մինչեւ այժմ արուած բազմաթիւ փորձերը պէտք է անյաջող համարել և հեշտ հասկանալի է, թէ որքան գժուար է ալդ։ Երկրագնդիս վրայ գտնուած զանազան ժողովրդների մասին մեր ունեցած տեղեկութիւններն ալնքան լիտագործար չեն, որքան անհրաժեշտ է ալդ նպատակի համար, որովհետև երկու ամբողջ մալր ցամաքներ՝ Աֆրիկան և Աւստրալիան և Խաղաղ օվկիանոսի շատ կղզիներ մարդաբանական և ազգագրական տեսակետից շատ քիչ են ուսումնասիրուած։

Մարդկանց դասակարգելիս բաւական մեծ նշանակութիւն էին տալիս զանազան ժողովրդների սովորութիւններին (coustume, օբյակ), սովորոյթներին (l'habitude, որակակա), կրօնական հաւատալիքներին, աւանդութիւններին և ալյուբալց շուտով համոզուեցան, որ սրանք էտան նշանակութիւն չունին, որովհետև սովորութիւնները, սովորոյթները և հաւատալիքները հեշտութեամբ ձեւափոխւում են և մինչեւ անգամ աւանդութիւնները ժամանակի ընթացքում խեղաթիւրում, ձեւափոխւում և կամ սարքում են։

Մեծ նշանակութիւն էին տալիս լեզուին, ենթադրելով թէ նրանց նմանութիւնն ապացուց է, որ ալդ ժողովրդները ցեղակից են։ Բալց նշանաւոր լեզուաբան Մաքս Միւլլէրն

ալս մասին հետևեալն է ասում. «Ցեղագրութեան և լեզուաբանութեան միջև պէտք է խիստ սահման դնել, գոնէ առայժմ։ Նատ վիճաբանութիւններ և թիւրիմացութիւններ են յառաջանում, երբ լեզուն քննելով, կամենում են արեան մասին գաղափար կազմել և կամ հակառակը։ Եթէ ալս երկու գիտութիւնները միմեանցից անկախ կերպով դասակարգէին ժողովրդներն ու լեզուները, այն ժամանակ միայն կարելի կը լինէր համեմատել միմեանց հետ ստացուած եզրակացութիւնները, ապա թէ ոչ՝ շատ հեշտութեամբ կարող էին չարաչար սիսալուել Կարելի է այն ևս աւելացնել, որ Հիւսիսալին Ամերիկա գաղթող եւրոպացինները շատ շուտ են մոռանում իրենց բարբառը և իւրացնում ամերիկացինների սովորութիւններն ու լեզուն, այն ինչ մի քանի սերունդների վրայ արահպանում է իրենց գանգի սկզբնական ձևը։ Նաև հաստատուած է, որ մի քանի գէպքերում յաղթուած ժողովրդներն իւրացրել են յաղթողների լեզուն Բայց և այնպէս՝ չպէտք է արհամարհել այս կրիտերիում, որովհետև շատ գէպքերում լեզուների ազգակցութիւնը արեան ազգակցութիւնն է ցոյց տալիս։ Աւելի մեծ նշանակութիւն ունէին Փիզիքական լատկութիւնները, որովհետև դրանք միմիայն կերպարանափոխող պատճառների յարատելու զօրեղ ազդեցութեամբ և երկար սերունդներից լետոյ են փոխւում։ Սկզբում կաշուի գոյնն էին նկատի առնում, որի համեմատ և մարդկանց բաժանում էին սպիտակ, սև, դեղին, կինամոնագոյն և կարմիր ցեղերի, բայց որովհետև այս դասակարգութիւնը բաւականացուցիչ չէր, ուստի Հեկէլն առաջարկեց մարդկալին ցեղերը դասակարգել մազերի ձևի համեմտու։ Նա բաժանում է գանգրահեր և ողորկահեր ցեղերի։ Առաջնի մէջ պէտք է տարբերել ֆնջաձև (պյուկո-վոլօսայ) մազաւորներն գեղմնաձև մազաւորներից։ Երկրորդի մէջ հարթ մազաւորներն կոինճ մազաւորներից։ Այսպիսով ստացւում է հետևեալ դասակարգութիւնը։

<i>Գանգրահեր ցեղեր</i>	<i>Փնջաձև մա-</i>	<i>Պապուասներ</i>
	<i>զաւոր ցեղեր</i>	<i>Հոտենդոտներ</i>
<i>Դեղմնաձև մա-</i>	<i>Կաֆր</i>	
	<i>զաւոր ցեղեր</i>	<i>Աֆրիկացի</i>
<i>Ողորկահեր ցեղեր</i>	<i>Աւստրալիացի</i>	
	<i>Հարթ մազա-</i>	<i>Մալայցի</i>
	<i>ւոր ցեղեր</i>	<i>Մոնղոլ</i>
		<i>Հեպերբորիացի</i>
	<i>Կոփնձ մա-</i>	<i>Դրավիդներ</i>
	<i>զաւոր ցեղեր</i>	<i>Նուբիացիներ</i>

Բայց այս դասակարգութիւնն էլ բաւականացուցիչ չէ,
որովհետեւ միմիայն մազերի ձևի վրայ է հիմնուած:

Ժ.Ա.

ՄԱՐԴԿԱՑԻՆ ՑԵՂԵՐԻ ԱՌԱՋՆԱՑԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. ԱԽԾԾԱԼԻԱԿԱՆ ՑԵՂ.

Ինչպէս Աւստրալիայի գրեթէ բոլոր օրդանիզմները, այնպէս և՝ մարդիկը տարբերում են միւսներից, ուստի և նըրանց մի առանձին տիպ են համարում: Այս աւստրալիացիների Փիզիքական առանձնայատկութիւնները հետեւեալներն են: Միջին հասակը տղամարդկանց՝ 1,62 մետր, կանանց՝ 1,58 մետր է. մարմինը ճկուն է. ոտներն ու ձեռները երկար և բաւական նիշար. փորը գուրս ցցուած. ճակատը նեղ. աչքերը փոքր, սե և ներս ընկած. քիթը լայն և տափակ. ալտոսկը ները լայն. ծնօտը ամուր. բերանը մեծ, ուռած շրթունքներով. մազերը երկար, կոկիկ ալեկերպ (ՅՈՆԻСՏՅԱՅ), խոպոս, բայց ոչ գանգուր. սե կամ մութ շագանակագոյն: Մարմնի վրայ կան շատ մազեր. միրուքը երկար է: Մորթին սե կամ մութ—կինամոնագոյն է և անդուր հոտ է արձա-

կում: Գանգի տարողութիւնը 1200 խոր. սահմետաբից փոքր ինչ աւելի է: Բնակում է Աւատրալիալում:

Մտաւոր ընդունակութիւնները սաստիկ թով են: Ամօթխածութեան մասին աւատրալիացին բոլորովին գաղափար չունի, այնպէս որ բարոզիչները չկարողացան նրանց հանդերձ հագնել սովորեցնել: Նա գեղերինում և կտածում է իւր մարմինը և ահագին ուշադրութիւն է գարձնում մազերի և մօրուքի վրայ: Թափառական կեանք է վարում և սաստիկ անկատարելագործուած հիւղերում տալլում: Սրանց մի քանի ժողովուրդները մինչև տլժմ էլ մարդակեր են:

2. ՆԵԳԻԱՆՄԱՆ ՑԵՂ.

Նեգրիտաննմանները փոքրահաստկ են (1,47 մ.), ունին սև գանգուր մազեր, սև փայլուն մորթի, կարճ միրուք: Ապրում են Անդամանեան կղզիներում և Մալովկա թերակղզու խորքում. ենթագրում են, թէ առաջները նրանք ալժմեանից աւելի մեծ տեղ էին բռնում:

3. ՏԱՍՄԱՆԵԱՆ ՑԵՂ.

Այս ցեղն ալժմ անլաւտացած է: Տասմանցիների հասկը 1,67 մինչև 1,73 մետր և շատ հազիւ մի քիչ աւելի էր լինում: Նրանք ունէին լայն և լաւ զարգացած կուրծք, երկար ձեռներ, փոքր և քնքոյշ մատներ և կապկի ոտներ: Նրանց մորթին անհարթ էր և պինդ, ոչխարի հոտով և մըր գոյնով. գանգուր մազերը ցած էին թափում երկու սեռի ճակատների վրայ: Տղամարդիկ խիտ մօրուք ունէին և բացի գրանից ամբողջ մարմինը զուրկ չէր մազերից, և այս շատ անգամ կանանց վրայ էլ էր նկատում: Կենդանի, խոր աչքերը մութ-կինամոնագոյն ծիածանամաշկ ունէին: Կարճ, լայն քիթը արմատի մօտ տափակացած էր և սաստիկ մեծ պնչեր ունէր: Այս բոլորին աւելացրէք և ահագին բերանը, հաստ շրթունքը, սպիտակ, մեծ ատամները, նեղ և ցած ճակատը և լայն, բայց կարճ գունչը, և կտանաք տասմանցու պատկերը: Գանգի տարողութիւնն աւստրալիացիներից փոքր ինչ մեծ է: Բնակում էին Տասմանիալում: Տասմանցիներից

մեզ մնացել են միայն մի քանի գանգեր, որ պահում են զանազան թանգարաններում, այս ցեղի վերջին ներկայացուցիչների լուսանկարները և ճանապարհների լիշտութիւնները։ Այս վայրենինների կորստեան համար սաստիկ մեղաւոր են անգլիացինները, որ նրանց հետ վայրենի կենդանինների պէս էին վարւում։

4. ՊԱՊՈՒԱՍՈԿԱՆ ՑԵՂ.

Պապուաս տղամարդու հասակը 1,60 մետր և կնոջը՝ 1,50 մետր է։ Նրանք լաւ կազմուածք ունին. միայն անդամները թոյլ են և ներբանը հարթ։ Մորթի գոյնը սև կամ շոկոլաթի է։ Քիթը հաստ և արմատի մօտ լայն է, բայց վերև ցցուած և ծռուած է, զրթունքները հաստ են, ճակատը ցածր։ Առատ, սև, ոլորուն մագերը սովորաբար մի տեսակ ահագին կեղծ ծամ են (ուստի) կազմում։ Տղամարդու գանգի տարողութիւնը մօտ 1450 խոր. սանտ., կնոջը՝ 100 խոր. սանտ. փոքր է։

Բնակում են Մելանեզիայում, այսինքն Նոր-Գվինէէ բոլոր կղզինների խմբերը, մինչև Վիտա կղզինները։ Սրանց են պատկանում Նոր-Գվինէացինները, որ ցեղի ամենամաքուր տիպն են ներկայացնում, Ագմիրալտեան կղզինների, Նոր-Բրիտանիա, Արշիպելագի, Սողոմոննեան, Նոր-Գիբրիդեան, Նոր-Կալեդոնեան կղզինների և Վիտա կղզու բնակիչները։

Մելանեզիայի մի քանի դէպի արևելք գտնուող մասերում նկատւում է վերևում նկարագրուած մաքուր տիպից շեղումներ, միայն սա պէտք է ուրիշ ցեղերի և մանաւանդ պոլինեզական տարբերի հետ խառնուելուն վերագրել։ Աչքից չպիտի թողնենք և կաթոլիկ քարոզիչների այս վայրենինների սովորութիւնների վրայ ունեցած ազգեցութիւնը, որ մասմբ վերջացրել է մարդակերութիւնը, մտցրել հանգերձի գործածութիւնը և մեղմացրել նրանց վայրենի հակումները։

5. ԿԱՊՈԱՆԵԱՆ ՑԵՂ.

Ես այսպէս եմ կոչում առաջները հոտտենդոտ կոչուող ցեղը. և որին պատկանում են հոտտենդոտներն ու բուշ-

մէնները։ Կապօտանցիներն ունին սև, գանգուր մազեր, փոքրիկ հասակ, հաստ բայց ոչ նեգրինի չափ շրթունքներ, կարճ մօրուք, մարմնի վրայ քիչ մազեր, փոքրիկ քիթ, լախ պընչերով, փոքրիկ կղակ, կիսախուփ։ Բայց ոչ շիլ աչքեր, փոքրիկ ձեռքերը ու ոտներ։

Հոտտենդոտները ընտելում են Աֆրիկայի հարաւարեւելեան ծալրում և տարածւում են դէպի հիւսիս մինչեւ 19⁰ հարաւալին լայնութեան։ Բուշմէնները դլխաւորապէս ապրում են Օրանժ գետի ափերում, բայց և տարածւում են դէպի հիւսիս, մինչև Կումէնէ և Զամբեզի, ալսինքն մօտաւորապէս մինչև հարաւալին լայնութեան 27⁰։

Հոտտենդոտների շատակերութիւնն անհաւատալի է։ Նրանք ուտում են մսի ահագին կտորներ և երբ նրանց ստամոքսը լի է լինում, թաւալում են գնանին նպաստելով մարսողութեան։ Կանալք տղամարդկանցից յետ չեն մնում և մսի ահագին քանակութիւն կլանելով՝ մարսողութիւնը արագացնելու համար ստրուկներին տրորել և լուալ են տալիս իրենց ստամոքսը, յետոյ երբ փոքր ինչ թեթևութիւն են զգում, նորից մեծ ախորդակրով սկսում են ուտել։ Ալպիսի կնոջ մասին Դանտէի հետ միասին կարելի էր տսել.

Che mai non enpie la bramosa voglia,
E dopo l pasto ha più fame che pria *).

6. Կ Ա Ֆ Ր Ց Ե Ղ.

Կաֆրերը կամ աւելի լաւ է տսել Աբանտուսները, ընդհանրապէս՝ մեծ, կտմ, յամենալն դէպս, միջինից աւելի հասակ ունին (1,70 մետր). գանգի տարողութիւնը հաւասար է մօտ 1450 լս. սանտ., մազերը ոլորուն են, շրթունքները հաստ, կաշին կինամոնագոյն, անդիւր հոտով, մարմնի և կղակի վրայ կալ քիչ մազ։ Ապրում են Աֆրիկայի հարաւում, մօտաւորապէս մինչև հասարակածը։ Աբանտուսներին պատկանում են բազմաթիւ սերունդներ և ժողովուրդներ, ինչ-

*) Երբէք չբագենալով իւր ցանկութիւնից նա ուտելուց իտու առաջուանից աւելի քաղց է զգում։

ալէս՝ կաֆրեր, սուտագիլներ, շուտաններ, կօնգո և դամարի նեղը-ներ։ Կաֆրերի հետ հաշւում են և զուլումներին, որոնք բաւական յայտնի են քաջամարտիկ զինուորներ լինելու պատճառով։

7. ՆԵԳՐԻ ՑԵՂ.

Նեղը տիպը հեղա չէ որոշել, որովհետև նրանք սաստիկ տարբերում են միմեանցից, բայց և այնպէս՝ ընդհանրապէս կարելի է ցոյց տալ հետեւեալ առանձնա-յատկութիւնները։ Նեղը բարձր և վայելուչ հասակ ունի, որ երբեմն չափազանց բարձր, մի-մի անգամ էլ սաստիկ փոքր է լինում։ Գանգը երկար է, նեղ ճակատով և քունքի խոր խոռոշներով։ Աչքի ընկնող ալոռուկ-քեր, երկար և նեղ գէմք, սկզ. հորիզոնական քիչ բացուած աչքեր, լայն բերան, սաստիկ սպիտակ ատամներ, հաստ, ուռածած զրթունք-


ՆԵԳՐԻ ՑԵՂ.—Աղջիկ։

Ներ, լայն, զնջխուած, մանտանդ հիմքի մօտ, քիթ. կարճ կղակ. ահա նեղը յատկութիւնները։ Մորթին կինամոնագոլն է, որ սեռութեան է հասնում. մասամբ ծածկուած են մա-

զով և առանձին անդուր հոտ է արձակում, և նրան քսուելիս թափշի տպաւորութիւն է թողնում: Մազերը սև, կինամոնագոյն են, նոսր մօրուքը շատ ուշ է դուրս գալիս: Փոքրիկ նեղ կոնք ունի: Գանգի տարողութիւնը 1400 լի. սանտ. պակաս է: Բնակում է Հասարակածի և Խեցգետնի արևադարձի միջև գտնուող երկրում, տարածում է դէպի արևելք մինչև Ատլանտիան ովկիանոսը, իսկ արևմուտքում մինչև ջուրը չէ հասնում: Սակայն, այս տարածութեան մի մասը, ինչպէս յետով կը տեսնենք, նուբիացիներն են բռնում:

Անհոգութիւնը, ծուլութիւնը և ոչ նախատեսութիւնը կազմում են նեգրների գլխաւոր առանձնալատկութիւնները,



Ն Ե Գ Ի Ւ Ց Ե Ղ .—Բալալօ տոհմ.

Ն Ե Գ Ի Ւ Ց Ե Ղ .—Բանզալացի.

որոնք սիրում են ուրախութիւն, աղմկալից խաղեր, երաժշտութիւն և գիշերալին պարեր և որոնք անց են կացնում ամբողջ օրն անգործ և քնած:

Նրանց են վերագրում Վերին Գլինէի, Սենեգամբիա-

լի, արևմտեան և կենդրոնական Սուդանի նեղըներին, ինչպէս և արևելեան Սուդանի նեղըներ—նիամ-նիամներին և ականերին։

8. ՄԱԼԱՅԵԱՆ ՑԵՂ.

Այս ցեղը մօտ ազգակից է ալն ցեղին, որ բնակւում է Պոլինեզիալում, որից սակալն նրան տարբերում են ինչպէս տարբեր երկրում բնակուելու, այնպէս և՝ իսկապէս նրանց մէջ եղած տարբերութիւնների պատճառով։ Մալայցիների մորթին բաց-կինամոնագոլն և երբեմն էլ պղնձագոլն է, մօրուքը նոսոր, աչքերը չափաւոր բացուած, սև կամ շագանակագոյն և փոքր ինչ շիլ, քիթը կարճ, լայն, տափակ և լայն պնչերով։ ճակատը բարձր, ուռուցիկ, բերանը մեծ, հաստ դուրս ցցուած զրթունքով, ծնօտն և ալտոսկը դուրս ցըցուած։ Մալայցիները սովորաբար փոքրահասակ են և միջահասակներ շատ քիչ են պատահում։ Երկու սեռը միմեանց այնքան նման են, որ շատ դէպքերում դժուար է առաջին խոկ հայեացքով որոշել, թէ կի՞ն է առջևեինդ թէ տղամարդ։ Բնակում են Մալակկա թերակղզում, Զոնդի արշիպելագի կղզիներում, Փիլիպպան կղզիներում և Միկրանեզիայում։

9. ՊՈԼԻՆԵԶԵԱՆ ՑԵՂ.

Պոլինեզիացիները լաւ կազմուածք և գեղեցիկ հասակ ունին։ Գանգի տարողութիւնը գրեթէ հաւասար է եւրոպացիներին (1480 խ. ս.): Նրանք ունին ձուաձիր երես, խոկ գոյնը տատանւում է կինամոնագոլնի (Սանդվիչեան կղզիների բնակիչները և մաօրիսները) և բաց-գեղնագոլնի միջև։ Մի քանիսի քիթը կարճ և լայն է, միւսներինը՝ սուր և մինչև անգամ արծուալին։ պնչերը լայն են։ Աչքերը սև են, ամբողջովին բացուած, ոչ շիլ։ Մօրուքի մազերը քիչ են, բայց Մալայցիներից շատ։ Դլիքի մազերը սև են, հաւասար և ողորկ, երբեմն ոլորուն կամ գանգուր, որ եւրոպացիների հետ խառնուելու հետևանք է։ ճակատը բարձր է։ Հակուած-

են գերանալու։ Պոլինեզիացիները տարածուած են Մեծ ովկիանոսի ահագին տարածութեան կղզիների վրայ և բնակում են բացի Նոր-Զելանդիալից (Մաօրիսներ) և Սանդվիչեան կղզիներից (Կանօվներ) Տոնդա, Սամօտ, Կուկ, Տախտի, Պոմոտու և Մինդանա կղզիներում։

10. ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ՑԵՂ.

Այս ցեղի առանձնայտկութիւններն են՝ միջին հասակ, կանալք շատ ցածր են տղամարդկանցից, Երեսը լալն և կոր,

բարձր և աչքի ընկնող ալտոսկրներով։ Լալն, ուռած շրթունք։ Աչքի խոռոչը վեր և դուրս է ուղղուած։ Բարակ, սև ունքերի կամարները աննշան։ Քիթը լալն, տափակ, լիշեցնում է նեղրի քիթը, միայն նըրանից մի քեչ փոքր է։ Մորթին բաց-դեղին է, երբեմն կինամոնագոյն և մինչեւ անգամ սևի խփող։ Թէ կանանց և թէ տղամարդկանց գըլխի խիտ, կարծր, սև

ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ՑԵՂ.—Մոնղոլ.

մազերը համարեա միւնոյն երկարութեան են։

Պեխերը սաստիկ փոքր են, իսկ միրուքը աճում է միայն կզակի ծալրում, մարմինը զուրկ է մազերից։ Այս ցեղը բռնում է արևելեան Ասիալի մեծ մասը (Զինաստան, Ճապոն, Մանջուրիա և այլն), ալդ ցամաքի հարաւ-արևմտեան մասը (Տոնկին, Աննամ, Սիամ, Բիրման), Հիւսիսալին Սառուցեալ ովկիանոսի ափերի մեծ մասը, Ասիալի կենդրոնական և արևմտեան շատ մասեր (Մոնղոլիա, Թուրքեստան և



ալլն), հիւսիսային Եւրոպայի մի քանի տեղեր (Ֆինլանդիա) և հարաւարևմտեան Եւրոպայի մի մասը (Վենգրիա, Եւրոպական Տաճկտուտան):

Սրան պատկանող բազմաթիւ տղթերից կը լիշեմ չինացիներին, կորէացիներին, ճապոնացիներին, աննամիացիներին և տոնկինցիներին, սիամցիներին, բիրմանցիներին, մոնղուներին, սամօեգներին, տունգուզներին, թուրքերին և Փիններին:

11. ՀԻՊԵՐԲՈՐԵԱՆ ՑԵՂ.

Հիպերբօրեանները (հիւսիսայինները) մոնղոլներին ցեղակից են և միայն նրանց մի ուրիշ տեսակն են ներկալացնում, որ կեանքի առանձին պայմանների պատճառով փոխուել են: Նրանք տարրերւում են հետևեալ առանձնալատկութիւններով: Փոքրիկ հասակ, որ լառաջանում է աւելի կարճութների, քան թէ իրանի պատճառով: Ողորկ, ուղիղ ու մազեր: Մորթին կինամոնագոյն է, որ շատ անգամ սպիտակի, գեղինի կամ կարմրի է տալիս: Սաստիկ գուրս ցցուած ալտուկրներ, ուստի և լայն երես: Լայն բերան, ուռած շըրժունքներով: բաւական զարգացած ծամելու գործարան: Նեղ և զիլ աչքեր: Բնակում են Ասիայի հիւսիս-արևմտեան և Ամերիկայի հիւսիսային մասում:

Հիպերբօրիացիներին պատկանում են Ալէուտեան կղզիների և Ալեասսկա թերակղզու ալէուտները. Իեզօ կղզու, Կուրիլեան կղզիների և Սախային կղզու հարաւային մասում քնակող սմինները, Ասիայի հիւսիս արևմտեան ծալրի գուկղիները, Ամերիկայի հիւսիսային ծալրում, Սառուցեալ ովկիանոսի ափի ընթացքով, Գրելանդիայից մինչև Բերինգեան նեղուցը բռնող էսկիմոսները:

12. ԱՄԵՐԻԿԵԱՆ ՑԵՂ.

Ամերիկացիների լատկանիշ առանձնալատկութիւնները հետևեալներն են. Հասակը բաւական բարձր է, ոմանք (պա-

տագոնցիները) սաստիկ բարձր, ուրիշներ (Փիդջիացիներ) ամելի փոքրահասակ են: Մորթին ձիթենու-ճակնդեղի գոյնի է, որ երբեմն սպիտակի և կարմրի խառնուրդին, երբեմն կինամոնագոլնի է խփում: Սև, հարթ, երկար մազերն ալնքան կարծր են, որ նրանց համեմատում են ձիու մազի հետ. պեխերն ու մօրուքը նոսր են և ուշ են գալիս. մարմինը համարեա բոլորովին զուրկ է մազերից: Աչքերը փոքր են, խոր, աչքի խոռոչը մեծ մասամբ թեք է, թէև հորիզոնական էլ են լինում: Ունքի վերևի կամարները լաւ են զարգացած: Քիթը սուր, մինչև անգամ արծուալին և լալն պնչերով: Երեսը լայն և գուրս ցցուած այտոսկըներով. ուղղահայեաց ամուր ատամներ, որ շատ հազիւ են փշանում: Ճակատը լալն, բայց ցածր և թեք: Բերանը մեծ: Սրան պատկանող ժողովուրդները շատ անգամ աւելի երկարագույն են, քան թէ լալնագլուխ, զանգը լետեկից տափակ, համարեա ուղղահայեաց է, շատ տեղերում արուեստօրէն այլակերպած է: Բոնում է Ամերիկան, բացի ալն մասը, ուր բնակում են հիպերբորիացիները:

Ամերիկական ցեղի դաստիարգութիւնն այնուամենայնիւ մինչև ալժմս էլ անուրջ է համարւում և մինչև ալժմ հմուտ գիտնականների արած փորձերը կարելի է անյաջող համարել: Սու ալժմ ես տարբերում եմ հիւսիսային - Ամերիկալի հընդիկներին կամ կարմրամորթներին հարաւային Ամերիկալի հնդիկներից: Առաջնին, ուրիշ շատ ժողովուրդների հետ միասին, պատկանում են գակոտները կամ Սիու հնդիկները, ապակները կամ ատարասկները, նազարեները, պուէրլները, կալֆորնացիները և ացտէկները, երկրորդին՝ ինկաները, ակմարները, ատակամները, անտէզինցիները կամ անտիզանները, արառեկանցիները, կարաիբները, Գոախիրօ հնդիկները, Բրազիլիալի հնդիկները, Փիդջիացիները և ուրիշ շատեր:



ԱՄԵՐԻԿԱՆ ՏԵՂ.

13. ՆՈՒԲԻԱԿԱՆ ՑԵՂ.

Նուբիացիները իրենց Փիզիքական լատկութիւններով նեղըների և միջերկրականների միջին տեղն են բռնում, բայց աւելի մօտենում են վերջիններին քան թէ առաջիններին. կաֆրներն աւելի նեղըներին են ցեղակից քան թէ Կովկասեան ցեղին: Նրանք աւելի միջահասակ են քան թէ բարձրահասակ: Մորթին գեղին կիսամոնագոյն կամ կարմիր կիսամոնագոյն է, և կամ պարզ կիսամոնագոյն է իւր բոլոր, մինչև բոլորովին սև, երփնով: Քիթը լայն, մազերը երկար. հարթ կամ ոլորուն. շրթունքները հաստ չեն և մինչև անգամ բարակ են: Բնակում են Աֆրիկայում, միջին Նեղոսի ջրաբաշխում, տարածուելով դէպի կենդրոնական Սեղանը և խառնուելով նեղբական ժողովուրդների հետ:

14. ԴՐԱԿԻԴԵԱՆ ՑԵՂ.

Դրաւիդները մօտ ցեղակից են Կովկասեան ցեղին, և առաջ ալժմեանից աւելի մեծ երկիր էին բռնում: Նրանց առանձնալատկութիւնները հետևեալներն են. գլխի մազերը հարթ և ոլորուն են, մօրուքը փառաւոր, ճակատը բարձր, քիթը նեղ, ուղիղ, շրթունքը փոքր ինչ ուռած, մորթին քիչ թէ շատ թխագոյն, որ երբեմն սևի կամ գեղինի է խփում: Բնակում են առաջաւոր Հնդկաստանում և Ցէլլօնի մի մասում:

Նրանց մօրթին կարող է այնքան մթնագոյն լինել, որ լիշեցնի նեղըներին, որոնց նրանք մօտենում են և՝ իրենց փոքր ինչ ուռած շրթունքների շնորհիւ. բայց նրանց մորթին անախորժ հոտ չի արձակում, մէկ էլ մազերը գանգուր չեն և այտոսկրները գուլք չեն ցցուած: Նրանք մոնղոլներից տարբերում են իրենց ոլորուն մազերով, աւելի մթնագոյն մօրթով և երկար, խիտ մօրուքով:

Դրաւիդներն երեք գլխաւոր ճիւղի են բաժանւում. Հիւսիսային Հնդկաստանի մունղեր, Կարնատիկի, Մատրասի Հիւսիսալին ափի, Գիկանի արևմտեան ափի դրաւիդներ, նեղ մտքով առած և Ցէլլօնի կղզու սինգալեզներ:

15. ՄԻԶԵՐԿՐԱԿԱՆ ՑԵՂ.

Միջերկրականները կազմում են մի առանձին ցեղ, որ կոչում է Միջերկրական կամ սպիտակ կամ Կովկասեան կամ Հնդկա-ատլանդական։ Սա թէ Փիզիքապէս և թէ մտաւորապէս բարձր է կանգնած բոլոր ցեղերից և մարդկութիւնը գլխաւորապէս նրան է պարտական իւր յառաջադիմութիւնը։ Եթէ մարդը սովորել է կտորավարել բնութեան ուժերը և նրանցից օգտուել, եթէ ալժմեան գիւտերի շնորհիւ նա ոչնչացնում է երկրի զանազան մասերի միջև եղած հեռաւրութեան արգելքները, եթէ մարդը կարող է իրեն բնութեան թագաւոր և ստեղծագործութեան գոհար կոչել, այս բոլորի համար պարտական է Կովկասեան ցեղին, որ գեռփառաւոր ապագայ ունի։

Միջերկրականների Փիզիքական առանձնալատկութիւնները հետևեալներն են։ Հասակը փոփօխական է, բայց ընդհանրապէս միջակ կամ բարձր։ Մորթին սպիտակ-վարդագուն, երբեմն թխագոյն։ Մազերը երկար են, շատ անգամ ոլորուն, սև, շաղանակագոյն կամ խարտեալ (շատ քիչ անգում շէկ)։ Խիտ մօրուք միւնոյն գոլների. մարմնի վրայ շատ մազեր կան, մանաւանդ տղամարդկանց։ Նակատը լայն է։ Գանգի տարողութիւնը մօտ 1500 խ. սանտ., երկար երես, քիչ գուրս ցցուած այտոսկրներով։ Փոքրիկ և ուղղահայեաց ատամներ։ Բարակ և վարդագուն շրթունք, խոշոր կզակ։ Սև, շագանակագոյն կամ կտպագոյն աչքեր, այս գոլների զանազան երփնեգնով։ Քիթն ուղիղ, երբեմն էլ արծուալին։


Միջերկրականներին հետեւել հինգ խմբերի են բաժանում։

1) Բասկեր։ Ալժմ բռնում են Սպանիալի մի աննշան մասը։

2) Կովկասցիներ, նեղ իմաստով։ Բռնում են գրեթէ ամբողջ Կովկասը։

3) Կամիտներ։ Բնակում են Հիւսիսալին և արևելեան Աֆրիկայի մի մասում։

4) Սեմիտներ, որ բնակում են Ասիալի հարաւարեմը-



ԿՈՎԿԱՍՆԵԱՆ 867.—Լեզու.

տեսն մասում, Աֆրիկայի հիւսիսում և Մալտա կղզում: Բացի դրանից ցըռւած են ամբողջ աշխարհում:

5) Հնդկա-եւրոպացիներն Բոնում են հիւսիսալին Հընդկաստանը, Աֆղանիստանը, Համարեա ամբողջ Բելուջիստանը, Պարսկաստանը, Փոքր Ասիայի և Եւրոպայի մեծ մասը:

Հնդկա-եւրոպացիներն էլ բաժաննում են երկու ճիւղի: արևելեան կամ ասիական և արևմտեան կամ եւրոպական: Առաջինին պատկանում են Հնդկաստանի հնդկացիները և պարսիկները. երկրորդին՝ կելտերը, լատինացիները, լոյները, ալբանցիները, գերմանացիները և սլաւոնները, չհաշուելով այս ազգերի խառնուրդից յառաջացած ժողովուրդները:

ՓՈՔԻ ԻՆՉ ՎԼԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒԹԻՒՆ: Մի քանի գիտնականներ փորձել են որոշել երկրիս բոլոր բնակիչների ընդհանուր թիւը և հաշուել են մինչև 1440 միլիոնի. թէ որքան գժուար է ճիշտ կերպով հաշուել այդ, երևում է նրանից, որ երկրի մի քանի մասերը դեռ ևս ուսումնասիրուած չեն և մի քանի երկրներում դեռ ևս վիճակագրութիւն չէ արուած և որտեղ էլ արուած է, այնքան թերի է՝ որ չի կարելի բոլորովին վստահիլ:

Վերոլիշեալ հետազօտութիւններն երկու ցեղագրական և աշխարհագրական կերպով էին կատարւում և ստացուած եղբակացութիւնները միմեանցից շատ չեն տարբերուած, ինչպէս երևում է հետեւեալ աղիւսակներից:

ՑԵՂԱԳՐԱԿԱՆ ԱՂԻՒՍԱԿ.

Անհատների թիւը:

I. Աւստրալիական ցեղ, մօտ	100,000
II. Պապուասների ցեղը, սրա հետ հաշուած և նեղրիտոններին	2,000,000
III. Հոտտենդուանների ցեղ, հետը հաշուած և բուշմէնները	900,000



ԿՈՎԿԱՍԻԱՆ 869.

IV.	Կաֆրական ցեղ	12,000,000
V.	Նեգրական ցեղ, կասկածելի թուով .	130,000,000
VI.	Մալայան և Պոլինեզիական ցեղ .	29,000,000
VII.	Մոնղոլական ցեղ	563,000,000
VIII.	Հիպերբորեան ցեղ	40,000
IX.	Ամերիկական ցեղ	8,500,000
X.	Դրաւիդեան ցեղ	40,000,000
XI.	Նուրիական ցեղ	25,000
270	Միջերկրական ցեղ	623,000,000
		Ընդամենը . . 1,434,140,000

~~~~~

### ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԴԻԽՈԱԿ

I. Բիսի եւ Վագների (1882) աղիաակը.

| ՏԵՂԸ                  | Արկրի մակերեսովը հազար քառասունութիւննեած. | Բնակչութեական զարգներով հաշուածութիւննեած. | Մի քառականակ կուակի կիւլունարի վրա լընկած բնակիչները. |
|-----------------------|--------------------------------------------|--------------------------------------------|-------------------------------------------------------|
| Եւրոպա . . . . .      | 9,730,6                                    | 327,743                                    | 34                                                    |
| Ասիա . . . . .        | 44,580,8                                   | 795,591                                    | 18                                                    |
| Աֆրիկա . . . . .      | 29,823,3                                   | 205,823                                    | 7                                                     |
| Ամերիկա . . . . .     | 38,473,1                                   | 100,415                                    | 2,6                                                   |
| Աւստրալիա և Պոլինեզիա | 8,952,9                                    | 4,232                                      | 0,5                                                   |
| Բևեռալիին երկրներ . . | 4,478,2                                    | 83                                         | —                                                     |
|                       | Ընդամենը                                   | 136,038,9                                  | 1,433,887                                             |
|                       |                                            |                                            | 10,5                                                  |

## II. Կոլտի աղջւսակը (1883).

| ՏԵՂԸ                  | Նրկրի մակերնողթը հազար քառակուսի մետրով հաշուած: | Բնակչութեական գույքը հացարձակ թիւը հազարներով հաշուած: | Մի քառականակի կուսի կիւլոմետրի վրաէ ընկած բնակչութերը: |
|-----------------------|--------------------------------------------------|--------------------------------------------------------|--------------------------------------------------------|
| Եւրոպա . . . . .      | 9,815                                            | 325,000                                                | 33,1                                                   |
| Ասիա . . . . .        | 44,580                                           | 745,000                                                | 16,7                                                   |
| Աֆրիկա . . . . .      | 29,820                                           | 120,000                                                | 4,0                                                    |
| Ամերիկա . . . . .     | 40,500                                           | 104,000                                                | 2,6                                                    |
| Աւստրալիա և Պոլինեզիա | 8,800                                            | 3,500                                                  | 0,4                                                    |
| Բևեռալին երկրներ . .  | —                                                | —                                                      | —                                                      |
| <b>Ընդամենը</b>       | <b>133,515</b>                                   | <b>1,297,500</b>                                       | <b>9,7</b>                                             |

Եւ այսպէս՝ երկրագնդիս բոլոր բնակիչների ընդհանուր թիւը կարելի է մօտաւորապէս 1440 միլիոն հաշուած, որից տարեկան մեռնում են մօտ 31 միլիոն, այսինքն 45-ից մէկը և կամ իւրաքանչիւր 2 բոլոր մի մարդ։ Եթէ մի քանի բացառութիւնները չհաշուենք, տարեկան ծնունդների թիւը ննջեցեալների թուրից անցնում է, այնպէս որ մարդկանց ընդհանուր թիւը միշտ բարձրանում է։ Մալտուար մտածեց այս աճումը մի օրէնքի ենթարկել և պնդեց, թէ մինչդեռ բնակիչներն աճում են քանորդական յառաջադիմութեամբ, ապրուստի միջոցներն աւելանում են տարբերական յառաջադիմութեամբ, բայց այս օրէնքը շատ հակառակորդներ ունեցաւ և վիճակագրութիւնն էլ չհաստատեց այն։ Ապրուստի միջոցների բազմանալն այնքան բազմաթիւ պատճառներից է կախուած, որ անկարելի է նրանց ճշտօրէն կարգաւորել։ Նա կախուած է տեղական պարմաններից (որ շատ անգամ շատ բարդ են), բնակիչների զարգացման աստիճանից, գիւտերի քանակութիւնից և նրանց յատկութիւնից, հասարակական կազմակերպութիւնից և արդիւնաբերող դասակարգից

ու անգործների միջի լարաբերութիւնից։ Խնչ վերաբերում է մարդկանց թուի աւելանալու օրէնքին, գուցէ, երբէք իրականութիւնը չկարողանալ հաստատել այն, որովհետեւ դա արտայալտում է բազմանալու ամենամեծ արագութիւնը, և ոչ թէ իրականը, որ կտխուած է ոչ միայն ծննդաբերական լատկութիւնից, ալլև ցեղի թշնամիների թուից և նրա վրայ ազգող աւերիչ պատճառներից։

Կենդանիները—միևնունը կարելի էր ասել և բոլսերի վերաբերութեամբ,—շատ հազիւ են քանորդական լառաջադիմութեամբ առում։ Սրան իբր ապացոյց կարող է ծառալել այն, որ մի քանի տեսակներ, օրինակ, փորի ճենան, միլիոնաւոր ձուեր են ունենում, բայց և այնպէս՝ հազուագիւտ են։ Մարդկանց մէջ տեսնում ենք, թէ ինչպէս ամբողջ ցեղեր և ժողովուրդներ կորչում են, ինչպէս օրինակ աւտրալիացիները, հոտտենդոտները, կար-



ԿՈՎԿԱՍՍԱՆ ՑԵՂ. —Հայուհի.


մրամորթները, կամչադալները և ուրիշներ, գեռ չխօսենք տասմանցիների մասին, որոնք արդէն անլալտացել են, իսկ ամենալաւ դրութեան մէջ գտնուող ցեղերն ու ժողովուրդ-

ներն աճում են առ առաւելլ 3%։ Խտալիարում վերջին տաս տարիներում հազարին 6,2 է աւելացել, իսկ Միացեալ Նահանգներում հազարին 24,8 բայց սա շնորհիւ ահազին գաղթականութեան։

Խառնածիններ—Մետիսներ։ Երբ երկու մարդկալին ցեղ միմեանց մօտենում են, ստացւում են միջանկեալ տիպեր, խառնածիններ, որոնք լետոյ սաստիկ դժուարացնում են ցեղերի ճիշտ բաժանումը։ Ալսպէս սպիտակի նեգրուհու կամ նեգրի սպիտակ կնոջ հետ մօտենալուց յառաջանում է մուլատ, որ ոչ հօր և ոչ մօր բալոր առանձնալատկութիւն-

ներն ունի։ Սովորացար հայրը սպիտակ է լինում, իսկ մալրը՝ նեգրուհի, որովհետև սպիտակ կինը դէպի նեգրները զգուանք է զգում։

Մուլատները, իրենց հերթին, կարող են աճել իրենց մէջ, որի շնորհիւ նրանց թիւը մի որեւ է գտւառում։ Կարող է բաւական մեծանալ։ Շատ անգամ սպատահում է, որ մուլատների լետագալ սերունդները վերադառնում են այս երկու մաքուր ցեղերից մինին, և համարեա միշտ սպիտակ կամ բարձր ցեղին, որովհետև մուլատ կանալք իրենց դժբախտ կը համարէին, եթէ



ԿՈՎԱԱՍԵԱՆ ՑԵՂ.—Հալուհի։

նեղըից երեխալ ունենալին, ուստի և՝ միշտ Կովկասեան կամ սպիտակ ցեղի մարդկանց առաւելութիւն են տալիս: Միացեալ նահանգներում 1854 թ. աշխարհագրութեամբ 405,750 մուլատ կար:

Բացի մուլատներից Ամերիկայում կան չոլոսներ—սպիտակի և հնդիկ կնոջ երեխաներ (Պերուի բնակիչների մեծամասնութիւնը), զամբոսներ—նեգրական և ամերիկական ցեղերի շառաւելիքներ (Բրազիլիայում) կաֆուզոսներ—միւնոյն, զամբոսների ծագումից. միայն աւելի նեգրներին են նման քան թէ ամերիկացիներին: Ընդհանրապէս կարելի է ասել, որ բոլոր մարդկալին ցեղերը խառնածնութեան մէջ արգասաւոր են: Խառնածինները շատ անգամ գեղեցիկ և ճարպիկ են, բայց ոչ բոլորը ուժեղ: Օրինակ, Բրազիլիայում մուլատները ուժեղ և առողջ են, մինչդեռ Աֆրիկայում այդպէս չեն և այստեղ մինչև անգամ առած կալ, թէ «Աստուած ստեղծեց սպիտակին, չգիտեմ, թէ ով է ստեղծել նեգրին, բայց սատանան է ստեղծել մետիսին»:

Ալժմ տեսնենք, թէ խառնածնութիւնը կարող էր նըպաստել մարդկալին ցեղերի շատանալուն: Տարակոյս չկալ, որ խառնածնութեան ազդեցութիւնը սաստիկ էական է: Օրինակ Բարէ—Յուսոյ հրուանգանում հոլլանդացիների և հուտենգոտների խառնածնութիւնից յառաջացել են մետիսներ, որոնք ալնպէս արագ աճել են, որ կարճ միջոցում հիմնել են մի քանի բազմամարդ գաղութներ, ինչպէս օրինակ Նոր Պլատրերգը: Հարաւալին Աֆրիկալի Զօօլասի-կաֆրները նոյնպէս մի խումբ, նորերս կազմակերպուած մետիսներ են, որ յառաջացել են նեգրների արաբների հետ միանալուց, և որոնք իրենց լեզուի վրայ ևս կրում են իրենց ծագման ապացոյցները: Կարելի էր այս տեսակ շատ օրինակներ առաջ բերել: Այս բոլորը հաւանական են գարձնում այն կարծիքը, թէ հին ժամանակները մարդկալին միմիայն մի քանի ցեղեր են եղել, որոնց միախառմամբ ուրիշ ցեղեր են յառաջացել: Միւնոյն հետեանքին են բերում մեզ և ալժմեան մի քանի ցեղերի ուսումնասիրութիւնը, որովհետեւ սրանցից մի քանիսը

շատ պարզ ցուց են տալիս, որ իրենք վերոլիքակալ կերպով լառաջացել են ուրիշ ցեղերից։ Այսպէս օրինակ, հիպերբորէցիները իրենց մի քանի առանձնալատկութիւններով մօտենում են մոնղոլական, մի քանիսով ամերիկական ցեղին, իսկ այս բոլորի երեք ցեղն էլ այնքան մօտ են միմեանց, որ մի քանի մարդաբաններ նրանց բոլորովին չեն տարբերում։



ԿՈՎԿԱՍԻԱՆ ՑԵՂ.—Հայ.

**ՑԵՂԵՐԻ ծագումը**.—Բայց խառնածնութիւնը միայն այնտեղ կարող է գոլութիւն ունենալ, ուր առնուազը երկու ցեղ գոլութիւն ունի։ Այժմ հարց է ծագում, թէ արդեօք բոլոր ցեղերը մէկից են լառաջացել, թէ մարդու երկրիս վը-

բալ երևալիս արդէն մի քանի ցեղեր գոլութիւն են ունեցել. թէեւ այս հարցը դեռ ևս չի կարող վճռուած համարուել, բայց և այնպէս անհաւանական չէ, որ սկզբում միմիայն մի մարդկալին ցեղ գոլութիւն ունեցած լինի, որից և յամբ ու աստիճանաբար զարգացումով յառաջացած լինին միւսները: Այս միւսնոյն եղրակացութեան ենք գալիս ուսումնասիրելով մեր ընտանի կենդանիները: Այսպէս, օրինակ, մի քանի աղաւնիներ միւսներից շատ աւելի են տարբերում քան թէ նեգրական ցեղը կովկասականից, բայց և այնպէս՝ ոչ չի կասկածում, որ աղաւնիները յառաջացել են մի, անտառի աղաւնի տեսակից: Այսպէս և ձիերի ցեղերը տարբերում են միմեանցից, բայց և այնպէս՝ նրանք բոլորն էլ մի տեսակից են յառաջացել: Եւ աղաւնիների ու ձիերի այս ցեղերն շատ կարճ միջոցումն են յառաջացել, մի քանիսը մինչեւ անգամ պատմական շրջանում:

Թերևս կարելի լինի նկատել, թէ ընտանի կենդանիների վրա մարդն ահագին աղդեցութիւն է ունեցել, որ շատ իրաւացի է: Մարդն, իրըև վերաստեղծիչ անհատ, ընտրել է իրեն կարիքներին ամենից լաւ բաւականութիւն տուողին և կամ իւր գեղեցկութեան ճաշակին աւելի համապատասխանողին և կարճ միջոցում զարմանալի հետևանքների հասել: Բայց մարդու վրայ էլ ընական ընտրութիւնն է ազգել: Միմիայն իրենց միջավայրի բարդ պարմաններին յարմարուել կտրողացող մարդիկն են ապրել, և յանձնելով այս օգտաւէտառան ձնայատակութիւններն իրենց սերունդներին, նրանք կարողացել են սկիզբ տալ նոր ցեղերի: Այս ընական ընտրութիւնը պէտք է ահագին աղդեցութիւն ունենալը նախնական մարդկանց վրայ, որոնք միատեղած և հասարակութիւն չէին կազմած, մտաւոր բարձր կրթութիւն չունէին, հետեւապէս և՛ ընդունակ չէին հեռացնելու իրենց շրջապատող կեանքի վառ պայմանները: Բնական ընտրութիւնը շատ յամբ, հազարաւոր սերունդների ընթացքումն է գործել, բայց և այնպէս՝ անմտութիւն կը լինէր մերժել նրա ահագին աղդեցութիւնը:



ԿՈՎԿԱՍԽԱՆ 869

ՍԼԱՎՈՆ.—ԲՈՅԼԶԱՐՈՆԾԻ.

Մարդկալին ցեղերը միմեանցից տարբերող առանձնայատկութիւններն այնպիսիներ չեն, որ չկարողացան դարերի ընթացքում չփոփոխուիլ: Ենթադրենք, որ մարդկալին առաջին ցեղը սև էր, ով կարող է պնդել, թէ նա լետով չէր կարող սպիտակ դառնալ: Մենք գեռ ալժմս էլ նկատում ենք, որ սևամորթ ժողովուրդների զօրապետներն ու կանալք հետզհետէ աւելի բաց գոյն են ստանում, որովհետև աւելի քիչ են լինում արևի տակ և օրուայ մեծ մասը տանն են անցկացնում. միւս կողմից, տեսնում ենք, որ իտալացին և սպանիացին թխանում են, երբ արևի տակ շատ են մնում: Գանգը, որ յարմարւում է ուղեղին, կարող է փոխել իւր ձեւը, նայելով մտաւոր կարողութիւնների զարգացման և վարժութիւններին: Կլիման ահագին ազդեցութիւն է ունենում մորթու և մազերի վրայ, որ ապացուցանում են շատ կենդանիներ: Հասակը, քթի ձեւը, բերանի և տչքի խոռոչի լալնութիւնը, մարմնի անդամների մեծութիւնը և ալլն—սըրանք բոլորն այնպիսի առանձնայատկութիւններ են, որ փոփոխութիւնների են ենթարկում հէնց ամէն մի ցեղի մօտ ևս, որի շնորհիւ և՛ մի քանի ցեղերի մէջ գրանք կարողանում են այն աստիճան զարգանալ, որ գտնակարգութեան հիմունք են ծառայում:

Կեանքի պայմանների մարդու վրայ ունեցած ազդեցութիւնը շատ փաստերով կարելի է ապացուցանել: Ալսպէս, նեղը Ամերիկա փոխադրուելով, աւելի պակաս լառաջնածնօտ է դառնում, ալսինքն նրա ծնօտն ու ատամներն այնքան առաջ չեն ցցում. գանգը աւելի բարականում և կարճանում է. մազերն գանգուր և զրթունքները աւելի պակաս են ուռած լինում. քիթն աւելի ուղիղ. երեսի և ականջների կաշին մասամբ կորցնում է իւր սեռութիւնը: Ալժմեան հիւսիս-ամերիկացին, եանկինը, Փիզիքապէս տարբերւում է անգլօսակալից, որից յառաջացել է: Նրա կաշին թխացել է, մազերն աւելի սևացել, վիզն աւելի երկարել, գլուխն աւելի կլորուել, ալտուկըներն աւելի ցցուել. իսկ մատներն այնպէս երկար են, որ ֆրանսիայում նրա համար եւրոպացիներից



ԿՈՎԿԱՍԻԱՆ ՑԵՂ.—Հրէաներ.

բոլորպին տարբեր կաղապարով են ձեռնոցներ պատրաստում: Բայց այս արտաքին յատկութիւնների հետ միտոին, փոխում են և՝ մտաւոր լատկութիւնները: Այսպէս՝ սպիտակ մարդը և նեգը, Ամերիկա փոխադրուելով, փոփոխութիւնների են ենթարկում, և որ կարևորն է—երկուսն էլ մտենում են տեղական ցեղերին:

Մի շատ հետաքրքիր փաստ լիշտում է Գիլվալդը: 1816 թուին մի քանի հարիւր վիւրտէմբուրգեան ընտանիքներ

գաղթեցին Կովկաս և բնակուեցան Թիֆլիսի մօտ, Ելիսաւետոպոլի նահանգում: Մինչդեռ Կովկասի բնակիչները պարծենում են իրենց գեղեցկութեամբ, այս գաղթականները սաստիկ տգեղ էին և քառանկիւնի երես, շէկ մազեր, կապուտ կամ մօխրագոյն աչքեր ունէին: Բայց հէնց առաջին սերունդներն սկսեցին գեղեցկանալ և սև մազերն ու աչքերը ալլ ևս հազուագիւտ չէին: Նըրորդ սերունդը երկրորդից աւելի գեղեցիկ էր, այնպէս որ վիւրտէմբէրգիներն ալլ ևս չէին ճանաչւում: Եւ ամէն մի նոր սերունդով, նախկին տգեղ գաղթականներն աւելի և աւելի մօտենում էին տեղական բնակիչներին: Եւ որովհետեւ գաղթած կանանց բարոյականութիւնն ոչ մի կասկածիչ չէր ենթարկում, ուստի Հնդկաստանի քակիր կին, այս երեսութը կարելի է միմիայն տեղական պալմանների (արևի, կլիմալի, սնունդի և ալլն) ազգեցութեամբ բացատրել:

Մի օրիշ օրինակ կարող են համարուիլ հրէաները, կին սեմիտական ցեղի այս զօրեղ մնացորդը:




ԿՍՎԿԱՍԽԵԱՆ ՑԵՂ.

Հնդկաստանի քակիր կին, այս երեսութը կարելի է միմիայն տեղական պալմանների (արևի, կլիմալի, սնունդի և ալլն) ազգեցութեամբ բացատրել:

Մի օրիշ օրինակ կարող են համարուիլ հրէաները, կին սեմիտական ցեղի այս զօրեղ մնացորդը:

Սրանց մեծամասնութիւնն Եւրոպայում պահում է իւր առանձնալատկութիւնները, ալսինքն երկար գանգ, սև, խիտ մազեր, քթի հիմքից սկսուղ ունքեր, հաստ շրթունքներ և իրանի համեմատ՝ կարճ ոտներ: Այս առանձնալատկութիւններն ի նկատի առնելով, մենք կարող ենք հաստատել, որ Անգլիայում հրէան մօտենում է անգլիական տիպին, ունենալով հարթ, բարակ և բաց (ԸՅԵՒԼԱՅ) մազեր, բարձը ճակատ և կապոլտ աչքեր: Պիեմոնտում հրէան կլոր գանգ ունի. Ուարէգա Օազիսում, հարաւալին լարնութեան 32° մօտ նա նեգըրի կաշի ունի, իսկ Հարէշստանում նա մինչև անգամ տափակ քիթ և խոպոպ մազեր ունի:



ԿՈՎ. Կ Ա. Ս Ե Ա Ն 8 6 9.

Սեմիտ. հրէակ

մեանց փոխանցումը և մենք կը տեսնէինք, թէ ինչպէս ցեղը շատ դարերի ընթացքում չէր փոփոխուիլ: Այսպէս նեգըր սարուկները, որ նկարուած են հին Բարելոնի պատերի վրայ, բոլորովին նման են ալժմեան նեգըրներին. իսկ նինուէի պատերի և եգիպտական բուրգերի վրա երեսում են հրէաների խմբեր, որ ոչնչով չեն տարբերում ալժմեան հրէաներից:

Այս բոլոր ասածներից հաւանական է, որ սկզբում միայն մի մարդկալին ցեղ է երևացել, որ տարածուել է ըն-

Հասկանալի է, որ այս բոլոր փոփոխութիւնները չէին յառաջանալ, եթէ կեանքի պայմաններն անփոփոխ մընալին: Այս վերջին գէպքում տիրապետող սկզբունք կը մընար, առանձնայատկութիւնների ժառանգաբար մի-

դարձակ երկրիս վրայ և ալսպիսով ենթարկուել կեանքի բոլորովին տարբեր պարմանների:

Կեանքի պարմաններ ասելով, մենք իմանում ենք ոչ միայն ամենալայտնիները, ինչպէս է կլիման, խոնաւութիւնը, արևը, կերակուրը և ալլն, ալլեւ ամենածածկուածները, ալսինքն նրանք, որոնք ազգում են սաղմի վրայ, որոնք կախուած են կենդանական և բուսական պատառաբուծութիւնից, և որոնք լառաջանում են ուրիշ օրդանիզմների հետ յարաբերութիւն ունենալուց: Այս ցեղը, կեանքի տարբեր պարմանների մէջ գրուելով, նոր ցեղերի սկիզբ տուեց, որոնց թիւը աւելի և աւելի աւելացաւ և՝ խառնածնութեան շնորհիւ:

Ընդունելով մի ալսպիսի ենթադրութիւն, տեղի է հարցնել, թէ ուր է մարդկութեան առաջին որբանը, ուր է ալսպէս անուանած դրախտը: Մենք չգիտենք այս: Մի քանի բնապատմաբաններ ենթադրում են, թէ մի ժամանակ գոյութիւն է ունեցել մի ցամաք (Հումերիա), որ այժմ Հընդկական ովկիանոսի ջրերի տակ անլայտացել է, բայց այս, ինչպէս և ուրիշ, գրա նման շատ կարծիքներ չեն կարող բաւականացուցիչ թուով փաստերով հաստատուել:

Մարդկային ցեղերի կորուատը.—Ցեղերի և մարդկանց խմբերի մաս-մաս կամ ամբողջովին կորչելը լայտնի պատմական փաստ է: Հումբուլու Հարաւային Ամերիկայում տեսել է մի ժութեակ, որ նոր ոչնչացած ժողովրդի լեզուով վերջին խօսողն էր: Հին արձաններն ու քարէ գործիները, որ գըտնուել են երկրիս բոլոր մասերում, և որոնց մասին ալժմեան բնակիչները ոչ մի աւանդութիւն չեն պահպանել, ցոյց են տալիս, որ նախկին ժողովուրդները ոչնչացել են: Մի քանի փոքր և ցըռւած ժողովուրդներ, որ նախնական ցեղերի մնացորդներ են, գեռ ևս ապրում են կղզիացած և մեծ մասամբ լեռնոտ տեղերում: Զեռնհաս գիտնականների ասութեամբ նւրապալի բոլոր հին ցեղերը ալժմեան ամենակոպիտ վալրենիներից էլ ստոր էին, որից երևում է, որ նրանք մի որոշ աստիճանով պիտի տարբերուելին այժմ գոլութիւն ունեցող



ԿՈՎԿԱՍԻԵԱՆ ՅԵՂ.—Եղիպտացի կին.

բոլոր ցեղերից։ Տասմանիցիները կամ Վանդիմերի երկրի բնիկները վերջին տասնեակ տարիներումս անլալտացան։

Ցեղի ոչնչանալը գլխաւորապէս՝ լառաշանում է մի ժողովրդի միւսի հետ, մի ցեղի միւսի հետ վարած պատերազմներից։ Վալրենի ժողովրդների բազմանալն որոշ սահմանների մէջ է մնում շատ պատճառներով, ինչպէս՝ պարբերական քաղցի, ծնողների թափառելու, երեխանների մահուան, կանանց փախցնելու, պատերազմների, հիւանդութիւնների, անառակութեան, որդեսպանութեան և ալլն։ Եթէ որևէ պատճառով այս արգելքներից մինը, թէև նոյն իսկ ոչ բոլորովին, հեռացուում է, այն ժամանակ ալդ ժողովուրդն ոկսում է աճել և աճելով ու զօրեղանալով, նա պատերազմ է մղում հարեւան ժողովրդների հետ, ցըւում և մինչև անգամ ոչնչացնում է նրան։

Նատ տարօրինակ փաստ է, որ քաղաքակրթուած ագգելը կործանիչ ազգեցութիւն ունին վալրենի ժողովրդների վրայ. մինչև անգամ առած է դառած, թէ քաղաքակրթութեան շունչը թունալից է վալրենիների համար։ Այս երեսով շատ պարզ և հասարակ կերպով է բացատրուում. ուժեղները տեղից քշում են թուլերին—այս է ընութեան օրէնքը. ուստի ոչ ոք չպիտի կասկածի, որ քաղաքակրթուած ազգը, որ կարող է օգտուել իւր խելքից և իւր հանճարի արդիւնքներից, ուետք է գոլութեան կուում վալրենիներից շատ առաջ անցնի։ Այս գլխաւոր պատճառին միանում են և շատ ուրիշ երկրորդականներ։ Նախ վալրենի կանալք ալնքան պատղաբեր չեն, որքան քաղաքակրթուածները, որովհետեւ նրանք աւելի են կրում կեանքի ձախորդութիւնները, որովհետեւ նրանք աւելի ստրուկներ են քան թէ զօրեղ սեռի ընկերներ։ Սրան պիտի աւելացնել և այն, որ ժողովրդների միջև տեղի ունեցող լարատեւ պատերազմները, մարդակերութիւնը, մարդագոհութիւնը և որդեսպանութիւնը պակասեցնում են ազգութեան թիւը, իսկ վալրենու իրեն անձին տուած չնչին արժէքը, շատ անգամ դրգում է նրան ալնպիսի բանի հա-

մար զոհուելու, որոնք մեղ բոլորովին դատարկ են երևում։  
 Յետոյ պիտի ուշադրութեան առնել, որ քաղաքակրթուած  
 ազգերը տարածում են վալրենիների մէջ իրենց տարափոխիկ  
 հիւանդութիւնները, որոնք ալնքան աւելի անխնալ են ճա-  
 րակում մարդկանց կեանքը, որքան աւելի կեղտոտութիւն է  
 տիրում նրանց մէջ  
 և որքան քիչ ծանօթ  
 է նրանց առողջա-  
 պահութեան հիմնա-  
 կան սկզբունքները.  
 բացի դրանից, նը-  
 րանք տարածում են  
 նրանց միջև սպիր-  
 տալին խմիչքներ, ո-  
 րոնց վալրենին միշտ  
 անձնատուր է լինում  
 մի տեսակ անասնա-  
 կան ագահութեամբ։  
 Վերջապէս մի որոշ  
 ազգեցութիւն պիտի  
 վերագրել և՛ բարքե-  
 րի փոփոխութեան,  
 որ յառաջանում են  
 բարձր ցեղերի հետ  
 շփուելուց. դեռ չխօսենք աւերիչ պատերազմների մասին,  
 որ տեղի են ունեցել Վանդիմերի երկրում, Մեկսիկում, Բրա-  
 զիլիալում և Պերուում։



ԿՈՎԿԱՍԽԱՆ 8ԵՂ.—Ռուս.

**ԺԲ.****ԵՐԿՐԻ ՍԵՐԵ**

Յայտնի է, որ ամուսնութիւններն աւելի արական քան թէ իգական սեռի անհատներ են յառաջացնում, բայց և այնպէս, աշխարհումս կանալք աւելի շատ են քան թէ տղամարդիկ:

1865 մինչև 1883 թիւը, հետեւեալ երկրներում, 100 աղջկալ վրայ ծնուել են տղաներ.

Ուստական Լեհաստանում . . . . . 101

Անգլիայում և Խոլանգիայում . . . . . 104

Ֆրանսիայում, Շոտլանդիայում, Գերմանիա-  
յում, Վենգրիայում, Շվեյցարիայում, Բէլ-  
գիայում, Հոլլանդիայում, Նվեգիայում, Դա-  
նիայում և Եւրոպական Ուստաստանում . 105

Իտալիայում . . . . . 106

Սպանիայում . . . . . 107

Կոննեկտիկուտում . . . . . 110

Ռումինիայում . . . . . 111

Յունաստանում . . . . . 112

Եթէ ալժմ ուշադրութիւն դարձնենք ալդ 1865-ից մին-  
չև 1883 թուականներում պատահած ննջեցեալների վրայ,  
կը տեսնենք, որ հետեւեալ երկրներում 100 կնոջ վրալ մե-  
ռել են.

Շոտլանդիայում . . . . . 100 աղամարդ

Իրլանդիայում . . . . . 100 \*

Կոննեկտիկուտում . . . . . 102 \*

Նորվեգիայում . . . . . 103 \*

Դանիայում . . . . . 103 \*

Իրլանդիայում . . . . . 103 \*

Նվեգիայում . . . . . 104 \*

Հոլլանդիայում . . . . . 105 \*

Եւրոպական Ուստաստանում . . . . . 105 \*

|                         |     |         |
|-------------------------|-----|---------|
| Խտալիալում . . . . .    | 106 | տղամարդ |
| Փրանսիալում . . . . .   | 107 | "       |
| Անգլիալում . . . . .    | 107 | "       |
| Սպանիալում . . . . .    | 107 | "       |
| Բաւարիալում . . . . .   | 108 | "       |
| Աւստրիալում . . . . .   | 108 | "       |
| Վենգրիալում . . . . .   | 108 | "       |
| Շվեյցարիալում . . . . . | 108 | "       |
| Բէլգիալում . . . . .    | 108 | "       |
| Պրուսիալում . . . . .   | 109 | "       |
| Ցունաստանում . . . . .  | 111 | "       |
| Սերբիալում . . . . .    | 112 | "       |
| Ռումինիալում . . . . .  | 116 | "       |

Եւրոպայում տղամարդկանց թիւը յարաբերում է կանանց թուին, ինչպէս  $100 : 102,1$ . Մեծ Բրիտանիալում մինչև անգամ, ինչպէս  $100 : 106,2$ :

Եթէ տղամարդիկ աւելի են ծնւում քան թէ կանալք, բայց վերջիններս այնուամենալինիւ կենդանի մնացողների մէջ մեծամասնութիւն են կազմում, ալս բացատրւում է միայն այն փաստերով, որ մատաղ հասակում տղամարդիկ աւելի են մեռնում, քան թէ կանալք. ալս փաստը նկատում է և մի քանի ընտանի կենդանիների մէջ և սերտ կապուած է սեռի հետ:

### Ժ-Պ.

## ՍՊԱՆՉԱՑԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԺԱՌԱԳԱՐԱՐ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

Վերև մենք պատահարար լիշեցինք առանձնալատկութիւնների ժառանգաբար փոխանցման մասին, ալժմ մօտից ծանօթանանք նրան կառավարող օրէնքների հետ: Եթէ այս սկզբունքը միշտ չգործադրուէր, ալյն ժամանակ մարդկալին ցեղերը իբրև սիստեմատիքական խմբեր գոլութիւն չէին կարող ունենալ, և ոչ միայն մարդկալին սեռը, ալլև

ամբողջ կենդանական թագաւորութիւնը մի աներևակալելիքառ կը ներկալացնէր:

Ժառանգականութեան հիմնական օրէնքն այն է, որ բոլոր առանձնալատկութիւնները առանց բացառութեան կարող են ծնողներից որդիներին անցնել: Բայց ինչ վերաբերում է տեսակի կամ ցեղի առանձնալատկութիւնների երեւալուն, ոչ ոք սրա վրայ ուշ չի դարձնում. սա ինքն ըստ ինքեան հասկանալի, բոլորից նախատեսնուած բան է, ինչպէս արեւի ամենօրեալ ծագումը, և երբէք չէ պատահել, որ մարդը յառաջացնէր մի էակ, որ մարդ չլինէր: Մենք միայն գարմանում ենք, որ ժառանգութեամբ զուտ անհատական առանձնալատկութիւններ են անցնում, ինչպէս օրինակ, մի բնածին բիծ մարմնի մի որոշ մասում և կամ մի տարօրինակ սովորութիւն, թէև այդ շատ լաճախ էլ չի պատահում: Տիրապետող օրէնքն այն է, որ առանձնալատկութիւնն այնքան աւելի ճշտութեամբ է անցնում ժառանգներին, որքան աւելի հին է, կամ ուրիշ խօսքերով, տեսակի առանձնալատկութիւններն աւելի ճշտութեամբ են անցնում քան անհատինը, իսկ ցեղի առանձնալատկութիւնները էլ աւելի ճշտութեամբ քան տեսակինը և ալլն:

Անդամահատութիւնները, ընդհանրապէս, չեն անցնում: Եթէ մարդը պատահմամբ կորցնում է ձեռքը կամ ոտը, սաստիկ անհաւանական է, որ նրա որդիներն աշխարհ գալիս, իբրև ժառանգութիւն, ունենալին այդ պակասութիւններն: Բայց եթէ այս անդամահատութիւնը մի քանի սերնդի վրայ կրկնուէր, այն ժամանակ կարող էր ժառանգաբար անցնել: Այսպէս, օրինակ, պնդում են, թէ Գերմանիայում հրեաները երբեմն ալճախսի դրութեամբ են ծնւում, որ ալլև անհնարին է նրանց թլպատել, և այսպիսի անհատներին այնտեղ բնածին թլպատուածներ են կոչում: Ցիդջիացիները քնքոյշ ձեռքեր և փոքրիկ մատներ ունին, որովհետև նրանց մէջ սովորութիւն կալ ճկոլթ մատը զոհել տեղական աստըծուն առողջութիւն խնդրելիս:

Նատ անդամ էլ, ընդհակառակը, ժառանգութեամբ.

աննորմալ առանձնայատկութիւններ են անցնում, ինչպէս, օրինակ, աւելորդ մատներ, սպիտակամորթութիւն, որոնց մասին արգէն վերը լիշել ենք:

Երբեմն էլ ժառանգութեամբ անցնում են բոլորովին մանր և աննշան առանձնայատկութիւններ: Բժշկական գրականութեան մէջ լիշտում է մի գերգաստան, որի անդամներից մի քանիսը գլխաների վրայ իրենց մազերից տարբերող մի փնջիկ մազ ունէին: Մի սեւահեր իրանդացի՝ գլխի աջ կողմում մի փունջ սպիտակ մազ ունէր. նրա տատն էլ գըշի միւնոյն, իսկ մայրը հակառակ կողմում ունէին մի մի այդպիսի փունջ: Հարսընւրգեան թագաւորող տան մէջ ժառանգական էր ներքին կախ ընկած շրթունքը:

Գրութիւնը սաստիկ բարդ գործողութիւն է, բայց և այնպէս որդիների և հօր գրութեան մէջ ևս մեծ նմանութիւն է նկատուում, մինչև անգամ և այն ժամանակ, երբ վերջինս ինքը չէ սովորեցրել այն իւր որդիներին: Նոյնպէս լայտնի է, որ անգլիացիների որդիները, որ ֆրանսիուում են սովորում վալելչագրութիւն, մեծ հակումն են ցոյց տալիս անգլիական գրութեան ձեւը պահելու:

Կարելի է շատ օրինակներ բերել ապացուցանելու, որ քալուածքը, շարժմունքը, ձախը և իրեն պահելու ընդհանուր ձևերը նոյնպէս շատ անգամ ժառանգութեամբ անցնում են սերունդներին: Շատ անգամ կանալք ժառանգում են մալրերի, տղամարդիկ հալրերի ձևերը: Սակայն այս պէտք է մասամբ ընդօրինակութեան էլ վերագրել և բաւական գժուար է ասել, թէ ինչ լառաջացել է ընդօրինակութիւնից:

Լինում են և ժառանգական հիւանդութիւններ: Հասրակութեան մէջ գլխաւորապէս շնչառութեան գործարանին (օր. թոքախտ) և նեարգալին սիստեմին (խելագարութիւն, վերնոտութիւն) վերաբերեալ հիւանդութիւնների ժառանգութեան մասին է տեղեկութիւններ տարածուած: Հիւանդի անկողնի մօտ կանգնած բժիշկը երբէք չի մոռանալ

տեղեկանալու, թէ հիւանդի նախնիները ինչ հիւանդութիւնների են ենթարկուել:

Յայտնի է, որ աչքի հիւանդութիւնները և մինչև անգամ աննշան պակասութիւններ և առանձնալատկութիւններ կարող են անցնել ժառանգաբար սերունդներին: Այսպէս են, օրինակ, աչքերին սև ջուր իջնելն ու կարճատեսութեան տրամադրութիւնը. եթէ հալրն էլ մալրն էլ կարճատես են, ժառանգներն աւելի են տրամադիր լինում կարճատեսութեան և ծնողներից աւելի վազ և աւելի սաստիկ են կարճատես գառնում: Ժառանգական է լինում և՛ շրութիւնը. այսպէս Մոնմորանսիի գերդաստանի մէջ մի քանի սերունդ շիլ էին: Մօտերքս նկատել են, որ դալտոնիզմ, կամ անգունատեսութիւնը, ալսինքն մի քանի որոշ գոյներ չկարողանալ որոշելը, աւելի տարածուած է քան որ կարծում էին և որ սա ևս ժառանգական է: Այսպէս անուանուած հաւկուրը, կամ առանց պալծառ լուսի չկարողանալ տեսնելը, նոյնպէս անցնում է ժառանգաբար. այսպէս՝ վեց սերնդի ընթացքում մի գերդաստանի քսան և հինգ անգամը ենթարկուել են այս ցաւին: Մի քանի անհատների ունքերի մէջ մի քանի մազ միւսներից աւելի երկար են լինում, և մի այսպիսի այդքան աննշան առանձնալատկութիւն կարող է պահուել մի քանի սերնդների մէջ: Մի քանի ծնողների և որդիների ունքերն այնքան կախ ընկած են եղել, որ տեսնելու համար սահպուած են եղել գլուխը թեքելու:

Մի քանի գերդաստանների մէջ ճաղատութիւնն և մինչև անգամ առամների փշացումն անցնում է ժառանգաբար. եթէ երկու ծնողներն էլ փշացած առամներ ունին, որդիները շատ հաւանականօրէն պիտի տանջուին նոյն պակասութիւնից և շատ անգամ աւելի սաստիկ կերպով. եթէ միայն հալրը վատ առամներ ունի, այն ժամանակ որդիները կարող են փոքր ի շատէ բաւականացուցիչ առամներ ունենալ: Հասակի ժառանգաբար անցումը ապացուցուած է հետեւալ փաստով: Պրուսիայում Թրիգրեկոս Վիլհէլմ և Վիլհէլմ II աշխատում էին իրենց երկրի ամենաբարձր մարդկանց ա-

մուսնացնել ամենաբարձր կանանց հետ և ալսպիտով կազմեցին իրենց անձնապահ գունդը սաստիկ բարձրահասակ մարդկանցից:

Նատերը ժառանգական են համարում և մտաւոր ու բարոյական առանձնալատկութիւնները. բայց ալստեղ բաւական մեծ ազգեցութիւն է ունենում և գաստիարակութիւնը:

Առանձնայատկութիւնների ժառանգութեան օրէնքները.—Ժառանգութեան օրէնքները մեծ մասամբ մեզ անլայտ են, այնուամենալին նորագոյն հետազոտութիւնները մեզ ծանօթացը ել են այս օրէնքներից մի քանիսը, որ ամփոփ կերպով կը լիշենք: 1) Առանձնալատկութիւնները երեւում են որդիների մարմնի այն միւնոյն, ներքին և արտաքին տեղում, որտեղ նրանք երևացել են նախնիների վրայ: Սա մասնաւոնդհանուր օրէնքներից մինն է և իւր բոլոր պարզութեամբ, շատ նշանաւոր է: Բայց մենք նկատում ենք ալդ ոչ թէ տեսակի կամ ցեղի, այլ անհատական առանձնալատկութիւնների ժամանակ, ալսպէս, օրինակ, այն դէպքերում, երբ հալլը ու որդին մի բիծ կամ մի նշան ունին մարմնի միւնոյն տեղում կամ սպիտակ մազերի մի փունջ գլխի միւնոյն մասում:

2) Ընդհանրապէս առանձնալատկութիւնները երեւում են այն հասակում, ինչ հասակում որ երևացել են նախնիների վրայ: Ժառանգութիւնները տալիս են մեզ այս մասին բազմաթիւ օրինակներ:

3) Առանձնալատկութիւններն որդիների վրայ երեւում են այնքան աւելի ճշտութեամբ, որքան աւելի հին են: Անդամահատութիւնները, ինչպէս ասացինք, ժառանգութեամբ չեն անցնում: Ժառանգական անհատական առանձնալատկութիւնները պակաս ճիշտ են քան թէ տեսակինը, իսկ վերջինս աւելի պակաս ճիշտ քան ցեղականը և այլն: Ուրիշ խօսքերով՝ առանձնալատկութիւններն որքան հին լինին, այնքան աւելի ժամանակ կունենան խոր արմատներ ձգելու օրդանիքմի մէջ: Ալստեղ էլ հիւանդութիւնները տալիս են ամենափալուն օրինակներ (թոքախտ, խելագարութիւն):

4) Մի քանի (սեռական) առանձնալատկութիւններ միայն մի սերունդ են անցնում:

5) Միատեսակ կենդանիների միախտուման ժամանակ երկու սեռի առանձնալատկութիւններն ընդհանրապէս գումարում են և կամ մի սեռի առանձնալատկութիւնները գերազանց միւս սեռի առանձնալատկութիւններից: Եթէ դըրանք միատեսակ են՝ միախտունում և գումարում են: Սա է այն գլխաւոր պատճառներից մինը, որ ազգակիցների միջև կատարուած ամուսնութիւնը շատ անգամ տիրուր հետեանքներ է ունենում: Եթէ երկու ծնողներն արեան կապով կապուած են միմեանց հետ, և ալսպիսով ենթակալ են միւնոյն հիւանդութիւններին, այն ժամանակ որդիները կըկին անգամ աւելի տրամադրիր են լինում միւնոյն հիւանդութիւններին: Եթէ երկու ծնողների առանձնալատկութիւնները միատեսակ չեն, նրանք երբեմն միմեանց ոչնչացնելու ազգեցութիւն են ունենում, այնպէս որ միջին հետեանքն է ստացում. ուրիշ դէպքերում ժառանգների մէջ երեսում են միայն մի ծնողի առանձնալատկութիւնները:

6) Մի քանի առանձնալատկութիւններ թաքնուած գրութեամբ են աւանդուում, այնպէս որ մի կամ մի քանի սերունդների վրայ չեն երևում և միայն միւս սերունդների վրայ են երևան գտվու: Այս տեսակ երևոյթները կազմում են ատակզմ կամ նախնանմանութիւնը: Նատ անգամ մարդու վրայ ոչ թէ հօր կամ մօր առանձնալատկութիւններն են նկատում, այլ պապի կամ տատի:

### ԺաՌ.

#### ՄԱՐԴՈՒ ՖԻԶԻՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Սաղմնալին մարդու զարգացման ուսումնասիրութիւնը մարդտբանութեան համար ահազին նշանակութիւն ունի, որովհետեւ նպաստում է իննդրի սղարզուելուն: Սաղմնաբանութիւնը (Յմբրիօլոգիա) ծառայում է մարդկալին սեռը սիստեմատիքական դրութեան վերածելու, մօտեցնելով նրան

ալն կաթնասուններին, որոնք նրա հետ մեծ նմանութիւն ունին։ Բացի դրանից անհատի զարգացումը տեսակի զարգացման կարճ կրկնութիւն է։ Հետեւապէս և անհատի զարգացման տեսութիւնը կը տալ մեզ մարդու ծագման մասին ցուցումներ։

Վերջին ժամանակներիս սաղմնաբանական հետազօտութիւնները շատ մեծ հետեւանքներ ունեցան, ցոյց տալով՝ մի քանի օրդանների նշանակութիւնը, որոնց ծագումը մինչև այդ ժամանակ յայտնի չէր, և որոնք աւելի ևս ամրապնդեցին ալն ազգակցութիւնը, որ կապում է միմեանց հետ կենդանական թագաւորութեան բալոր անդամները։ Ապացուցի համար բերենք հետեւալ օրինակը։ Մարդու ուղեղալին գեղձը (*glandula pinealis*) յայտնի է երկար ժամանակից ի վեր և մինչև անդամ հօգու կալեանն էր համարում, բայց ստորին կենդանիների վրայ կատարուած հետազօտութիւնները ցոյց տուին, որ նա ոչ այլ ինչ է, բայց եթէ երկու աչքի մնացորդ, որ մի քանի ստորին կակլամորթների վրայ գեռ ևս կալ։

Սիւ բոլոր կաթնասունների նման, մարդն էլ ձուից է յառաջանում, որ բաղկացած է սննդատու, գեղնուց ներփակող մի քնքոյշ պարկիկից։ Ձուի մէջ սաղմը սկսում է կազմակերպուել բաժանումն կոչուող երեսոյթի ժամանակ. գեղնուցն սկզբում բաժանում է երկու կիսագնդի, որոնցից իւրաքանչիւրը ուրիշ երկուակ, վերջիններս դարձեալ ուրիշ երկուսի և ալսպէս շարունակ, մինչև որ գեղնուցը դառնում է բազմաթիւ փոքրիկ կիսագնդեր, որոնցից իւրաքանչիւրը յետոյ ստանում է իւր թաղանթը։ Շուտով սրան միանում է մի ուրիշ երեսոյթ։ Այս վանդակիկները՝ տեղաւորուում են ձուի թաղանթի մէջ, կիսուում են մինը միւսի վրայ, ճնշումից բազմակողմանի դառնում և կազմում ձուի երկորդ ծածկոցը, որ կոչում է ծին (blaztème, բլաստում)։ Շուտով այս ծնի մի մասը վանդակների մեծ մասի այստեղ հաւաքուելու պատճառով մթնում է և յետոյ ձուաձեւ ու միջին գծի երկարութեամբ սպիտակափառ դառնում։ Այս գծի եր-

կարութեամբ երևում է մի փոսիկ, որ կոչւում է սկզբնական փոսիկ և որ ներկայացնում է գլխա-ողնտաշարային ուղեղի նախագիծը։ Այս առանձնալատկութեամբ մարդկարային սաղմը տարբերում է շատ կենդանիներից և մինչդեռ առաջ ոչ ոք չէր կարող նախապէս ասել, թէ ինչ դասակարգի է պատկանում սկսուած էակը, ալժմ կարելի է պընդել, որ ողնաշարաւոր է լինելու։ Աւելի ուշ ծինսից սկիզբն են առնում ուրիշ երկու սաղմնալին լորինուածներ, որոնցից մինը կազմում է սաղմնաբոյն մզանը (amnios), որի հեղանիթի մէջ լողում է սաղմը, իսկ միւսը, ալանտոիսը, որ մեծ նշանակութիւն ունի սաղմի կեանքի վերաբերութեամբ, որովհետեւ նրա անօթները տանում է ձուի մակերեւոյթը և ալպիսով կազմում այն օրգանը, որ կոչւում է փառ (placenta) և որի շնորհիւ սաղմը կարողանում է մօրից ստանալ անհրաժեշտ կերակուրը և ազատուիլ անպէտք նիւթերից։ Ալժմ սաղմն արդէն չի պատկանում սոսկ ողնաշարաւորներին, ալլ բարձր ողնաշարաւոր կենդանիներին, ալօնքն սողուններին, թռչուններին, կամ կաթնասուններին, որովհետեւ միայն այս ողնաշարաւորների մօտ է զարգանում վերոլիշեալ մասերը։

Եւ ալսպէս՝ սաղմը միանգամից և իւր բոլոր օրգանական մասերով չի կազմակերպւում, ալլ սկզբում, երբ միայն ձու է կազմում, նմանում է ստորին միավանդակիկ էակներին, և միայն յետով, հետզհետէ զարգանալով, աստիճանաբար ստանում է բարձր կանգնած կենդանիների առանձնալատկութիւնները, մինչեւ որ վերջապէս, ստանում է բացառապէս իրեն յատուկ առանձնալատկութիւնները։ Մարդու ծագման խնդրի մէջ այս փաստը սաստիկ մեծ նշանակութիւն ունի։

Սաղմնաբանութիւնն երևան է հանել մի քանի փաստեր, որոնք մարդուն մօտեցնում են կենդանիներին, Ցոյց տանք նրանցից մի քանիսը։

1) Երկու ծակատի ոսկը.—Մարդը սովորաբար երկու ծակատի ոսկը ունի. և միայն մի քանի աննորմալ գէպքե-

բում լինում են երկու համաշտի ոսկը, միմեանցից ճակատի կարով բաժանուած։ Կաթնասուն կենդանիներն ընդհանրապէս ճակատի երկու ոսկը ունին Միեւնոյնը նկատում ենք մարդկալին սաղմի վրայ. նա երկու ոսկը ունի, որ յետու միանալով կազմում են ճակատի մի ոսկը։

2) Միջածնօտային ոսկը. — Կաթնասունների միջածնօտալին ոսկըները ընդհանրապէս լաւ զարգացած են և որոշապէս բաժանուած են միմեանցից. Երկար ժամանակ կարծում էին, թէ մարդը չունի ալդ ոսկը և մինչև անգամ մի անդամազննին կարծիք էր լալտնել, թէ նրանք ոչնչացել են մարդու քնքշացած և փոխուած կեանքի պատճառով։ Սակայն այս ոսկըները գանուեցան մարդու վրայ, միայն նրա սաղմալին կեանքի ժամանակ, մինչև նրա աշխարհ գալը։ Նրանք շուտով ձուլուամ են վերին ծնութիւնով սաղմն աւելի միւս կաթնասուններին է մօտենուամ քան թէ չափահաս մարդուն։

Միջածնօտալին ոսկը հետքերը հասակաւորների մէջ աւելի շատ են պատահում քան որ ընդհանրապէս կարծում են։ Այսպէս՝ գոկտոր Մոշէնն ու ես մեր հետազօտած գանգերի մէջ  $60\%$  միջածնօտալին կարեր նկատեցինք։

3) Մազեր. — Կաթնասունների մեծ մասը ծածկուած է երկար մազերով, որ տարածւում են ամբողջ մարմնի վրայ, բացի ոտների ներքին մասից։ Հասակաւոր մարդկանց մազերը կարճ և քիչ են, բացի մարմնի մի քանի որոշ, սահմանափակուած մասերից։ Մարդկալին սաղմը մօտենուամ է կաթնասունին, որովհետև նա վեցերորդ ամսին ամբողջովին, նոյն իսկ ճակատն ու ականջները, խիտ կերպով ծածկուած է սաստիկ բարակ մազերով (languido)։ Շատ նշանաւոր է, որ այս գրաւթեան մէջ ձեռի ափն ու ներբանը բոլորովին ազատ են մնում մազից։

Այս բոլորը փաստեր են, որ միւսներից աւելի աչքի են ընկնում, սակայն որանք եղական չեն։ Կարելի է պնդել, որ մարդկալին ամէն մի օրդան, իւր զարգացման ընթացքում անցնում է այն ստադիոններից, որոնք ներկալացնում

